



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱԶԳԵՆ Ա. ԵՒ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ / ՍԳՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ, ՀՅԴ ԲԻՒՐՕ, ՌԱԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ / Հ.Յ.Դ. ԲԻՒՐՕ:

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ՝

Վահագն Դաւթեան / Սերօ Խանգաղեան / Փազ Յակոբեան / Հրաչեայ Յովհաննիսեան / Մկրտիչ Սարգրսեան / Պերն Զէյբու Նցեան / Յովհաննէս Ղուկասեան / Մետաքսէ / Հրանտ Թամրազեան / Գէորգ Էմին / Կարպիս Սուրէնեան / Լուդվիգ Դուրեան / Սօս Սարգրսեան / Գառնիկ Անանեան / Սասուն Գրիգորեան / Գէորգ Արշակեան / Յակոբ Մանուկեան / Կարէն Սիմոնեան / Ալվարո Պետրոսեան / Հեղինէ Մուրադեան / Վազգէն Ա. Կաթողիկոս / Գարեգին Բ. Կաթողիկոս / Գրիգոր Խանջեան / Դաւիթ Յովհաննէս / Միրոն Նետերչուկ / Վանիկ Սանթրեան / Մարգօ Ղուկասեան / Անահիտ Պարսամեան / Հայկ Տէր Խաչատրեան / Նազ Տէր Սարգիսեան / Արամայիս Սահակեան / Իզնատ Մամեան / Յովհաննէս Զեֆիջեան / Գոհար Գասպարեան / Ազատ Եղիազարեան / Ռիտա Շառոյեան / Զօրի Բալայեան / Համօ Սահեան:

ԱՅԼ ՆԻՒԹԵՐ՝

Խմբագրական / Յունուար 15ին՝ Ստեփանուսնում / Քեզի Խամար. Հայաստան / Շարլ Ազնաւուրի Ռախաճեանութիւնը՝ «Քեզի Համար, Հայաստան» / Ռոսթրոփովիչ՝ Ի Նպաստ Հայաստանի / Այլ յուրեր:

••

Մեր այս բազառիկին մէջ տեղ պիտի գտնէին ման երկրաշարժի գոն գրողներէն շարք մը գրութիւններ. գորս աւելի անձկութեան պատճառով յետաձգեցինք յաջորդ Խամային:

Նոյն պատճառով, մեր յաջորդ թիւին վերապահեցինք ներկայ Խամարիլ Խամար Ռախաճեանում Ա. Սահակեանի, Ե. Տէրչեանի, Ս. Կիրակոսեանի, Ե. Պ. Սնապեանի գրութիւնները, ինչպէս նաեւ՝ տարբեր հեղինակներէ արտագրուած անվերբէն ու հայերէն յափառու էջերէն ապրիլի 1997 թ. 15ին:

digitised by A.R.A.R.®

խմբում գրութիւնները, որոնք տարերային աղետին առիթով կատարւած դրսեւորումներուն ամբողջութիւնը չէին կրնար ըլլալ ու չեն, սակայն, ի՛նչ խօսք, տառապանքը յազթահարելու իրենց ոգիով կր հանդիսանան ամբողջին հասարակ յայտարարք:

Անշուշտ, ակնբարբի մը մէջ գաւակ, քոյր, եղբայր, մայր կամ հայր կորսնցուցած ու աւարիներու վրայ երկարաձգուած անձկայի սպասումներով, կարօտով ու խանդակաթ գորովով մը կառուցուած օճախին կործանման ականատես մարդոց կուրծքին տակ սրտի տեղ քար չէ դրուած ու քար չէ դրուած անոնց հետու ու մօտ արեւակիցներուն կուրծքին տակ, ցաւը համընդհանուր է, բայց կայ ցաւէն վեր կանգնելու տղամարդկային արժանիք մը, նախախնամութեան կողմէ մեր ժողովուրդին շոյշուած բացառիկ շնորհներէն մէկը, որուն մէկ նոր ու հզօր արտայայտութեան ականջալուր եզամբ ու ականատես՝ ազէտին վազորդային, մա՛նաւանդ՝ վերապրածներուն շրթներէն ու կեցուածքներուն մէջ: Գծբախտութիւնները յազթահարող անանդութիւններու տէր ժողովուրդն է նորէն, իր պարզ մարդերով թէ մտածող տարրերով, որոնց կոտորակացող ցաւին հետ կամ մը կ'աշտարակուի, հոսող արցունքին հետ լոյս մը կը բողբոջի, աներներէն առաջացած ափսոսանքին հետ կառուցման տենդ մը կ'ենեւեփի:

Աւելորդ է այս առիթով խօսիլ հոն թէ հոս, ճեկավար թէ ժողովրդական մակարդակի վրայ յայտնաբերուած ներքին միութեան մասին: Միասնութիւնը կար, ու անսուտեր էր անիկա, կուռ, բայց շաղախը երկրաշարժային հոգեցունց իրականութիւնը չէր, շաղախը միւս վերքն էր, արցախիտանը, աւելի շուտ՝ արցախիտանին դարմանումը պահանջող միլիոններու առողջարար պոռթկումը:

Աւելի նշանակալիցը աշխարհի վերաբերումն էր այս անգամ, մօտ ու հեռու՝ ժողովուրդներուն ցուցաբերած փառապաշտութիւնը՝ փրկարար ջոկատներու փութկոտութենէն մինչեւ պետական օժանդակութիւնները ու բարեսիրական հաստատութիւններու առատաձեռնութիւններէն մինչեւ մեծաեռչակ արուեստագէտներու գոհաբերական մասնակցութիւնները:

Պատկերը երախտագիտութեամբ կը լեցնէ ամէն հայու սիրտ, բայց նոյն ատեն ոչ ոքի ուշագրաւութենէն կը վրիպի հակադրութիւնը, որ շօշափելի դարձաւ դեռ քիչ մը առաջ պատահած սուսմայիթեան սպանդին հանդէպ անոնց որդեգրած ձեռնպահութեամբ: Կը պարզուի ուրեմն, որ մարդոց սարքած աղետին դիմաց կուզուէ մարդկութեան սիրտը, ու բուխ է՝ տարբերքի հարուածներուն առիթով: Տարին չբոլորած մեր մորթին վրայ գգացիմք մէկուն պաղը ու միւսին տաքը: Առեղծուածային՝ աշխարհ: Գոցենք փակագիծը: Ու դառնանք մեր իրականութեան, ուր՝

Յաւը մերն է, ու ցաւէն վեր՝ մենք ենք դարձեալ, տոստոնսկիական առումով մենք մը, դժբախտութեան մէջ մարդ մնալու շնորհով օժտեալ հաւաքականութիւն, ազնուասիրտ ու անկոր:

Գրականութեան ծառայելէ աւելի՝ «խոսքի» ի ներկայ համարը կազմուած է անգամ մը եւս հազորդուելու հաւաքական կեցուածքի մը դրոշմը կրող այդ ոգոգուն ոգիին, — արարչական պատեհար բոլոր մեծագործութիւններուն ու բոլոր գեղեցկութիւններուն:



ԿՈԶ

ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Մեր հայրենի աշխարհի հիւսիս-արեւմտեան շրջանի ամսոյս 7ին պատահած ահաւոր երկրաշարժի պատճառած ազէտին առիթով, մենք՝ վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, 14 Դեկտեմբերէն 20 Դեկտեմբեր եղանք ի Ս. Էջմիածին, միատեղ ազօթեցինք երկրաշարժին գոհուած տասնեակ հազարներով մեր ժողովուրդի գաւակներուն եոզիներու խաղաղութեան համար, այցելեցինք երկրաշարժէն զարնուած շրջանները, սգացինք կորուստը մահացեալներուն, բաժնեցինք ցաւն ու վիշտը վերապրողներուն եւ ունեցանք յայն խորհրդակցութիւններ ազէտի դարմանումին եւ մեր ժողովուրդի վերականգնումին, քանզու շրջաններու վերաշինութեան եւ առհասարակ այս ազէտը յազօթեալներու մեր պարտաւորութեանց այլազան երեսներուն եւ ընելիքներուն մասին:

Առաջին հերթին, սրտի պարտք համարեցինք հայրական մեր խօսքը սոյն կոչով միասնաբար ուզելու մեր ժողովուրդի գաւակներուն ի Մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

ա. Այս ահաւոր ազէտին դիմաց, մեր ցաւը մեզմացած կը զգանք ի տես այն միահամուռ ու անվերապահ սիրոյն եւ միասնութեան ոգիին, զոր համայն մեր ժողովուրդը Հայաստանի թէ Սփիւռքի մէջ՝ մէկ սիրտ, մէկ հոգի, անմիջապէս լծուեցան դարմանումի եւ օժանդակութեան գործնական աշխատանքի: Հայրական անհուն սիրով կ'ոգջունենք այս հրաշալի եւ գովելի կեցուածքը եւ կ'ազօթենք ու կը յորդորենք, որ նոյն ուղիով եւ նոյն յարանուն ընթացքով շարունակէ ան իր բարիքը բերել մեր ժողովուրդի վերականգնումի նուիրական առաքելութեան:

բ. Գնահատանքի եւ շնորհակալութեան բարձր աստի-

ճանով կ'ազդուենք խորհրդային կեդրոնական իշխանութեան վերին մարմիններուն, բոլոր եզրայրական ազգութիւններուն, խորհրդային Միութեան բանակին եւ բարեսիրական կազմակերպութեանց եւ ամբողջ ժողովուրդին յայտնաբերած զօրակցութեան եւ հոգածութեան սեփական ոգին, որով հայ ժողովուրդին կրած ցար ընդունեցին սրտի իրենց սեփական ցար եւ ըրին ու կը շարունակեն ընել իրենց գերագոյն կարելի ազէտը դարձանելու եւ մեր ժողովուրդին կեանքը վերստին իր ստեղծագործական շինարար հունին մէջ դնելու համար:

գ. Գնահատամքի եւ շնորհակալութեան մեր խօսքը կ'ուղղենք յատկապէս խորհրդային Հայաստանի պետական իշխանութեան, որ իր բոլոր միջոցներով եւ համայն ժողովուրդով, ոգի ի բռին լծուեցաւ փրկութեան գործին, իր բոլոր ուժերը սեւեռած քլլալով հիմնական ու կենսական գործին:

դ. Մեզի եւ ամբողջ հայ ժողովուրդին համար մխիթարութիւն եւ հոգեկան զօրացումի ազգիւր մը եղաւ, համաշխարհային չափանիշով այնքան մեծ թիւով ազգերու, պետութիւններու, եկեղեցիներու, բարեսիրական հաստատութիւններու եւ մարդասիրական կազմակերպութիւններու արտայայտած անմախք քննադատական լայնածիր, բարերար աջակցութիւնը, որ այնքան լայն արձագանգ գտաւ ողջ աշխարհի մամուլին մէջ:

ե. Այս տխուր բայց վեճական պահուն, բեկեայ սրտով մեր հայրական խօսքը կը բերենք սգաւոր համայն հայ ժողովուրդին, յայտնելու համար մեր խոր վիշտը եւ հոգեկան տառապանքը իբրեւ հետեւանք 7 'Կեկտեմբերի ահաւոր երկրաշարժին: Գրեթէ ամբողջապէս քանդուած են Լեւոնական, Սպիտակ, Կիրովական եւ Ստեփանաւան քաղաքները եւ բազմաթիւ գիւղեր ու աւաններ: Կան տասնեակ հազարաւոր մեռելներ, հազարաւոր վիրաւորներ ու անօրեւան մնացած հարիւր հազարաւոր բնակիչներ:

Մեր մեծ վշտի այս ժամուն մենք կ'ազօթենք զոհեալներու հոգիներու խաղաղութեան եւ Սուրբ Հոգւոյ մխիթարութիւնը կը հայցենք բոլոր սգակիր բնտանիքներուն:

Կոչ կ'ուղղենք մեր հարազատ ժողովուրդի զաւակներուն՝



1. Հոգեւոր արիութեամբ ու ազգային համախմբութեամբ՝ մէկ սիրտ, մէկ կամք դարձած, կազմակերպուած ու ծրագրուած ձեւով իրենց աշխատանքի եւ գոհողութեան բաժինը շարունակեն բերել, ամռհելու տառապանքը իրենց ազէտեայ ազգակիցներուն, մխիթարելու զանոնք հոգատար վերաբերումով եւ ապա մպաստելու առատաբաշխ ձեռքերով,

կործանած ֆազաֆներու եւ շէններու վերակառուցման գործին:

2. Մենք այս նպատակաւ անհրաժեշտ գործնական առաջադրանքները եւ յորդորները պիտի ուղղենք մեր եկեղեցական կեդրոններուն եւ համայնքներուն:

3. Կարելի էր նկատենք, որ համագգային հանգանակութեան գործը կատարուի լիակատար միասնութեամբ. եւ հանգանակուած գումարները տրամադրուին նախօրօք ճշդրւած ու ծրագրուած նպատակներու, որպէսզի լուսագոյնս ծառայեն բուն կարիքներուն, եամախորհուրդ հայրենի իշխանութեանց հետ:

4. Կոչ կ'ուղղենք մեր հարազատ ժողովուրդին, որ ի Հայաստան եւ որ ի սփիւռս աշխարհի, որ բոլորը անխտիր, ազէտեալներուն օգնելու եւ ֆանդուած ֆազաֆներն ու գիւղերը վերակառուցելու սրբազան գործը նկատեն ամէն բանէ վեր պարտականութիւն, եւ աշխատանքի լծուին բարձր գիտակցութեամբ, նպատակասլացութեամբ ու կարգապահութեամբ:

19 Դեկտեմբեր 1988 թ.
Ս. Էջմիածին

ԿՈՉ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Հայ ժողովուրդը խոր սուգի մատնող 7 Դեկտեմբերին Հայաստանի մէջ պատահած երկրաշարժի ազէտը, իր սահմընկեցուցիչ տարողութեամբ, ծանրակշիռ հետեւանք ունեցաւ հայրենարնակ հայութեան կեանքին համար: Կործանած քաղաքներու եւ գիւղերու պարզած ողբերգական պատկերը թէրազմահագար մեռեալներու, անպատսպար ազէտեալներու իրավիճակը խոր վիշտով վրդովեցուցին հայութիւնը Մայր Հայրենիքէն միմչեւ Հայ Սփիւռքի տարածքին ապրող աստանդական մեր ժողովուրդի զաւակները:

Սփիւռքահայութիւնը՝ ազգային-քաղաքական իր երեք կուսակցութիւններուն միջոցաւ յայտնելով իր խորունկ վշտակցութիւնները հայրենի իշխանութիւններուն եւ ժողովուրդին՝ արդէն իւրաքանչիւր հայկական գաղութէ ներս ձեռնարկած է նիւթական շօշափելի եւ համազգային օժանդակութիւններու ապահովման: Օժանդակութիւններ , որոնք անմիջապէս պիտի փոխանցուին Սփիւռքէն Հայրենիք՝ երկրաշարժի ազէտեալներու թէ քաղաքական պատնառներով աղբբջանական շրջաններէն Հայաստան ապաստանած հալածեալ գաղթականներուն՝ իբր ամբողջական սրտակցութիւն եւ զօրակցութիւն: Հայութեան՝ Արցախեան պահանջատիրական պայքարի ընթացքին տուած զոհերուն եկան միանալու երկրաշարժի ազէտեալներն ու զոհերը, հայութիւնը դնելով կրկնակի տագնապներու դիմագրաւման վնասկանութեան առջեւ:

Սփոփիչ երեսոյթ է անշուշտ Հայաստանի օգնութեան փութալու միջազգային պատրաստակամութիւնը:

Մէկ եւ ամբողջական հայութիւնը իր ազգային ազէտը անգամ մը եւս պիտի դիմագրաւէ միասնութեան եւ համագործակցութեան ազգային բարձր գիտակցութեամբ:

Սփիւռֆի հնարաւոր բոլոր միջոցները.— մարդկային, նիւթական, բարեսիրական, առողջապահական, ընկերային,— հարկ է գործի մղել՝ օգտագործելով եւ շարժման մէջ դնելով կազմակերպական կառոյցները՝ երկրաշարժին պատճառած ահաւոր վնասները դարմանելու, քանդուածը վերաշինելու, աղէտեալներուն մարդասիրական ամէն կարգի օգնութիւն փութացնելու համար:

Հայրենիքի թէ Սփիւռֆի մէջ հայութեան շինարար կամ-բը, վերակառուցման բուն թափով պիտի տայ ապացոյցը մարդկային եւ նիւթական վնասներ պատճառած իր պատմութեան նորագոյն աղէտը համազգային ճիգով ու նախաձեռնութեամբ դիմագրաւելու:

Առ այդ՝ կոչ կ'ընենք Սփիւռֆի չորս ծագերուն սփռուած հայութեան բոլոր գաւակներուն, բարեսիրական կազմակերպութիւններուն, համայնֆային թէ եկեղեցական կառոյցներուն, որ համազգային մեր մեծ սուգին խոր անդրադարձումով եւ հայրենաբնակ մեր ժողովուրդին ապրած ծանր ողբերգութեան հազորակից սրտակցութեամբ մասնակցին փրկարար այն ճիգերուն, որոնք ի գործ կը դրուին հայրենիքի մէջ՝ վնասները դարմանելու ուղղութեամբ: Իւրաքանչիւր հայ գաղութէ մերս հանգամակիչ մարմիններու սատարելիք ազգային գերագոյն պարտականութիւն է այս օրերուն:

Ամբողջական հայութիւնը կանգնած է հայրենակերտումի նոր հրամայականին առջեւ, որ իւրաքանչիւր հայէ եւ ազգային կառոյցէ կը պահանջէ զոհաբերութեան նոր ոգի եւ ամբողջական նուիրում:

ՍԴՀԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ
 ՀՅԴ ԲԻԻՐՕ
 ՌԱԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԿՈԶ ՍՓԻՒՌՔԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

*«Հայի համար վաղուց է Նոր Տարի չկայ. թուս-
կանները իբր յաջորդելով՝ վաղուց է, որ նրա հա-
մար բերում են միայն Հայածանք, կոտորած,
արիւն-արտասուք...»:*

ՔՐԻՍՏԱՓՈՐ

Հայաստանի երեք քաղաքները կործանող երկրաշարժի
անհուոր ազդուր եկաւ հանրային կարծիքի ուշադրութիւնը
փաստօրէն հեռացնելու հայութիւնը իր հողերէն տեղահան
դարձնելու ազերիներու ոնիրին վրայէն:

Եւ մինչ աշխարհ կը պատրաստուի տօնելու Նոր Տարին,
հայրենի հայութեան միայն արիւն-արտասուք կը սպաստ-
բարբարոս դրացիներու հողը ծաղկեցնող հայ հոծ փոքրա-
մասնութեան հալածանք ու կոտորած կը սպառնայ: Ու հայ-
րենի հայութիւնը ամբողջական գորաշարժի մէջ է՝ կուրծք
ցցելու համար միաժամանակ թէ՛ բնութեան տուած հարուա-
ծին եւ թէ ազերիներու պատճառած գաղթականական տագ-
նապիւն:

Աւանդական ցնծութեամբ յատկանշուող Նոր Տարի
չունի եւ չի կրնար ունենայ նաեւ Սփիւռքի հայութիւնը, որուն
յոյսով եւ հաւատով կը մայի հայրենաբնակ ողջ հայութիւնը՝
իբրեւ բարոյական եւ նիւթական օժանդակութեան սեփական
ազրիւր եւ հարազատ ապաւէն:

Առ այդ՝ կոչ կ'ուզենք Սփիւռքի ամբողջ հայութեան,
որ առանց դաւանանքի եւ գաղափարի խտրութեան առկախէ
Նոր Տարի տօնելու աւանդական բոլոր մախածոնութիւն-
ները, նիւթական լայնագոյն եւ աննախընթաց օժանդակու-
թեամբ մը ամոքելու համար հայրենի մեր ազէտահար ժողո-
վուրդին ցար: Յզնութեան եւ գորակցութեան այդ ճամբով է
միայն, որ կարելի է հայօրէ՛ն դիմաւորել Նոր Տարին:

Ամէն ժամանակէ աւելի այսօր հայրենի ազէտահար
բազմութիւնները պէտք ունին Սփիւռքի հայութեան բոլորա-
նուէր սրտակցութեան, որպէսզի օժտուին գօտեպնդող այն
ինքնավստահութեամբ, որ հայութիւնը իբրեւ մէկ ու անբա-
ժանելի ամբողջութիւն կը դիմագրաւէ իրեն բաժին հանուած
հարուածները — քաղաքական ճիւղներ ըլլան անոնք թէ բնա-
կան ազէտներ —:

Հայ ժողովուրդի մեծ ցաւին Նոր Տարուան լաւագոյն
դարմանը պիտի հանդիսանայ Սփիւռքի հայութեան երկարած
հարազատի ձեռքը:

Հ.Յ.Դ. ԲԻԻՐՈ

Վ. ԴԱԻԹԵԱՆ

ՃԱԿԱՏԱԳԻՐ

Մա՛յր Հայաստան,
 Ահա նորից վարսերիդ սեւ սուզը ֆանգելի,
 Նստելի ես դու աւեր քո տան խոյակներին ու որմերին,
 Ճակատագիրն այս ի՞նչ անխիղճ, այս ի՞նչ սաստիկ է քեզ շանթել,
 Թագել քարէ հողմերի տակ որդիներիդ ու թոռներիդ:
 Ոստաններդ՝ բացուած սպի ու շէներդ վերքեր են տաք,
 Եւ մանուկներ հողի տակ սեւ, եւ մանուկներ սեւ ֆարի տակ...
 Ի՞նչ մանուկներ՝
 Արշայոյսի հրեշտակներ...
 Ու ես գիտեմ, ախ, շա՛տ է ցուրտ, շա՛տ է խոնաւ հիմա հողում,
 Իսկ մանուկներն այնպէս թեթեւ, այնպէս բարակ էին հագել...

Ղօզանջեցէ՛ք տրամաբախիծ, հայոց զանգեր ու զանգակներ,
 Պատարագներ դուք երկնային, դուք՝ աստղային հեկեկանքներ...
 Իսկ դու, սի՛րտ իմ, ել, սուրա՛ վեր ու երկնքի դուռը բակիր,
 Թակիր ցաւի բռունցքներով, մառնչներով քէն ու սխի,
 Հարցում արա, եթէ, իրօք, կայ աշխարհում մակատագիր,
 Ինչո՞ւ է սեւ
 Ճակատագիրն իմ այս ծուտտ, մի բուռ հողի...

... Ես՝ լուսապաշտ,
 Արեգակի սեմին գրի հիմերն իմ տան,
 Որ մկրտուեմ միշտ լոյսի մէջ ու կապոյտով միշտ թաթախուեմ,
 Որ իմ Մասսեաց հրաբուխներն ինձ կրակի գազտնիք տան,
 Համբերութեան գազտնիք տան ֆարափ ու վէ՛մ:
 Եւ սակայն, Տէ՛ր, ամէն անգամ դու շանթերով ինձ խանձեցիր,
 Երբ փորձեցի առեղծուածին ու գազտնիքին ես մերձենայ,
 Դու երեւի ինձ մարդօրէն — տմարդօրէն նախանձեցիր,
 Որ մօտեցելի եմ քեզ այդքան
 Ու կարող եմ աստուածանայ...

Բայց լաւ գիտես, սխիզ դիմաց ես հանել եմ անվերջ բարիս,
 Որ հաւատիս անկեղծութեամբ նակատագիրն այդ խափանեմ,
 Ճառագայթի ու լազուրի ցոլքն եմ խառնել ամէն բառիս,
 Որ քեզ, անճա՛ռ, մեծաստանչ այդ բարբառով փառաբանեմ...
 Քո կապուտակ դուռն եմ ծեծել ես իմ աջով այն վաստակած,
 Որով խիզն եմ միշտ սերմանել եւ հնձել եմ լոյս ու ցորեն,
 Որձա՛քարիս երակներէց կորզել անվերջ շանթեր ու կայծ,
 Կրակ արել, կաւ եմ շագել ու արարել աստուածօրէն...

Բայց դու, քինոտ,
 Ինձ խարանել, շանթել նորից, նորից խարկել,
 Իմ դէմ անվերջ շեղած հողմեր,
 Մահ տարածամն ես ուզարկել...

Պատասխանի՛ր,
 Ասա՛ գոնէ, սեւն ինչո՞վ եմ, արգեօօֆ, ջնջում,
 Թէ արիւնով,
 Նայիր մերքեւ, տես, ինչ գետեր են մոնչում...
 Թէ ջնջում եմ ա՛յն արցունքով, որ նման է կայծ ու հրին,
 Ապա մայր ոտքերիդ տակ յաւերժ հոսող կաթնածիրին...

Սու գու նորից,
 Մայր Հայաստան,
 Վարսերիդ սեւ սուզը քանդել
 Ու նստել ես աւեր քո տան խոյակներին ու որմերին,
 Ճակատագիրն այս ի՞նչ անխիզն, այս ի՞նչ սաստիկ է քեզ շանթել,
 Թաղել քարէ հողմերի տակ զաւակներիդ ու բռուններիդ:

Հո՛ր իմ հայոց, հող չես գու, ո՛չ,
 Դու՛ քարէ ցաւ, քարէ տրտունջ,
 քո ամէն վիհ, ամէն անդունդ՝ մի քարացած վէրքի սպի...
 Իսկ երբ օրը ամպած է խիստ, սպին այնպէս է մզկտում,
 Որ մարդն իսկ ցաւն այդ չի գսպում, իսկ քարն ինչպէ՞ս պիտի գսպի:
 Յիշենք յաւերժ. ամին հազար ինը հարիւր ութսուն ութի
 Եղանակը հայոց հողում խիստ էր ամպած ու հողմածեծ,
 Մերք տագնապի տենդ էր ու դող, մերք բախում էր լոյս ու մութի,
 Ու ելաւ ցաւն ընդերքներից ու այդ ահեղ սպին բացեց...

Սու գու, հո՛ր իմ, բացուած սպի, ու շէներդ վէրքեր են տաք,
 Ու մանուկներ հողի տակ սեւ, ու մանուկներ սեւ քարի տակ...
 Ի՞նչ մանուկներ,
 Լոյսի բողբոջ, լոյսի բնձիւղ, լոյսի ցօղուն,
 Ի՞նչ մանուկներ,
 Արշալոյսի հրեշտակներ...

Ու ես գիտեմ, ախ, շա՛տ է ցուրտ, շա՛տ է խոնաւ հիմա հողում,
Իսկ մամուկներն այնպէս թեթել, այնպէս բարակ էին հագել...

Ու ես նորից վեր սուրացել ու երկնքի դուռն եմ բախում:

— Ապրել եմ ես դար ու դարեր, բայց չգիտեմ ու հասու չեմ,
Ասէ՛ք, ինչո՞ւ բախտն իմ հողի սել է այսպէս ու արնախում,
Է՞նչ ինչ անեմ,

Ինչպէ՞ս ապրեմ, որ այդ սելը ի սպառ ջնջեմ...

Հնչեց, ասես ահեղ մի ձայն, որ նման է ամպի շնչին:

— Այն, ինչ վերուստ է սահմանուած, չես խափանի ու չես ջնջի...

— Ո՛չ,— մոնչաց լեռնն Արարատ, շնչառութեամբ շանթ ու բոցի:

— Ո՛չ,— կոնչաց արծիւն անմահ հազարամեայ Զուարթնոցի:

— Ո՛չ,— լուռ ոգեց մի խոր ակօս, որ ոսկէ սերմ ունէր ծոցում:

— Ո՛չ,— բողոքեց մի ծիրանի, որ կապոյտն էր ոսկեգօծում:

— Ո՛չ,— բառաչեց քարէ մի ցուլ:

— Ո՛չ,— շառաչեց երէ մի սիւն:

— Ո՛չ,— թոթովեց մանուկ մի բուխ, որ հենց նոր էր բացում լեզուն:

Ես գիրն այդ սել պիտի ջնջեմ ոչ արցունքով ու ոչ արեամբ,

Ամպրոպներով իմ անհամբեր ու իմ քարէ համբերութեամբ:

Պիտի գնամ Մեծի դուռ, անկարելին պիտի անեմ,

Արիւնտուած եզունգներով ապառաժներն այն բաժանեմ,

Մուր անծաւից պիտի հանեմ ես հաւատիս հրաշք այն ձին,

Որ վրնջայ լոյսերի մէջ՝ բաշը տուած շանթ ու բոցին...

Ես իմ սրտի սուրբ Գեղարդից անեղծուածներ պիտի հանեմ,

Բաւ է արդէն, ցաւի տեղակ պիտի հրաշքն իմ բաժանեմ,

Այնքան սաստիկ պիտի ձայնեմ, որ գայ իմ նոր Նարեկացին,

Եւ իր խղճի համբ խառնի այս աշխարհի ազուհացին,

Այնքան պիտի ես սրբանամ, որ ծովերով բոբիկ շրջեմ,

Ամենեցուն լոյսի պէս պարզ արդարութիւնն իմ ներշնչեմ,

Ցաւն իմ պիտի այնպէս զսպեմ, որ փոխարկուի նա հանճարի,

Եւ կայծակէ նրա շեղքով պիտի ջնջեմ սելն այդ չարի...

Որքան կ'ուզես, Տէ՛ր, երկնային դարպասներդ իմ դէմ փակիր,

Որքան կ'ուզես քո սխն ու քէնն իմ մամբէքին թող թէժանան,

Մէկ է, պիտի ցամ ու ջնջեմ, քեզ՝ անիծեալ ճակատագիր,

Մէկ է, ապրիմ պիտի նորից, մէկ է պիտի յաւերժանամ...

Վ Ա Ղ Ա Գ Ն Դ Ա Ի Ք Ե Ա Ն



Ս. ԽԱՆՁԱԴԵԱՆ

ԱՆԿՈՏՐՈՒՄ Է ՄԵՐ ՀԱԻԱՏԸ

Հայկաւոր է, վերականգման զուգընթաց, երկրի զանազան մասերից, Հիւսիսային Գոփկասից, Սոաւերթալի, Գրաթոզորի երկրամասերից, Մէրիմ Ասիայից ու այլ տեղերից գաճգուածաբար այնքան հայ բերիլ Հայաստան, որքան զոհուելի են:

ՄԵՐՈ ԽԱՆՁԱԴԵԱՆ

Գնկաներէրի Դին աւելի երկրաշարժ պայթից հազար տեղից կարտուած, բունութեամբ փոքրացուած, բայց հոգու արեղերական մեծութեամբ մեր սուրբ, մեր բիրտիական սանը: Մեր ո՞ր, ո՞ր մեղքի համար, ո՞վ աւելի ճակատագրի:

Աղէտի առաջին պահին էի ուզում զիր անկ ցաւիս բողբոջ: Ձեռք չգնաց: Ուզում էի հոգուս որտար հնչեցնել՝ յիզուս շղատուէց: Գրող ընկերներս՝ Անահիտ Սահինեանի, Հրայրայ Յովհաննիսեանի, վշտից կամկամած վարորդ Սարգիս Գրիգորեանի հետ մեզ մի կերպ զցեցինք Փամբակի ձորը: Լուսւայ վեհ սարերը կեկուելի, խանձուելի էին, սխր, կործանուել է իրենց ծոցում ծաղկած փոքրիկ, սիրելի Սպիտակ քաղաքը, սիր, բազմաթիւ գիւղեր են մարել: Վազեցինք Ջրայէն: Երբեմնի պերճ գիւղը կործանուած է...

Լեւինականի աւերակները ճշում են: Ետապեցինք Լեւինական, այս անգամ մեզ հետ էր նաեւ Հրանտ Փամբակեանը: Նոր է սրտի ծանր գործողութիւնից օտքի կանգնել: «Պիտի զիմանամ, որ օգտակար լինեմ զժբարխաներին», սասց նա: Այո՞, այդպէս: Մեր ուժը ազտին զիմանալու, զժբարխանութիւնը յազմանալու: Եւ վերացնելու մէջ է:

Ետ՛ւս հասնենք, ըտ՛ւս հասնենք օգնականներին: Մի ընտանիք բերեմ, Երեւանի սանտ պահեմ: Մի ընտանիք էլ Սպիտակից եմ խնդրել ուզարկել: Դա էլ պէտք է Գորիսի սանտ աեղաւորեմ:

Տառք ամիս է՝ հայ մարզը, Հայաստանի կառավարութիւնը օրն է բուն մարզ են ընդունում ու տեղաւորում: Նաեւ ինքս, նաեւ շատերը: Սուճալիթից, Բաքուից, Գերոսպոլսոյց մարզիկ տեղահանում են, ու՞թ ամիս է՝ Հայաստանը դարձել է զաղթականների փախտաւայր: Նորից՝ «Որբի Հայրենիք», ողբի Հայրենիք»: Եւ սա՛ ջտաներորդ դարի վերջին: Մեզա՛յ չեղ, նահատակ ժողովուրդ... Մեզա՛յ...

Մեր անձնագրճ գինուորներն իրենց պաշտպանութեան սակ առան նահ՛ւ կիրովապասցի Օրուս եւ Վեներա Եանապարտանների ընտանիքը: Երեխաներից Էդիկը 12 տարեկան է, Արմանը՝ 10, Ատաղիկը՝ 8: Ռուս եւ ուկրաինացի գինուորները այս դժբարխաններին հասցրին Հայաստան: Ես նրանց տեղաւորեցի Գորիսի իմ սանը: Գինո մայրութիւն արեց փոքրեղին:

Բաքուից տեղահանուած Միքայէլ Հալիեանի ընտանիքը տեղաւորեցի Երեւանի իմ բնակարանում: Երկու շարաթ առաջ պետութիւնը երկու ընտանիքին էլ կայարան տուէց:

Հին ու նոր ցնցումները սթափեցրին ինձ: Գրեցի այս խօսքը, վերստին որ հոգուս այս ճիշդ: Գրել՝ առ՛չ անելու: Ա՛յ: Գրել զօտեպնդելու համար թե՛ քեզ, ժողովո՛ւրդ զժրախոս, թե՛ ինձ՝ եռակի զժրախոս: Միթիթարական ջարդ չեմ ասում, այլ՝ ողնկոշիլու, վերջերջ զարժանելու, ապրելու, ազգովին յարասելու կոչը:

Այսպէս, հայե՛ր, եկէ՛ք ոչ թէ լացախեցող ազօթքներ ու արտովիշ ժրմեջանք, այլ ապրելու ու ժ ու կորով ներարկենք ձեր ազգաւում ազգի հոգուն, ինքներս ձեզ: Մեր փոքրիկ հանրապետութեան շրտ ժասերից մէկը աւերուեց: Ոգրա՞նք: Երբե՛ք:

1926 թուականին հայրս ձեր միակ կովը ծախեց: Իրա փողը ու զարկեց լինինական՝ երկրաշարժից ազգաւումներին:

Հիմա էլ ետցը:
 Լինինականում ժուսիկ եկանք փյառակների տակից հանում հարիւրուոր զիականների առաջ: Նրանցից շատերը 1920 թուականին Մուսթաֆա Գեմալ փաշայի սրից փախած Կորսի զաւակներն են... Մինչեւ ե՛րբ կրկենս քո հայաստանութիւնը, ո՛վ արիւնտ հակառակը:

Երէկ, Սպիտակում մտեսայ տասնեակ զիականք: Իրանք Սու մզայիթից փախած հայեր էին, որ ապաստան էին գտել այստեղ: Սու մզայիթի ժարդասպաններից ազատուած այս ժարդիկ ահա սպանուել են երկրաշարժից: Մի՞թէ Աստուած կայ: Հայի համար՝ հազիւ թէ...: Մեզ օգնութեան են հասել եւ շտրունակում են հասնել աշխարհի թուր ծայրերից: Աւա՛ղ, աշխարհը ձեզ ուղ հանաչեց: Աւ ճանաչեցին այն անթիւ աւրութիւնները, որոնց հոգուն թռիչք են առել նաեւ այս հողի զաւակներ Անանիա Երրակացին, Ա. Իսահակեանը, Երրուզը...:

Մարդասիրական սզով առդորում, ուսու, վրացի, ուկրաինացի, բելոսուս, ժերմայթեան ժարդիկ, ինչպէս նաեւ Փրանսիացին, անգլիացին, ամերիկացին, զերմանացին ու էլի՛, էլի ժողովուրդների զաւակներ ահա ամէն ինչով օգնութեան են հասել ձեզ: Նրանք Հայաստանի աարբեր շրջաններից, նուեւ Լեւոնային Ղարաբաղից հասած հայերի հետ փյառակների տակից հանում են զիական՛ք, զիական՛ք, զիական՛ք: Նաեւ ողջ մնացածներին հանում...: Համարում են կենդանի մնացած երեխայի թաթիկները, շատալում նրան զարժանելու:

Ազդանդ ես տեսայ ողջ մարդկութեան խղճի կուտակումը: Եւ զա մխիթարում է ձեր զժրախոս ժողովրդին:

Ինչ՝որ շափով ցաւը մեղմանում է, զրու թիւնը կայուն ճանում: Տասնեակ հազարու որ հայ երիտասարդներ օգնութեան են շտալում ազգաի վայրերը: Ահա ձեր ողջ երկիրը օգնութեան ձեռք է պարզել մեզ՝ հայերիս, Խորհրդային Հայաստանին: Ազնի Թուսասանը ծայրից-ծայր ոտքի վրայ է՝ իր օգնութիւնն է յղում ձեզ: Գրեթէ բոլոր եղբայր հանրապետութիւններն ամէն միջոցով կարեկից են ձեզ: Երկրի կենտրոնական կառավարութիւնը ձեր ասանն է՝ ձեր ցաւը զարժանելու համար: Մեր աւ երակներին այց արեց ձեր կուտակցութեան զիտուոր քարտուղարը:

Ահա գրեթէ ողջ աշխարհը թիւեր առած թուում է զէպի ձեր զժրախոս առուը, արթնացել է մինչեւ որս հայի մեծ ցաւին խուշ շտա աւրութիւնների խիղճը:

Եւ հարցը միայն փլուածը վերաշինելը, փրկութիւնը չէ: Փրկութիւնը հայ ժողովրդի վերստին խոցում հողին կազդու բին է, իր նախնական ու ժի մէջ գնելը:

Ջրաչէնի զպրօքը մինչ ազգար 499 աշակերտ կար: Հատուկներն են միայն փրկուելու: Թ՛, ահեզ, անիծում Աստուած:

Հարցնե՛մ՝ ինչպե՛ս ենք վերաշինելու, ասե՛նք, Ջրաշէնի դպրոցը: Միայն չէ՛նք երկանդնեցնելու՞մ: Ահա՛ք՝ առանց շնչի՞: Եւ ահա ի՛մ մէջ այս ողբերգական պահին այսպիսի միտք ծագեց: Հաստատ չգիտե՛մ՝ քանի՞ տասնեակ հազար մարդ է զոհուել, քանի՞ դպրոցական, բայց որ զոհերը ահուկի քանակի են, կասկած չկայ: Միտքս, առաջարկս այս է.

— Հարկաւ որ է, վերականգնման զուգընթաց, երկրի զանազան մասերից՝ Հիւսիսային Կովկասից, Ստաւրոպոլի ու Կրասնոզարի երկրամասերից, Միջին Ասիայից ու այլ տեղերից զանգուածաբար այնքան հայ բերել Հայաստան, որքան զոհուել են: Իրանց մշտական բնակութեան անդ, Հնարաւորութիւններ տանք Շիրակում, Լոռիում, Տաշրասափում:

Մեր երկիրը շտապում է վերականգնել մեր կործանուած գործարանները, Փարրիկաները, երկաթուղին, ճանապարհները, գաղամուղները: Ազնիւ, մարդասիրական դորձ է: Իբր հետ կ'առաջարկէի հետեւեալը.

— Ամէն միջոցներով նպաստել, որ արատաւճանի հայ համայնքները Հայաստանում արդիւնաբերական ու անստեղծական ձեւերով թիւներ հիմնեն: Այդ սղնթեւներ նրանք պատրուտ են:

— Կանայ ճանապարհ տալ արատաւճանեան այն հայ զանգուածներին ու մարդկանց, ովքեր ցանկանում են զալ ու ապրել մեզ հետ:

Հողը մարդով է չէն: Ուրեմն մարդաշատ դարձնենք մարդազրկուած մեր քաղաքներն ու գիւղերը:

Արիացի՛ք, ազգ: Եղբր տոհուն, շարքի ղե՛մ կուտոյ, դատանութեանը ընդգիծագիրը: Եղբր քո արգար պահանջի տէրն ու շարունակողը:

Թող ոչ ոք չկասկածի: մեր ժողովուրդն իր առասպելական ուժով այս անգամ էլ կը գիծանայ արհաւիրքին: Քանզու անը կը վերաշինուի, մտերակոյտներից նորից վեր կը խոյանան մեր քաղաքներն ու գիւղերը: Հայի ձեռքը, որ քանդելու սովոր չէ, քանզու անը չկնացնելու դատական ուժ ունի: Մեր մէջքը վրաս որ է, բայց ոչ կուտում: Մեր ձեռքը նորից կը չկնացի իր պապենական տուճը: Թող մեր ազգի հետու ու ծառ թլնամիները շքնան: Մեր ժողովուրդը մահ չունի: Կ'ապրի:

ՍԵՐՈ ՔԱՆՁԱԴԵԱՆ

ԺԱԳ. Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

———— **ԵՂԵՐԵՐԳ** ————
ՄԵՌԵԱԼ ՔԱՂԱՔԻ
 —————

Ծանկարծ,
 կարծես լախտի մը տակ
 Համատարած,
 Հայոց ֆազաֆ մը սպիտակ՝
 Արբած մարդու պէս երերաց,
 Ու ծայրէ ծայր, պատ-պատ, ֆար-ֆար
 Ճարձատարար
 Ճաքոտեցաւ, Յզմուեցաւ

Հոգիաստար,
 Որպէս բուզթէ տուփ մը ըլլար:

Քաղաք մը վառ՝ որ կար, չկա՛յ,
 Գերեզմանեցաւ,

Որպէս բնաւ
 Երկնքին տակ եզած չըլլար.
 Աւա՛ղ, աւա՛ղ...

Իր երգիքին տակ սպիտակ,
 Վայրկեա՛ն մ՛առաջ կը շնչէին՝
 — Անշնչացան,
 Գեռ ֆի՛չ առաջ կը շարժէին՝
 — Անշարժացան,
 Գեռ Յի՛շոց հիմա աշխոյժ էին՝
 — Ու սառեցան,

Լոյսեր էին՝
 — Խաւարեցան,

Գարուն էին՝
 — Ձմեռնացան,

Պատմութի՛ւն շէն՝
 — Ջնջուեցան կեանքի էջէն,
 Չեղածի պէս երա՛գ դարձան,
 Սիրտ էին տաֆ՝
 — Ընպէ մը ա՛նց, ա՛հ, ֆարացան
 Քարերուն տակ,

Փլատակի հետ՝ փլատակ,
 Զմեռ չեկած՝
 Թաքումեցան վարդ ու շուշան,
 Գիշեր չեղած՝
 Արեւներ մա՛յր յանկարծ մտան
 Հայ քաղաքին տակ սպիտակ՝
 Աւա՛ղ, աւա՛ղ...

Ամբողջ քաղաք մը սպիտակ՝
 Պարտէզ մը երգ դեռ կուրծքին տակ,
 Դեռ աչքերուն յոյսի ծարաւ,
 Վա՛խ-վա՛խ, կեանքէն ի մահ անցաւ
 Եւ յոյսէն մութ՝ գերեզմանացաւ...
 Յանկարծ,
 Կարծես շանքի մը տակ
 Համատարած,
 Դրախտ քաղաք մը սպիտակ՝
 Կազմիի պէս հսկայական
 Կայծակաբար
 Պատուեցաւ, ներմակ-ներմակ
 Տապալեցաւ հասակն ի վար՝
 Աւա՛ղ, աւա՛ղ...

Փոքր Հայաստան
 Մ'անապատցաւ իր Հայկերէն
 Ու մերկացաւ Հայկականերէն,
 Իր բուրումէն եւ անուշէն՝
 Հայկոյճներէն
 Ան որբացաւ,
 Ան խորբացաւ:
 Ամայացաւ իր շէնքերէն
 Եւ երգերէն
 Ու վերքերո՛վ ամբոխուեցաւ
 Ու ողբերգո՛վ ողորուեցաւ
 Շուշան քաղաք մը սպիտակ՝
 Աւա՛ղ, աւա՛ղ...

Եւ Սպիտակն ի սպառ սեւցաւ,
 Դարձաւ իրա՛ւ սեւ ծով ուղի,
 Լեռնակուտակ շի՛ք արցունքի,
 Հողակոյտի մոխի՛ք անբաւ՝
 Հայ հողին վրան
 Ու պատմութեան:

Սեցաւ ձանի հայու հոգիս,
 Արցունքը լեռ դիզեց սրտիս,
 Աչքերս մոյմպէս սեւ ծով դարձան,
 Կեանքիս վրան
 Մոխիրն իջաւ Սպիտակի:

Քարակարկառ եւ սպիտակ
 Աշխարհ մը ողջ բուսեալաբար
 հոգ ու անիւն ու աւերակ՝
 Գլորեցաւ անդունդն ի վար,
 Լոկ յուշ եղաւ վէպի դժբախտ,
 Կա՛ր՝ ու չկա՛յ,
 Զկա՛յ քաղաքը Սպիտակ՝
 Աւա՛ղ, աւա՛ղ...

ԺԱԳ Ս. ՅԱԿՈԲԵԱՆ

ԽՕՍՔ ՑԱԻԻ ԵՒ ԱՌՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Գլուխներս խոնարհեմք, բարեկամներ, մեր հարազատ մահառակների առաջ, կույ տանք մեր արցունքը եւ նորից արիւնքանք, նորից ոգի առնեմք տարեկու եւ, մահաւանդ՝ ապրեցնելու մեր ժողովրդին:

ՀՐԱՉԵԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Մինչեւ կոկորդ չուսած մեր ցաւին աւելացաւ տարեբոց զաւր: Այն պահին, երբ այսանց՝ Երևանում բոլորս զգացինք բնութեան զաւանան նարուսանների ցնցումները, ի՞նչ իմանալինք, որ մեր փոքրիկ նայրենիքի՝ իւսիւսարեւմտեան տարածքում, մեզինք մի քանի տասնեակ կիլոմետր նեւու, մեր սիրտը կտրուեմ եւ Երբեկում պատուում է նոցը, փուլուում է չնշքերը, իրենց թնոնով թևերներն առկ խոնարհելով ճարդկանքն կհանքեր, կնկարներ ճարդներն ձերերի, կանանց, երբուտարդների եւ ճանկանց, ճանկանց: Ի՞նչ զմեռն պատանար, ի՞նչ անպատան սպրեզուիներ: Մի ի՞նչ մեր վիշտը չերթ չեր մեզ, մի ի՞նչ նախախնամութիւնն իրաւ, այդքան ցանկ մեռն է ուղղում առաջի մեր սրտի զորութիւնը, մեր չոգու առկունութիւնը:

Երկրաշարժի առաջին նետուտանախին նկարահանումները սարսուտով լցին չոգիս, չոգիս, որ ապրել է պատերազմի արտաբոց, Առաջին զոհի աւերածը, Սրբուհի-Կուրակ ազգի կործանումը զի զերի սարսուտը: Բայց չէ՞ որ զբանք պատերազմի թուեաւ որ պատու գնեքն էին, ու պի՞ մուշքի նախախնամքը: Ինչ ա՞նչ աշխատի խաղաղութիւնն է...:

Երբ գու՞ առնեք թիւր յայտնի չէ, բայց այն զմուտ չէ կուտել: Փարսութեան թիւս բախողների մեկ տարու այս շարքաւորի տարին: Յիշելով անցան տարեփոքի փոստեցութիւնները, Զ-

գրակի եւ այլոց սնտի գուշակութիւնները, թէ զոչ թուերով վերջացող տարին բարեկամաց ու երջանկաւոր է նամարում, փնտրում եմ ցատու մով ու նորովի փոստերով: Անա՞յ, ոչ ցատու մը, ոչ նորովի, ոչ վշտի ճիշդ չեն կարող անորի ոչ մէկու չոգին: Եւսեր է այս անկը: Զայց երկրում, փորձութիւններն այս զաման զբարեւանում, Արարտանների ստույգ նայրեցի առկ ապառախութիւններն, Երեսուցիներն, աւերածներն, բռնազրուածներն առկ յարանի մէջ զի չեն կզել թուութեան ստույգները, նրա անկուտելի յարմարութիւնը: Մեր ժողովուրդը զմեռն է, առկաչել, զոչ Առանց-չոքի ստույգութիւնը մեզ զունեթին, փլուտակներն ճարել իր սկիւթները, վարել իր խոլանքը, ցանկ իր կնկար նախը եւ ապրել ու ապրել: Այսպէս զարեգար, այսպէս յախանաւ:

Այս ցուտպին միջոցին կկէք զրիկնք գու՞ առնեք շարքաւորներին, մեզինք նրանց կոկորդ, ոչնութեան մեռն մեկնեք նրանց: Յատուկ նիւթակն ֆոնս կի՞նեք սուտան թնտափայլերի եւ զրիւում ընտանեկներն չոգիս:

Գլուխներս խոնարհեմք, բարեկամներ, մեր հարազատ մահառակների առաջ, կույ տանք մեր արցունքը եւ նորից արիւնքանք, նորից ոգի առնեմք տարեկու եւ, մահաւանդ՝ ապրեցնելու մեր ժողովրդին:

ՀՐԱՉԵԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Մ. ՍԱՐԳՍԵԱՆ

==== ԿԱՆԳՆԻՐ, ====
ԻՆՉՊԷՍ ԼՈՅՍ ԼԵՌՆ Է
— ՄԵՐ ԿԱՆԳՈՒՆ —

Մե՞նք մահին ու անբաժութեանը հարկադրեցինք արքայու մեր կամը, մեր սմանչի ստամենի անմահութիւնը, որո՞նք անբուժի մէջ անզամ աւելի հզօր դուրս եկան. էան անբողոքներ:

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍԵԱՆ

«Սիրտս նման է էն փլած տներ, շարդուներ գերաններ, խախտուներ են սներ»: քանի որ է յայտնի երգի տողերը հասնում են լիզուխ եւ ցաւով ճիւղաւում աստմենքին տակ: Հողիս, էութիւնս ամբողջ, լրիւ անզբաղարձնում են իմ հայրենիքի, իմ հայ աշխարհի պատկերը: Նոյն էութիւնն են՝ փլուած տներ, ջարդուած դերաններ, խախտուած սիւներ եւ տասնհակ ու տասնհակ հազարուոր փլատակուած կենանքեր, այն էլ ուժի՛ց՝ մեզնի՛ց, որ սակաւաթիւ ենք ու սակաւ արիւն: Այն էլ կ'ըր ...: Սու՛մզ այիթեան հայրդիներ արիւնը տակաւ ին շորացած, չսպիացած, իմ ժողովուրդը ազաքիեման նեարչային փնտտուքի մէջ, եւ անա պայթեց այս աշխարհաստան աղէտը: Ի՞նչ ասել, ի՞նչ անուկ տալ ողբերգութիւնների այս համերաշխամար: Մեր հակատազրի գժիեմութիւնը համարենք, թէ բնութեան ու պատմութեան անողոք ու շարունակական իրենցիայի կործանարար աշխատանքը: ՉՅրդ գաղը սկսուեց եւ աւարտում է հայկական մեծ ողբերգութիւնների, գարսակցիին՝ Մեն Սղեոնով եւ գարսիւրդիին՝ մեծ երկրաշարժով: Մեր հարիւրամեակում հայ ժողովուրդը իր այսօրուայ թուաքանակի չափ գո՛ւ է տուել: Այս է գառն ու դաժան ճշմարտութիւնը: Իսկ հիմա մեր աշխարհի դասական ստանները՝ Լենինականն ու Կիրովականը, Ապրտակն ու Սակփանաւանը, մեր բարեկարգ դիզերն ու շէները՝ փլատակուած, աւերուած, մահուան անողոք թաթների մէջ: Անզօրութիւնը, երբ ոյթների (բնական եւ ոչ բնական) անպատեխիութիւնը միացած կորուստների առնելիութեանը, զրգուում են մարզկային հոգիները: Այստեղ անզօրանում է նաեւ ժողովրդի ցաւը ցաւով յաղթահարելու իմաստուն փրկիտփայութիւնը: Ինչպէ՞ս յաղթահարել հազարների, տասնհակ հազարների անմիտ կործանման ցաւը, որ ցաւ էլ չէ, այլ՝ սրտեր պատտոտոտող, հոգի քամող դիւական կսկիծ: Ի՞նչ էինք արել, մեր մեղքն ի՞նչ էր, ո՞վ մայր բնութիւն, որ քեզ Աստուած ենք կոչել, խոնկ ենք ծխել, մո՞մ վառել, հանճարեղ տաղեր բուրվառել սրբութեանը, հայցելով ջո գթարտութիւնը, ողորմածութիւնը, մեծահոգութիւնը, իսկ գու ազլաները թափում ես աստութեան հղջիւրից եւ ծխատանում ես մեր արջուկները շորացնելու եւ ցաւերն ամոքելու ջո աստուածային պարտականութեանը մէջ:



Տէր-Չօրից մինչև այսօր նոյն հարցն է ծառանում մեր առջև.

— Մամիկ, Աստուած կը տխուն՝, չես կոտորած...

— Կը տխունայ, ձագո՛ւ կա...

— Հապա ինչո՞ւ մեզ ակը չի կայնէ, մամիկ...

— Մեռնեմ ուր գորութեան, կը փորձէ մեր հաւատքի ամբուսիւն, մեր հողու ուժ...

Երկնային Տէրը հայերի հաւատի ամբուսիւնից զժողովուրդը առի՞ժ չուներ, ոչ էլ աշխարհն ու ճարդկութիւնը՝ հայ ազու ուժը՝ նրա սպարելու, գոյատևելու, յարատևելու հրաշքը ժխտելու իրաւունք: Չարմանալի իմաստուն է ժողովուրդը: Վերակուար ծնծած անգն է ծնծուժն առանը իրաւ համահային է մեր այսօրու այ վիճակին: Օրինաչափութիւն չորոններ մեր շարունակական, պարբերական տառապանքների եւ կորուստների մէջ, բայց մեր անասանութեան, շարին գիմագրուելու, կամքի լաւատեսութեան մէջ օրինաչափութիւն չտեսնելու իրաւունք չունենք: Ես հաւատում եմ մեր ժողովրդին: Ես գիտեմ մահը եւ ճարդկանց շարագործութիւնները գիտնելու զաղանդքը: Ընժարատութիւնն այն է, որ Աստուած մեզ քարատան տուեց, մենք այն Հայաստան դարձրինք: Մենք մահին ու անբանութեանը հակադրեցինք ապրելու մեր կամքը, մեր սքանչելի ուսանանքի անժառուսիւնը, որոնք աւերուածի մէջ անզամ աւելի կտոր դուրս եկան, քան աւերողները: Մենք մեր հանճարով մասնակցեցինք աշխարհի քաղաքակրթութեանը, աշխարհն ազնուացնելու: Մենք ասելութիւնը խեղճացրինք սիրով, աւերուածին հակադրեցինք արարումը, գրչին ու բրչին ապաւինեցինք, չժխտելով սուր ու նիզակի կտրու որութիւնը: Քեզ տաղանդաւոր ու չինարար ժողովուրդ է կոչում աշխարհը, ուրեմն՝ ուղղիր ուսերդ, իմ սիրելի, իմ աննշանար ժողովուրդ, եւ նորից բանեցրու քո

չորս-չափարմեայ մուրճը, գուժանից խոփով հանդարտեցրու հայրենի հողի աւերի ընդվզու մը եւ զուգիւր նրան այդ ետանանկրով, բերք ու բարեբով, է՛յ աւելի շքեղ ու աւելի բարեշէն Լենինականով, Կիրովականով, Սպիտակով, Ստեփանաւանով, չէնկրով ու գիւղերով: Մի՛ կօր ու սերդ...: Վերածնունդ Լենինականի փողոցներում եւ այգիներում նորից կը լսուեն Երրակի կախարչ-ներէ՛ Աւետիք Իսահակեանի, Յովհաննէս Երեզլի, Երեմի երգերը, որ այսօր լայնահասակ թեւածու մեծ մեծ քաղաքի աւերակների վրայ: Նորից Կիրովականում կը հիւրընկալուի մեծ լուսեցին ո՛չ միայն իր «Էնոզեհանգիստով», այլեւ «Նոր հայրենիք», հզօր հայրենիքի նայեքան հզօր ու հանճարեղ հիմնով:

Մենք ծնուել ու ապրել ենք այս հողում, ապրում եւ ապրելու ենք այսուհեղ, նահատակուելու եւ մարտիրոսուելու ենք այստեղ: Այս հողը մեզ սովորեցրել է ապրելու ամենազմուար կերպը՝ քարից հաց քամելու, մահին առճակատելու եւ յաղթելու, նրա բերանից մեր կեանքը կորզելու եւ հանապազօրեայ ապրուստ հայթայթելու գաղտնիքը: Մահով շնու կարող վախեցնել հային, նա ինքը կը զարմացնէ մահն՝ արհամարհող օրօրոցների ու աւերակներից յատուկ կեանքի վերընձի գման խորհրդով: Այսօր ոտքի վրայ է ողջ հայ աշխարհը: Երկաթաբարդութիւնը քաղաքների ու գիւղերի աւերակների միջից պեղում է մեր կեանքը, մեր գայիքը, մեր պատմութիւնը փրկելու դժուարին հնարքը: Նման երկրասարդութիւն ու նեցող ժողովուրդը իրաւունք չուի կասկածելու իր անմահութեանը: Ժողովուրդը գտնուում է բարոյական մորթիլապիսի մէջ եւ առաքինութեան ու մարդկայնութեան հրաշքներ է գործում: Տասնամեակներից բարոյական կասանքների ենթարկուած եւ տնտեսապէս կեղեքուած մեր փոքրիկ Արցախի օդնութիւնը Մայր Հայրենիքին ինքնագոհողութեան եւ Հերոսութեան պայծառ օրինակ է:

Մենք միայնակ չենք, ամուր է մեր թիկու նքը, խորհրդային հանրապետութեանների բարեկամութեամբ անասան: Մեր վիշաղ բաժանուած է ողջ աշխարհի ժողովուրդների միջեւ: Մեր գործախառնութիւնն ու ուղբերգութիւնը այսօր իրենն է համարում ողջ մարդկութիւնը: Մենք չենք կասկածում նրա անկեղծութեանը, նրա նուիրարեքամ արեան սրբութեանը, քանզի ազի են նրա արցունքները, եւ արիւնը՝ կամրիք, ինչպէս մերը: Արցունքով նա մեզ գուժ է ներարկում, արիւնով՝ կեանք: Մեր ողբերգութիւնը համախմբեց ու միասնեց աշխարհի բոլոր ժողովուրդներին, բարեկամքի տէր բոլոր մարդկանց՝ անկախ նրանց քաղաքական դասանանքից, բոլոր երկրներին՝ անկախ նրանց հասարակական կառուցուածքից: Մարդկութիւնը մեր ցաւից իմացաւ, յայնանպօրծեց նաեւ ի՛ր ցաւի տեղը, նաեւ ի՛ր ցաւի գեղն ու բայասանը, հասկացաւ, որ Երկիր մայրապէր մի առան է, նրանում բնակուած ժողովուրդները՝ մի ընտանիք, որ մէկի ցաւը բոլորինն է եւ ոտքի ելլաւ ու կանգնեց մեր կողքին:

Դու՛, իմ Մայր Հայաստան, նորից կը շարունակես իմ յանձնարարական հանձնարքը, նորից կը հիւսնս հայրենի բոյնը, նորից կ'երգես իմ հիմաւորց երգը, սակայն մեծ ցաւը կը սեղմի կոկորդոզ, քանզի ջեղ հետ չեն լինի իմ բազմահազար այն զաւակները, որոնք թաղուեցին փլատակների տակ եւ որոնք, սակայն, պէտք է հասնեն բարձրացող եւ չէնաչող քաղաքների եւ գիւղերի հետ, այս անգամ՝ որպէս նրանց յանձնարարական բնակիչները:

Արիացի՛ր, սիրտ իմ, ե՛լ հաւատով տուրու՛ն,
Կանգնի՛ր, ինչպէս լոյս լեռն է մեր կանգուն...

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍԵԱՆ



Պ. ԶԷՏԹՈՒՆՑԵԱՆՏՈԿԱ՛, ԵՐԿԻՐԻ՞ՆՁ ՎԵՐՆԱԳԻՐ,ԻՆՁՈ՞Ւ ՎԵՐՆԱԳԻՐ


Հաւատամք, որ մարդ արարածն էլ բնզունակ է այդ հրաշ-
քին: Եւ հայ մարդն իր եզգով կը կանգնի ամբողջ հասակով Վէլ
եւ կ'ստի՛ հս կամ: Ես չեմ կարող, ես իրաւունք չունեմ չլինելու:

ՊԵՐՃ ԶԷՏԹՈՒՆՑԵԱՆ

Մարդկային պատմութեան ամենասարսափելի գազանութիւնը՝
1915ի Մեծ Եղեռն... 37 թիւ, աշխարհակործան պատերազմ եւ վերելքների
ու վայրէջքների 1988 թուական տեսած ժողովուրդը որտեղի՞ց իմանար,
որ ճակատագիրը խնամքով եւս մի փորձամբ է պահել իր համար, դարա-
վերջեան մի արծաւիրք, որ տասնեակ հազար մարդկանց կեանք անխնայ
տարաւ իր հետ, հարիւր հազարաւորների, որոնց համար բնտանեկան
օջախը դարեր ի վեր սրբութիւն է համարուել, գրկել հենց իր սրբավայ-
րից՝ տունատեղից, եւ հիմա, այ հենց հիմա, փլատակների դժոխքի տակ
մեր արիւնակից ներայրներն ու բոյրերը, մեր սիրասուն գաւակները դեռ
մտնուկեմաց պայտարի մէջ են...

Խելագարում ես, երբ գէթ մի պահ փորձում ես պատկերացնել, թէ
ինչ են գգում մրանք, թէ մրանց ենթագիտակցութեան մէջ ի՞նչ մտքերի,
ի՞նչ ապրումների, ի՞նչ պատկերների պատառոտում, ծուէն-ծուէն եզած
մշուշներ են անցնում հիմա, գուցէ հարագատի ազօտ ուրուանկար,
գուցէ երկմեքի մի կտոր, գուցէ... Բայց ես ի՞նչ իրաւունք ունեմ իմ անձնա-
կան տառապանքից ծնուած ապրումները վերագրելու մրանց, ես ի՞նչ
գիտեմ առհասարակ, որ համարակաւում եմ ձժոխքի մասին գրելու, երբ
իրենք են բուն դժոխքում, իսկ ես նստած եմ գրասեղանի առաջ... Մեղա-
ւորութեան մի մեծ գզացում պատեց ինձ այս պահին, ամօքի տեսութիւն
գզացում՝ բարից, գրչից, գրասեղանից եւ մանուսանդ, մանուսանդ իմ
զխտվերելում տարածուած առատագրից... Մեղքի մի անյատակ գզա-
ցում՝ բէկուզելու ոչ մի ակնբարբ չմեղմացող իմ տառապանքից, իմ ցաւից,
հչալու իմ անգուսպ պահանքից... Որովհետեւ այս ամէնը ծաղր է թուում
բուն տառապանքների գոյութեան առաջ...

Գիտեմ, գիտեմ, որ իմ պարտքն է միտքարանձի խօսքեր մղմնչալ,
սակայն ինչպէ՛ս, երբ հենց ինքս, երբ մեզնից ամէն մէկը այդ նոյն խօսքերի
կարիքն ունի: Բայց ուրիշ ծար չկայ, ուրիշ ելք չկայ, սիրելիներս, հարա-
զատներս, այդ խօսքերը, որքան էլ անվստահ, որքան էլ թոքով, որքան էլ



անպատեհ հնչն, միեւնոյն է, պիտի շնջանք, պարտաւոր ենք շնջալ մի-
միայն ականջի... Թէկուզ դրանց անգորութիւնից կարմրելով... Այդ շշուկ-
ները թող միանան, թող դառնան միասնական ձայն, միասնական կամք ու
ուզի: Գուցէ այդ դէպքում մեզնից ամօթածօրէն ելած ու արդէն մեզնից
պոկուած այդ ձայնը, որն այլևս միայն իմը չէ, միայն իմը չէ, ամօքելու,
յուսադրելու ուժ ունենալ:

Թող ամռի թէկուզեւ այն քանի համար, որ մեր անչափելի ողորդ-
գութիւնը աշխարհին սովորեցրեց զէք մի պահ շահեմանայինս եսասի-
րութիւնից դուրս գալ եւ ապրել հեռուոր ու փոքրիկ Հայաստանի բախ-
տով, Հայաստան, որն, ինչպէս պարզուեց, մանեւ հիւսիսային կողմ ունի...

Ըւ մարդկային համերաշխութեան ու միաւորման այս յուզիչ ցոյ-
ցին թող չյանդգնեն խառնուելու փարիսեցիները: Մարդկային դրսեւոր-
ման միակ եւ վերջին միջոցը նրանց համար այս պահին չառաքել են է:

Ըւ շանի որ գերշիկացած իմ հոգեվիճակում դժուար է գուտայ տո-
նով այդ մասին խօսել, թող ինձ օգնութեան հասնի որու հասարակ մի կին,
մասկուացի Գ. Մոլոտչիկովան, որի միամիտ եւ մաքուր շուրթներով
նշմարտութիւնն է բարբառում: Վաստայական ինֆորմացիայի միջոց-
ները կորցնում են չափի զգացումը, անզուսպ կերպով շատախօսելով
Անդրկովկասի ժողովուրդների բարեկամութեան մասին: Մերկ յայտա-
բարութիւններն այսօր եւեթառակ ներգործութիւն են ունենում: Ապա
քուարկում է, թէ դրանց փոխարէն ի՞նչ է հարկուար անել եւ յատկապէս
աւելացնում. «Աւելի ՇԱՏ ԴՐԱՆԿԱՏՈՒԹԻՒՆ: ԵՒ ԱՎԵԼԻ ՔԻՉ ԳԵՂԵՑԻԿ
ԿՕՄԻՏԻ» (Վերջնական կուլտուրա», Գեղեցիկների 10): Որքանուած խօս-
քեր, որովհետեւ երբեմն, մեր մեծ ցարի մէջ անգամ, հենց այդ ներանկա-
տութիւնը պակասեց, դարձեալ եին ցուցափեղկը փորձեցին մէտոկ հա-

նել, որը ըստ մեր կենցաղում ընդունուած կարգի, ցուցադրում է յատկապէս այն, ինչ ներսում չկայ: Վկայ՝ Դեկտեմբերի 13ի «Փրատաս»ն. «Կան զժբախտութեան շնորհաւորամբներն» հեռագրեր: Իւրաքանչիւր այդպիսի հեռագրի հեղինակը, հաւանաբար, պէտք է քրէական պատասխանատուութեան ենթարկուի: Մեր կողմից աւելացնենք. ոչ միայն հեղինակները... Բայց, փառք Տիրոջ, որ դրանք առանձին բնութեան փաստեր են, բուն ճշմարտութիւնն այն է, որ վրացու, աուսի, էստոնացու, ուզրեկի անխորհուրդ արիւնք իրօք կեանք ներառկեց մեր երակներին, խորհրդային ժողովուրդների հետ միասին ոտքի ելաւ ամբողջ աշխարհը. ամբողջ հայ Ափիոնքը, իսկ երիտասարդ մի ամերիկացի, ինչպէս «Փրատաս»ն է պատմում, կտրականապէս հրաժարուելով իր ինքնութիւնը յայտնել, 25 հազար տոլար նուիրաբերեց երկրաշարժից տուժածներին: Ինքնութիւնը քաջցնելու փաստի մէջ նա աւելի եւս հաստատեց իր ինքնութիւնը, մարդկութեան մեծ ընտանիքի իր պատկանելութիւնը: Եւ որքան այս փաստն է յուզիչ եւ ցնցող, նոյնքան ցնցող եւ յուզիչ է նաեւ այն, որ ամերիկահայ դպրոցներից մէկի աշակերտները իրենց օրապահիկը որոշել են ամբողջովին նուիրել մայր հայրենիքին: Ահա թէ քարճրագոյն քարոյականութիւնը ինչպէս է հաւասարեցնում 25 հազար տոլարն ու հարիւր տոլարը...

Ուրեմն, հաւատանք մարդկային համերաշխութեանը: Հաւատանք ու սփոփուենք, որ մենակ չենք:

Թէեւ այդ հաւատն ու միտքարութիւնը չեն կարող յարութիւն տալ մեռածներին:

Թէեւ այդ հաւատն ու անկատար երազներին:

Անգոր թուացող խոտը կարող է երաշխով ճեղքել հզօր ասֆալտը եւ լոյս աշխարհի հանել իր բարալիկ ու անպաշտպան մարմինը: Հաւատանք, որ մարդ արարածն էլ ընդունակ է այդ երաշխին: Եւ հայ մարդն իր հոգով կը կանգնի ամբողջ հասակով մէկ եւ կ'աւի՛՛ ես կամ: Եւ չեմ կարող, ես իրաւունք չունեմ չլինելու:

Մեր այս հաւատի համար խոնարհաբար ներողութիւն հայցենք մեռածներին, եւ ո՛չ մէկ անգամ եւ ոչ միայն այսօր, բայց եւ... շարունակենք հաւատալ: Նաեւ այն թոյլ, նաեւ այն երկչոտ յոյսով, որ դա հենց անմեկ գոհերի պատգամն է մեզ՝ ապրողներս:

ՊԵՐՃ ԶԷՅԹՈՒՆՑԵԱՆ

ԴԻՄԱՑԻՐ, ԱԶԳ ԻՄ...

... Դու պիտի ապրես աշխարհի համար, որպեսզի քո սուրբ, սուկնցիկ խօսքով, էս մշակույթով ու ազնուակամ ճկարագրով ցոյց տաս նմանիդ, թէ ինչ է Մարդը...

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Ափոփանքի խօսք չպիտի ասեմ, ազգ իմ անվհատ, այլ՝ յուրժու մի: Գե՛ղ, որ վաղնիական քառուից ելար՝ հազարամեակների խառն արը պատնելու առաջելու թեամբ, սփոփանքի խօսք չպիտի ասեմ, այլ՝ յիշեցու մի:

Դու միշտ յազմել էս փորձու թիւ ններին ու նորից յառնել քո առկու նու-թեան, քո ազնուութեան շուսապսակով:

«Ձախորդ օրերը կու գան ու կ'երթան», ա՛զգ իմ հարազատ:

Դու ծնու էլ ես տոկալու համար, ցոյց տայու համար արար-աշխարհին, որ պիտի ապրես՝ ինչքան էլ խոցեն, որ Տէր-գործերից մինչեւ Սուրբ աշխիթ ար-նաքամուելով՝ դու բնագունակ ես սուրբ արարու մով քու ժելու նաեւ տարերքի վերջերք:

Դու պիտի ապրես աշխարհի համար, որպեսզի քո սուրբ, սուկնցիկ խօսքով, քո մշակույթով ու ազնուական ճկարագրով ցոյց տաս նմանիդ, թէ ինչ է Մարդը, մարդու կոչու մը, բանականութիւնը եւ թէ ինչի համար պիտի պայ-քարել:

Այս կեանքը պայքար է, եւ մենք՝ արդար իրաւ ու նքի, բարու գինու-ներ ենք, մենք՝ նարեկացու, Արովեանի, Բաֆֆու, Վարու ժանի, Կոմիտասի, Քուժանեանի ազգը, սուրբ Աւարայրից մինչեւ Սարգարապատ քաջորէն ան-ցած նախնեաց սերու նոցանքը:

Յու աւերուելու է իրաւ ու նք չու նեւ, ա՛զգ իմ աննկու ն:

Մենք մենք Միութեան հզոր դաշինքով գրահուած ազգ ենք, եւ աննա-խընթաց այս արհաւիրքի, փորձութեան ժամին մեզ հեռ են ազնիւ մեր եզ-րայրները՝ անկաշառ սիրով ու մարդկայնութեամբ:

Դու արգէն հասել ես սուրբ իրաւունքից նանայման սեմին, արար-աշ-խարհը յարգու մ է Ոգիդ, մենք մշակույթդ, յիշելու թեան մաքառու մներդ՝ վշտից կարեկցու մ:

Այս դաժան պահին, երբ խենթ տարերքի զիւերն է իջել մեր նու իրական աշխարհի վրայ, վշտից սգաւոր մեր մութ երկնքում, որտեղից դեռ երկէ հայոց կուռնկները ու բախ խարրիկներ էին տանում հայրենարարդ գաղթօջախնե-րին, այսօր թեւածու մ են օգնութեան շտապող պողպատեայ կուռնկները՝ ի սէր հայրենիքի, ի սէր մարդկային համեմաշխութեան:

Սրբիք արցունքդ, ա՛զգ իմ անվհատ, ա՛զգ իմ յուստեւ: Աւերակներից նորից կը յառնեն երգի, ինչպէս թեան, քաղցր հուժորի մեր անուշ Գիւմրին՝ Ան-նինականը, գոգարիկ, վարդաքար կիրովականը, նորահարսի պէս ճերմա-կազգեստ Սպիտակը, Ստեփանաւանը իրենց շուրջը սուրբ բնկած նահատակ ծուխ-ծխանիքով, սուրբ երգիքներով նորից կը ծաղկեն, կը վարդազուենն հո-րովիչներով եւ սիրելիքներով, հայերիս վայել սուրբ արարու մով:

Իսկ մինչ այդ՝ ոտքդ դիր այրուող սրտիս, տրորի՛ր, ճշմի՛ր, միայն թէ առկա՛ (ԵՊՂԱԿԱՍ ՔԵՐԵՅ, 16 Դեկտեմբեր 1988):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ՄԵՏԱՔՍԷՄԷԿ Է, ՄԵՆՔ Կ'ԱՊՐԵՆՆՔ

Ո՛ւր ես, իմ քաղաք,
 Անբառամ տատիս պաշտելի Գիւմրի,
 Ուր ժամերգութեան լոյսը Յօր Վէրքի
 Գմբէթից ծորում, երգում էր դի՛նգ-դա՛նգ,
 Մտնում սնէտուն,
 Օրհնանք էր բաշխում ամէն նոր Տարուն...

Ախ, տարի՛ չէ սա, դա՛ր է փորձութեան,
 Սա ահագանգ է բնդդէմ մահերի ու դաժանութեան.
 Ասա՛ ինձ, տատի, ինչո՞ւ է հայոց կոտորածներով
 Անվերջ հաստատում
 Վայրագութիւնը մարդկային հոգու,
 Եւ ինչո՞ւ, ասա՛, մեզնով են նարէն
 Ճշգրտում այսօր
 Ո՛չ միայն խղճի ու համբերութեան
 Սահմանները սուրբ,
 Այլեւ բովանդակ
 Բարութեան ուժը այս հոգագնդի...

Ո՛ւր ես, իմ քաղաք,
 Լեզու է առել գետինդ անգամ,
 Շնչում է ծանր, մերթ խուլ հեկեկում,
 Այն ո՞վ է տնճում,
 Այն ո՞վ է լալիս,
 Երեխա՛յ ճշաց.
 Զայներ են գալիս հողի ընդերքից
 Սարսափած,
 Վհա՛տ...
 Պտոյտ են գալիս նրանց շուրջն անվերջ.
 Ու զգում են, վա՛խ, ինչպէս մարմնում,
 Հանգչում են խորքում ձայները հատ-հատ...
 Խեղագարում են անկարողութեան
 Վինակից իմ բուր...

Ես, ոգորմելի՛ս,
 Որ հնար չունեմ. թէ այս վայրկեանիս,
 Օգնութեան հասնեմ հոգում խեղդուողին,
 Կուգուեմ քարերի ու փուլածփի մէջ,
 Որ գոնէ մէկին
 Փրկե՛մ, իմ քաղաք...

Ո՛վ լուսահողի, տանջուած իմ տասի,
 Իմաստուն էիր, երբ ձեռքս բռնած
 Յօդ վերք գնալիս
 Փսփսուեմ էիր, թէ՛ Արարիչը տիեզերական,
 Որպէս սուրբ խորհուրդ,
 Մե՛զ է փորձաքար ընտրել էն գլխից,
 Որպէս դիմացկուն, հզօր ժողովուրդ...
 Եւ դիմանա՛ւմ ենք ի տես աշխարհի,
 Եւ կը դիմանանք ի լուր չարիքի,
 Մէ՛կ է, մենք հայ ենք, մէ՛կ է, մենք կ'ապրե՛նք,
 Եւ լեզուով, ոգով
 Յաւերթին նոյնիսկ մենք կը դիմանանք...
 Եւ կը կառուցե՛նք քաղաքներ, գիւղեր,
 Եւ կը շէնանա՛նք,
 Եւ կը շնանան շուրջները մեր,
 Որ մենք ի ծնէ
 Ունենք մշտական դէմ ու գրանցում,
 Յաւիտենութեան առեղծուածի մէջ...

Ո՛ւր ես, իմ քաղաք,
 Անքառամ տասիս պաշտելի Գիւմրի,
 Ուզում եմ նրա ստնահետքերի
 Տեսիլք մի պահ շօշափել սրտում,
 Բայց աւա՛ղ, չկայ,
 Չկայ Յօդ վերքի ոգոթիւնը կուռ,
 Վիրաւոր, ախուր ամփոփունի իր մէջ,
 Ազօրում է լուռ...
 Կարկամել, յուզուել, քայլում եմ տրտում
 Եւ որոնում եմ օրերն այն բարի,
 Երբ գնգում էին կենսասիրութեամբ
 Փողոցներ, տներ, մաքրիկ բիրաւոր-
 Այդ ինչպէ՛ս եզաւ,
 Ախ, ինչպէ՛ս եզաւ,
 Որ հրաշքների, գալիքների հետ
 Խեղճ մանկութիւնս էլ մնաց առյաւելտ
 Փլատակների ու քարերի տակ...

ՄԵՏԱՒՍԷ

ՀՐ. ԹԱՄՐԱԶԵԱՆ

ՍՈՒՐԲ Է ՔՈ ՈՒՂԻՆ

Թող շուրթիսման չար հոգիները, հազարամեակների ժառանգ մեր ժողովուրդը խոր հաւատով ու կեցումով ուժով կ'ուզի իր կեանքը, շարունակելով յաներժակալ ուզի:

ՀՐԱՆՑ ԹԱՄՐԱԶԵԱՆ

Դժուար, շատ դժուար է գրել, ատղերը խառնուժ են իբր, գրերը մշուշուժ: Ծանր մառախուղ է իջել մեր կեանքի եւ օրերի վրայ: Դեռ երէկ այս փոքրիկ հողի, այս հպարտ բարձրաւանդակի վրայ ապրող ժողովուրդը մաքառում էր հին կապանքների դէմ՝ յանուն ճշմարտութեան, գեռ երէկ նա փայփայում էր արդար երազներ եւ լուսաւոր յոյսեր... Եւ յանկարծ իբրար հետեւեցին ծանր հարուածները: Նախ սկսուեց հայ մարդկանց տանջալիքը՝ իրենց դարաւոր կենսական ակունքներից, սարսափահար մարդիկ գալիս էին ապաւինելու մայր ժողովրդին: Եւ կարծես դա քիչ էր՝ հասաւ նոր աղէտը...

Բնութեան հարուածն իջաւ մեր շնորհաշատ եղբորների վրայ, աւերակների վերածուեցին ծաղկուն դիւղերն ու քաղաքները: Ի՞նչ ողբերգութիւն: Դժոխքը ելել է երկրի երեսը: Կէս գիշերին բազմայարկ շէնքերի փլատակների վրայ աշխատում են կռոււնկները, մայրերն ու երեխաներն անզօր մասներով ետ են առլիս հողը՝ իրենց հարազատներին գանելու յոյսով: Ահա Հենց նոր հանել են փոքրիկ չքնաղ աղայի դիակ, մայրն ու քոյրը միայնակ ողբում են: Յաւից քարացած կիներ միւս բազմայարկի աւերակների մօտ դրուած վրանի առջեւ պատմում է, թէ ինչպէս Հենց նոր հանել են իր երկու եղբայրներին ու դրել դազաղը: Լեւինականի բոլոր փողոցներում ու այգիներում, ուր գեռ երէկ Հնչում էին ծափը, ծիծաղը, երգը, դրուած են անթիւ-անհամար դատարկ դազաղներ՝ գեռ փլատակներում մնացածների համար:

Որն ասես, որը գրես: Ահա եւ ամենամեծ ողբերգութիւնը: Չոհուել են գիւղի գրեթէ բոլոր երեխաները եւ կենդանի են մնացել միայն ասրեցները...

Ամէնուր բացւում են ահաւոր, անպատմելի, ցաւազին պատկերներ, որի անհուն ծանրութեան դէմ գրեթէ անզօր են մարդու հոգին ու սիրտը: Եւ այնուամենայնիւ՝ քաղաքական ու

բնական աղէտների միջով անցած հայ ժողովուրդը դիմացել է աւելի մեծ աղէտների. հազարամեակների հեռուից բերել անհուն գանձեր, որոնք համաշխարհային մշակոյթի անդին երևոյթներից են: Թող շուրախանան շար հողիները, հազարամեակների ժառանգ մեր ժողովուրդը խոր հաւատով ու կենսական ուժով կ'ուզդի իր կքած մէջքը, շարունակելով յաւերժական ուզին: Մենք անցել ենք խաւար դիշերների եւ շարշարանքի տեսիլների միջով, մենք յաճախ մնացել ենք միայնակ եւ տարել մեր ցաւն աշխարհի պազ հայնացքի տակ: Մեր սերունդները երկար-երկար ապրել են մենակութեան սարսափը... Եւ՝ հենց նման դառն օրերին է ծնուել Վահան Տէրեանի սողը՝

ՄԵՁ ՁԻ ՀԱՍԿԱՆԱՅ ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆ, ՄԵՁ ՁԻ ՀԱՍԿԱՆԱՅ ՍԱԹՆ ՕՏԱՐՈՒՀԻՆ:

Աղէտի մէջ Սիամանթոն գրեց իր նշանաւոր խօսքը՝ Ո՛Վ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, ԹՈՂ ԵՍ ԹՔՆԵՄ ՔՈ ՃԱԿԱՏԻՆ:

Եթէ մենք, մենակ ու հայածական, ուժ ենք գտնել, ապրել ու բարձրացել, ապա այսօր գրութիւնն ուրիշ է: Մեզ տանջող ցաւերը հասկանում են շատ ազդեր ու ժողովուրդներ, էստոնիայից մինչեւ Կամչատկա, Նորվեգիայից մինչեւ Հնդկաստան, Հասականում, օգնութեան ձեռք են մեկնում, կարեկցանքի անկեղծ խօսք ասում: Դեռ երէկ ծանր վթարի հետեւանքով զոհուեցին մեզ օգնութեան եկած սովետական զինուորները եւ Հարաւայլավայի փրկարարները: Նրանք զարժան մեր հողի մի մասը, յաւերժ սրբացան մեր յիշողութեան մէջ: Այս օրերին առանձին արեւութեամբ, աչքի են ընկնում մեր ցաւած, վիրաւոր հողի զաւակները...: Միատեղ, միահամուռ, հուսաբական ամբողջութեամբ պահպանում են հոգու զօրութիւնը, բոլորը՝ Աբարատեան գալտից մինչեւ անհունօրէն շտայլ ու կորովի Արցախը: Մեզ են հասնում Սփիւռքի բազմահազար հայերի՝ մեծերի ու մանուկների հարազատ ձայները:

Իմ գառնացած, յաւերժ վիրաւոր եւ յաւերժ կենսունակ հող, իմ մայր ժողովուրդ, բոլորի հետ միասին ես էլ դիմում եմ քեզ: Ուզդի՛ր ահաւելի ցաւից ճկուած մէջքդ, շարունակի՛ր կատուցել արեւային քաղաքներ ու աւաններ:

Հայաստան երկիր, քեզ վիճակուած է յաւերժական ճամբայ, կ'անցնեն տարիներ, նորից նոր կը ծագկեն մեր արեւային հովիտները, կը ծնուեն բազմահազար արեւորդիներ, նոր, ուժեղ եւ առնացի սերունդներ... Գայիք հազարամեակներում կը քայլեն գանդրաւեր ազանների շարքերը, եւ անպարագիծ կը լինի հայ սերմնացանների թիւերի շարժումը: Քեզ սպասում է խորհրդաւոր ու զեղեցիկ գալիք, քանի որ սուրբ է քո ուզին եւ պատկզ վեհ... Արդար ու ազնիւ են քո յոյսերն ու երազները:

ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱՋԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԵՇՏԱԿԸ

1988 թուականի մեծ երկրաշարժից
զոհուած Հայ երեխաների յիշատակին

Երկու տարեկան այս հայ երեխան
Այդպէս էլ մնաց... երկու տարեկան.—
Սուսկայիք տեսաւ մի տարեկանում,
Երկուսում՝ զոհուեց Ջաշուռ ւառնում.
Ջոհուեց ու թաղուեց, բայց... չմահացաւ,
Վիրաւոր սգուոր հրեշտակ դարձաւ
Եւ սաւառնում է հիմա երկնքում,
Մեզ յառած աչքերն իր սեւ ու տրտում...
Մաւառնում է նա, ու նրա տեսից
Դաշոյնն ընկնում է դահիճի ձեռքից,
Չար մարդկանց սրտերն իսկոյն մեղմանում
Եւ գազանները... եզնիկ են դառնում.
«Հայաստանն է սա»,— ասում են նրանք,—
Տեսնո՞ւմ էք լուսէ պսակը նրա,
Ինչ են նրա մեծ տառապանքի դէմ
Մեր կոխներն ու վէները մսեմ...

Հայաստանն է սա — ոգին Յարութեան
Դոմորն՝ Ազնիւի եւ Արդարութեան,
Որ իր արիւնն է տուել դարէդար
Ամէն մի ազգի պայքարին արդար:
Կարո՞ղ էր մէկին Արարիչը մեր
Պարգեւել այսֆան ցաւ ու դառնութիւն,
Եթէ նա մի նոր Մեսիա չլինէր,
Չունենար մի սուրբ Առաքելութիւն...
Սե ոյս ու շարիք մի պահ մոռացած,
Ասես մի մարմինն ու հոգի դարձած
Այդ հրաշքին են նայում միասին,
Ինչպէս մոզերը՝ Աստղին Յիսուսի...

ԳԵՈՐԳ ԷՄԻՆ

Դեկտեմբեր 1988, Երեւան

Կ. ՍՈՒՐԵՆՆԱՆ

**ԲԻԲԼԻԱԿԱՆ ԱՂԷՏ,
ԲԻԲԼԻԱԿԱՆ ՅՈՑՍ**



Հայաստանից շորս հողի Դեկաներին հրաժարուած էինք Յունաստան եւ Կիպրոս: Հրաւերի մտայնացումն իսկ, իր շարժառիթով ու նպատակով, գեղեցիկ էր ինքնին. շորսս էլ Աթէնքում ծնուած նախկին յունահայ՝ պատմաբաններ Հրաչ Յարթիկեանը, Սիմոն Գրքաշարեանը, կոմպոզիտոր Յարութին Դելլալեանը եւ ես, հայրենազարմուկուց ջառտաուն տարի անց որպէս հայրենի մտաւորականներ պէտք է ներկայանայինք մեզ ծնած, մեզ սնած, մեզ մայրենիք ու սում տուած գաղթօճախին: Մեր բարոյական պարաքը պիտի Հաւտուցէինք սմեհաթանկ եղանակով. մեր մանկութեան բնկերներին, նրանց դաւանակներին ու թոռներին պիտի հաղորդէինք հայրենիքի շունջ՝ թէպէտ երկար տարիներ իրարից հեռու ապրած, բայց կէս խօտքից իրար հասկացող հարազատների նման, որովհետեւ մեզ անմիջականորէն հաղորդակից են դարձնում անջնջիկ կապեր, որոնք սրբազործուած են, մանաւանդ, նոյն ճակատագիրն ապրած մեր արագիր ծնողներէ եւ ուսուցիչների յիշատակով, հայեցի ու հայրենակարօտ այն դաստիարակութեամբ, որ մեզ հաստատուելու տուի են նրանք: Տօնականորէն էինք արտազրուած երկու ասեք. Ծրագրուած ու շքրագրուած բազում հանդիպումներ պէտք է ունենայինք: Հանդիպումներ՝ նոյն հասարակութեան հետ, նոյնպէս բարոյական պարաքից մղուած. չէ՞ որ մեր ծնունդով իսկ պարտական ենք նոյն ժողովրդին, որ Մեծ Ողիւնի օրերին փրկից տասնեակ ու տասնեակ հազարաւոր հայ արադրեալներէ ու որբերէ, նրանց մէջ նաեւ մեր ծնողներին: Մտադիր էինք դարերի մէջ խորացող հայ-յունական յարաբերութիւնների մասին պիտական զեկուցումներով հանդէս գալ, մանաւանդ որ ընդ զանգաղէտ Հ. Բարթիկեանը Աթէնքի եւ Հռոմի ակադեմիաների թղթակից անդամ է, հիլլենագէտ Ս. Գրքաշարեանը՝ Հռոմի ակադեմիայի թղթակից անդամ, ու երկուսն էլ ասելիք ունենին նաեւ հին յունական նշանաւոր երկերի իրենց թարգմանութիւնների մասին: Ուզում էինք յոյն հասարակութեանը ներկայացնել Յ. Դելլալեանի երաժշտական հայտուելի եւ ինքնատիպ երկերը: Ես անձնապէս ուրախութեամբ պիտի այցելէի նաեւ իմ բարեկամ Միքոս Ալեքսանդրապուլոսին, որի ճշայնորէն գրքի մթնոլորտը գարձեալ պիտի վերապրէինք միասին, այս անգամ արդէն Աթէնքում, ինչպէս նախապէս էինք գէտ դրքի գրուելուց առաջ, երբ միասին շրջում էինք Հայաստանում:

Բայց հազիւ սկսել էինք իրադարձել մեր Ծրագիրը, ու ո՞վ ճակատագրի հեղձանք, հենց Դեկաների Դին բուն իսկ տօնական հանդիպում էր հայրենիքի ներկայացուցիչներին հետ մի ընդարձակ սրահում, ուր կային նաեւ յոյներ, ու զեւ շփախէի՞նք, որ նոյն ժամերին Հայաստանում...

Երկրաշաճեր: Ազգևայի երկրաշաճեր Հայաստանում: Յաջորդ օրերին յաճախ յայ էինք լինում՝ Է՛, մենք, Է՛, մեր յու նահայ էզրայրներն ու ժողովրդը: Ամեն անգամ իրատու ու թեան ժամին զանգ էին տալիս իրար, ու հետախօսք ոչ այնքան խօսքեր է փոխանցում, որքան հեկեկանք: Անկարելի էր հոգեկան ցնցում յապրել հետո ստացույցի առաջ, էրր էկրանը խոշոր տառերով գուժում էր յու նարեն: Վերջինական ազգա բիրտական Հայաստանում: Անկարելի էր աչցու նքր գուպել, էրր էկրանին տեսնում էինք անհաս առաջի աւերակները եւ մեր ողբացող հայրենակիցներին, էրր իմանում էինք գոհու անձերի զարհուրելի թիւը, էրր ԱՔԼՆը: մտամոլոր քայլելիս կանգ էինք առնում կրպակներին առաջ, ու ր կախուած թերթերի առաջին էջին տեսնում էինք մեծաչիրք սրասնձիկի յու սանկարներ, մանաւանդ այն թեւատարած տարեց հայու հու յու սանկարը, որի տակ գրուած էր. «Ոչ ոք չի կարող արցու նքր գուպել, տեսնելու այս սխալալայ կնոջ ողբը»: Անկարելի էր շարտասուել, էրր հայոց եկեղեցում հոգեհանգստի պահին ամբողջ ժողովուրդը միամայն ՎԻՎԵՐԻՆ Երուսաղէմ էր երգում հեկեկալով, ամեն մէկը վատուած մոմ բոնած ձեռքին, մենք էլ բոյորի հետ: Եւ լինում էին պահեր, էրր հիւրանոցում, գիշերային մեծաթեան մէջ, անհաս առաջիութեան զգացու միջ քարանում էինք յանկարծ: Այդ պիտի մի բուպէի գրել եմ իմ ծոցատետրում. «Ասես մղձաւանջի մէջ լինեմ. ո՛ւր եմ, ԱՔԼՆը՞: եմ պանուում եւ այսպիսի խկապէս յուրե՛ր եմ յառում: Չկամ թե՛ մ ինքս ինձ, գուցէ զարթնե՛մ այս մեղձաւանջից»:

Բայց մղձաւանջը շարու նակ ու մ էր: Ասես զանակ էր խոցում սիրտս, էրր պատկերացնում էի, թէ ինչպէս մէկ բուպէում, տիեզերականորէն աղէտալի մէկ բուպէում աւելի քան հարիւր հազար, հարի՛ւր հազար իմ ազգակիցները թաղուել են փլատակներին տակ, ու հազարաւոր երեխաներ, երեխաներ՝ մանուսանդ՝ մեր անուշիկ մանուկներն ու աղջնակները: Ի՛նչ զգացին վերջին վայրկեանին: Երեւի կարծեցին՝ աշխարհակործան պատերազմն է սկսուել: Աւելի քան կէս միլիոն էլ անօթեւան է մնացել այս ցուրտ ու թոյն ձմրանը: Դարձեալ հազարներ, տասնեակ հազարներ, հարիւր հազարներ, դարձեալ միլիոն՝ աղէտից հարուածուած, դարձել մեր հնամենի կազնին շանթահարուած, ճիւղակուտոր: Ինչ մեղքս թաքցնեմ, հետո ստացույցի էկրանին արդէն շարագուշակ էին թուում մեր հայրենի յեռները, որոնց գոգքն ենք հիւսել բանաստեղծական խօսքերով ու երգերով, յարագուշակ ու քարօրէն անտարբեր, նոյնիսկ կարծես իրենց բնակէրում թաքու նօրէն գասաղիր: «Մարդիկ, որոնց մտացել է Աստուած խոշոր տառերով վերնագրել էր մի յու նական թերթ իր հազարդում: Իսկ իմ ծոցատետրում գրել եմ. «Անիծուհի՛ս գու, Աստուած ես, Բնութիւն ես, Ճակատագիր ես թէ ինչ ես, ԱՆԻՄՈՒՆԵՍ ԴՈՒ»:

Եւ, սակայն, միտթարութեան ու յոյսի մի շող սկսեց նակ պլպլայ այդ մղձաւանջում առաջին իսկ օրերին: Մարդկային կարեկցանքի ու համերաշխութեան շողը: Այդ նոյն օրերին սեւ-սեւ ամպեր կախու եցին ԱՔԼՆի վրայ, յաճախակի թափում էր տեղատարափ անձրեւ, նոյնիսկ հեղեղուեցին շատ փողոցներ, գետ զարձան, բայց յոյն ժողովրդին յուզող գլխաւոր հարցը, տեսնում էինք, հայոց զլխին կեանք զրիտական» աղէտն էր, հայոց բիրտական ողբերգութիւնն ու վիշտը: Ամէնուրեք, էրր իմանում էին, որ Հայաստանից ենք, ով էլ լինէր՝ ծանօթ ու անծանօթ, մտաւորական, ասքսիի վարորդ, մատուցող, ոստիկան, պատահական անցորդ, պատահական այցելու: հիւրանոցում, բուրդը, բոլորը կարեկցանքի ու միտթարութեան ջերմ խօսքեր էին ասում, հետաքրքրում մեր անձնական հարագատներին, բարեկամներին ճակատագրով, թէպէտ ինքներս էլ անտեղեակ էինք ու մտահոգ: Մեր սկանջներում յաճախ հնչում էին «կատաստրօֆի» եւ «ազիլֆոս» բառերը, որ նշանակում են «աղէտ» ու «եղարայ»: էլ չեմ խօսում մեր յու նահայ հայրենակիցներին մասին:



Ընդհանուր վերաբերմունքն այնպիսին էր, որ յաճախ մեզ թու՛մ էր՝ Հայրենի-
 քից հետո չէնք, օտարներով չենք շրջապատուած: Երբեք չեմ մոռանայ, թէ
 ինչպէս յոյն յայտնի բիւզանդազէա ու ճարտարապետ, Սալոնիկի ճամայա-
 րանի պրոֆեսոր Գ. Դիմիարոկայէտը, որ իր աշխատութիւններու մը շատ է գրել
 նաեւ Հայ միջնադարեան ճարտարապետութեան մասին, անձրեւանոցը գլխին
 բռնած շապակ էր հիւրանոց՝ իր բարեկամ Հայ բիւզանդազէտ Բարթիկեանի
 Համար օգնուալ տուն գնելու իր ծախսով, և թէ նա ուզու՛մ է շուտափոյթ վի-
 րադատեալ Հարազատներէ ժառ՝ Հայաստան: Երբեք չեմ մոռանայ այն պահը,
 երբ հիւրանոցի իմ սենեակում, որի դուռը կիսաբաց էր մնացել, ականջիս էր
 Հասնում յոյն Հատարարար կանանց մայրը միջանցքից. ախու վախով խօսում
 էին Հայոց վշտի մասին, կարծես իրենց վիշտը լինէր, եւ յանկարծ նրանցից մէ-
 կը ասաց՝ Բայց քաջարի ժողովուրդ են Հայերը, հերոս ժողովուրդս:

Հենց անմիջապէս էլ սկսուել էր ազէտեալ Հայաստանին Համընդ Հա-
 նուր օգնութեան կազմակերպումը Յունաստանում: Եպաւրոսթիւնս այն-
 պիսին էր, որ կարծես բոլոր յունահայերը իսկոյն այդ գործին էին լծուել:
 Նուիրատուութիւններն արդէն Հասնում էին ամէն կողմից՝ թէ՛ գրամական,
 թէ՛ իրեղէն: Մի յոյն ձեռնարկատէր, յիշում եմ, ցանկութիւն էր յայտնել երեք
 Հազար բրդեայ ծածկոց ու զարկել անմիջապէս:

Բայց պարզուեց, որ միայն Յունաստանը չէ, ամբողջ աշխարհը Հենց
 առաջին օրերից շապում է օգնութեան փութալ ազէտեալ Հայաստանին:
 Անկեղծ ասած, դա չմեղուցիչ անակնկալ էր: Երբ Բարթիկեանն ու ես, յունա-
 Հայ թեմական խորհրդի նախագահ Վ. Աղասեանի հետ, այցելեցինք սովետա-
 կան դեսպանատուն եւ ՏԱՍՍԻ Հաղորդագրութիւններից մանրամասն իմա-
 ցանք, որ ամբողջ Սովետ. Միութիւնն է շտապում օգնութեան, չէ, զարմա-
 ցանք, թէպէտ դարձեալ փղձկացիներ յուզում երկից: Զգարմացանք, որովհետեւ
 դիտելինք, որ այդպէս էլ պիտի լինէր, յիշեցինք Տաշքենդը, յիշեցինք Չեռնո-
 բիլը: Բայց ամբողջ աշխարհը յանկարծ: Դա մի զարմանալի, աննախընթաց,
 նոյնիսկ տարօրինակ, նոյնիսկ խորհրդաս որ երևոյթ էր թու՛մ: Երբ մի քանի
 անգամ հեռուստացոյցի էկրանին տեսնում էինք այդ երևոյթը տարբեր եր-
 կրներէից կենդանի պատկերներով, տեսնում էինք ու չճանաչում իսկապէս: Ու
 Հենց այդպէս էլ ասում էին՝ աննախընթաց երևոյթ աշխարհի պատմութեան
 մէջ: Ասում էին՝ աշխարհը Հայաստանը դարձել է Համամարդկային Համերաշ-
 խութեան ու դժբարտութեան, եղբայրական սիրոյ էպիկենտրոնը: Միտիմա-
 րութեան եւ յոյսի շողը գառնում էր հզօր ճառագայթում աշխարհի բոլոր կող-
 մերից, եւ այդ շերտ յոյսը շլացնում էր մեր սիրտը, մեր հոգին, ու մեր աչքերը
 դարձեալ լցու՛մ էին արցունքով, մի գառն ու բախտութեան արցունքով, որ
 խառնու՛մ էր վշտի արցունքին: Ու անկարելի էր լծուածել, թէ ինչ է այդ
 երևոյթի բուն նշանակութիւնը, եւ ո՛չ միայն մեզ՝ Հայերիս Համար...

Երբ անցանք Կիպրոս, առաջին լուրքը, որ լսեցինք, այն էր, թէ յաջորդ
 օրը Կիպրոսի Հանրապետութեան պրեզիդենտ Վառլիլուս իր արիւնն է տալու
 Հայաստանի ազէտեալների Համար, իսկ պառլամենտի նիստում օգնութեան
 խնդրի մասին է խօսուելու: Ծանկութիւն յայտնեցինք երկու արարողութիւն-
 ներին էլ ներկայ լինել: Միտիմ ընդատառեցին: Իմացանք, նաեւ, որ Կիպրոսում
 արդէն կազմակերպուած է ու բուռն թափով ընթանում է օգնութեան գործը:
 Նիկոսիայում կենտրոնը նարեկ զպրօցն էր՝ Հայոց եկեղեցուն կից: Տեսանք՝
 սրահներում բլուրներ են դիրուել. ամէն տեսակի Հաղուստեղէն, ուղղակի
 խանութից բերուած կօշկեղէն տուփերի մէջ, սննդեղէն, դեղորայք, Հնարաւ որ
 չէր այդ խճողման մէջ գէտ ցանազանել, թէ ուրիշ ինչեր կան: Փրաջան մեղու-
 ների նման աշխատում էին Հայ կանայք՝ ահկնայք փափկասունք Հայոց
 Սփիւռքի աշխատում էին տղամարդիկ, աշխատում էին Մեկզոնեան կրթական

Հաստատութեան ուսանողները, աշխատութեան օրհրատներ, ինքնուրուշ, գաղափարներ, լցնում հարիւրաւոր, ինչ եմ ասում, մի քանի օրում արդէն թուով երկու հազարի հասան խոշոր արկղեր, կապուած, կնքուած, կշտուած, հասցեագրուած, բնուում մեքենաների մէջ, որոնք ուղղակի գնում էին օգտակար: Աւ գեւ բերում էին ու բերում հազուատեղէն ու ամէն ինչ, բերում այդ փոքրաթիւ գաղթական հայերը, բայց աւելի շատ, բնական է, յայնեքը՝ քաղաքացիները այդ փոքրիկ Հանրապետութեան...

Այնքան պարզ ու սրատու էր պրեզիդենտ Վասիլուի արեւն ապու արարողութիւնը, Հենց ինքը Վասիլու ն' այնքան Համակրելի մարդ: Երբ նա պատկեց ազատ մահաճակատին, նկատեցի՝ կողքի մահաճակատին արդէն արիւն էր սալիս մի մեղրոնեանցի ուսանող, սեւաշեւ հայ պատանեակ: Միւս ազատ մահաճակատներին, պրեզիդենտի Հետ միտմամբ, պատկեցին Կիւրոսի արտոյճապահութեան միտար Գ. Պապադեմուրզի ու պատմաճակատ կիւրոսահայ Համայնքի ներկայացուցիչ Ա. Գալստեանը: Պրեզիդենտ այդ վիճակում անկամ թղթակցների հարցերին էր պատասխանում պարզ, սրբալիր խօսքերով: Նա ասաց, որ բազում տառապանքների բովով անցած, բարձր մշակութիւն ստեղծած եզրայր հայ ժողովրդի Համար ոչինչ չպէտք է խնայել այս անգիտի եւ փորձութեան ժամին, պէտք է օգնութեան հասնել ամէն ինչով, սալ ամենաթանկը մարդու Համար՝ իր արիւնը: Կանգնած էինք ուղղակի նրա մօտ, սեւնում, լսում էինք. կարելի՞ էր չլուզուել: Առանց միջնորդի, յունարէն լեզուով ասացինք պրեզիդենտին, որ պարտք ենք զգում, որպէս Հայաստանից այս պահին ներկայ մտաւորականներ, ի խորոց սրտի երախտագիտութիւն յայտնելու մեր ժողովրդի կողմից իրեն ու կիւրացի եզրայր ժողովրդին: Արիւն մտուց յետոյ զնո մահաճակատին նստած եւ ինքն էլ յուզուած, պրեզիդենտը մտտար բովով գրուցեց մեզ Հետ, ոչ միայն միջնորդների սրտաբեր խօսքեր ասելով, այլեւ բարձր գնահատելով հայ ժողովրդի տոկոսն, ստեղծարար ոգին:

Երեկոցեան պատմաճակատի նիստին, որին ներկայ էինք որպէս Հիւր, նախագահողը նշելով ինչպէս ինչպէս ժողովուրդը արտայայտութեամբ սկսեց իր բացման խօսքը արդէն եւ օգնութեան մասին, որի կազմակերպման հարցով տեղեկատուելու էլ ինչպէս հայ Համայնքի ներկայացուցիչ Ա. Գալստեանը: Աւ գարձեալ. Օ՛, գարձեալ յուզմունքի պահ էր մեզ Համար, երբ նախագահողը, զիմելով պատմաճակատին, խնդրեց յունեկայ յարգել կեանքից անկարճ Հետացած բազմահազար զոհերին յիշատակը շնորհակալ լուսութեամբ: Աւ ամբողջ պատմաճակատը գլխահակ քաղաքացու մի բովէ...

Կիւրոսի փոքրիկ Հանրապետութիւնն իր թաղմ վիշտն ունի, որ զիւ չի ամբուած. կղզու հիւսիսային մարդու մնում է թուրքական գրաւման տակ, զիւ անյայտ է նաեւ գրաւման ժամանակ անհետացած կիւրացի յոյների հակառակորդը: Բնական է, վշտացեալը ամէնից ասալ կը վշտակցի մերձաւորի վշտին: Ան նաստանն էլ իր պատմական ցաւը ունի, որ շատ բանով նման է մեր պատմական ցաւին: Բայց ամբողջ աշխարհի՞ վշտակցութիւնն ու օրհցոր աւելի ու աւելի ծաւալուող աննախընթաց օգնութիւնը, որով գանազան երկրներ, նոյնիսկ պետական մակարդակով, յանձնառու են լինում էակներէն մասնակցել վերաշինութեան վիթխարի գործին: Կարծում եմ, նոր քաղաքական մտածողութեան ու աշխարհի քաղաքական միջնորդների մեղմացման Հետ կապուած ճիշտ բացատրութեան խորքում կայ նաեւ Համամարդկային Հողեր բանական խորունկ մի մղումի նշանաբանութիւնը: Ինձ թւում է, մարդկութեան Համայնական ենթակոտակցութեան խորքերից խօսեց մեծ խիղճը, կթէ կ'ուղէ՞ նոյնիսկ Զգլումը, մինչեւ իսկ իւրօրինակ Ապաշխարանքը՝ այն 20րդ դարի սկզբում ազգակեղ ջեղատպանութեան ենթակուած, բայց երկար ժամանակ իր ծանր վշտի ու իր արգար իրաւունքների մէջ անտեսուած, քաղաքական

Հաշիները թնջու կու՛մ անարդարու ան Հայ ժողովրդի Հանդէպ, որ դարավերջու՛մ, մանաւանդ վերջին մէկ տարու այ նշանակալից զէպրերից յետոյ յանկարծ ենթարկու եջ նաեւ կոյր Քնու թեան ցեղասպան հարուածին: Իսկ նման հարուածը, փառք Աստուծոյ, քաղաքական Հաշիներից դուրս է, ու աւելին՝ Համարեա՛ թէ նախահամական մի անկո նախազգուշացու՛մ է աշխարհի ներկայ իրավիճակու՛մ, որ շատերն են արդէն դնահատու՛մ ապոկալիպտիսի նախօրեակի, եթէ...

Դեռ Աթէնքու՛մ գրել եմ իմ ծոցատեարու՛մ. «Ասու՛մ են՝ երբեք նման երևույթ չի եղել, նման Համամարդկային Համերաշխութիւն՝ օղնութեան փութալու երկրազնդի մի կէտու՛մ աղէտի ենթարկուածներին: Արդեօ՞ք Հայաստանի այս բիրլիակամ կոչուած ազէւր շրջադարձային է լինելու մարդկութեան համար: Արդեօ՞ք Հենց սա էր այն ապոկալիպտիկ յայտնութիւնը մարդկային պատմութեան այս ճգնաժամին, յայտնութիւն, որ մարդկութեանը ուշքի է բերելու:» Զգիտե՛մ, գուցէ միամտութիւն է, թող լինի շուրջ միամտութիւն: Իայց էս ուզու՛մ եմ Հաւատայ, որ մի խորհրդաւ որ իմաստ կայ այս աղէտի եւ դրա յարուցած այս նոր Համաշխարհային երեւոյթի մէջ: Ուզու՛մ եմ Հաւատայ, որ սա մի մեծ ըստ ամենայնի պատմական օրինակ է լինելու մարդկութեան Համար՝ չահամուլութեան, թշնամանքների, դատաւանական սահմանափակուածութեան, պարզ մարդկային յիմարութեան լարերինթոսից դուրս գալու, այն լարերինթոսից, ուր խեղու՛մ են մարդկային հրաշ-Հանձարի ստեղծագործական թոխըները: Զէ՞ որ ուրիշ էլք շուրի մարդկութիւնը այսօր: Բիրլիական Համարուող Հայաստանի այս ԱՂէՏԻՑ գուցէ ծնու՛մ է բիրլիական ՅՈՅՄՆ աշխարհի Համար, ամբանու՛մ է ինքնակործանական սնդու՛նդի եղբին կանգնած մարդկութեան մէջ...

Իսկ մե՛նք, մե՛նք, Հայե՛րս: Պիտի ապաշխարե՛նք մենք էլ, մե՛նք ամենից առաջ: Պիտի ապատուե՛նք մեր մեղքերից, որ շատ լաւ գիտենք բողոքու, մանաւանդ վերջին տասնամեակների մեղքերից, որոնք սպառնում էին արդէն ազգակործան դատնայ էւ, աւա՛ղ, դարձան էլ ժառամը, մարմնաւորուելով այն անխոհեմ ու յանախ յանցաւոր շինարարութեան մէջ, որ մէկ բուպնու՛մ գերեզման դարձաւ մեր մանուկների, մեր եղբայրների ու ջոյրերի Համար: Այո՛, ստոկուն, ստեղծարար է մեր ժողովրդի ոգին: Այդպէս է եղել դարերով, վկայ՝ մեր մշակոյթի հրաշակիրա կոթողները, որոնք ստեղծու էլ են ի հեճուկս մեր բնաշխարհի վեհօրէն զննչիցիկ, բայց նաեւ դաժան բնութեան, ի հեճուկս մեր դաժան ճակատագրին: Այսպէս է այսօր էլ՝ ժողովրդի բուն պատմական ինքնագիտակցութեան խորքու՛մ: Այդ խորքը ի յոյս կլուս անցեալ Փետրուարին. նոր երկունք էր, ուր ժողովուրդը Հանդէս եկաւ Հենց իրրեւ բազմահազարամեայ իր պատմութեան սէր կանգնած ԺՈՂՈՎՈՒԹ՝, ոչ թէ պատահական ամբոյն: Այդ խորքը ի յայտ եկաւ նաեւ Հենց այս աղէտի օրերին այն տոկուն ինքնատիրապետամբ, այն փութկոտ, անձնու՛ր փոխօղնութեամբ, որ նայնիսկ իրենց վրայ զգացին օղնութեան եկած օտարները եւ բարձր գնահատեցին: Այժմ ասու՛մ են՝ գոհերի յիշատակին լուսադոյն յուշարձան կը լինեն ամբօրէն վերականգնուած քաղաքներն ու գիւղերը: Կարծու՛մ եմ՝ մեր բարոյական ինքնամարումով ամբացած ոգեկան վերականգնու՛մը կը լինի աւելի մեծ յուշարձան: Ազէւրից ծնուած մեր ՅՈՅՄՆ էլ դա է: Հաւատա՛նք...

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԷՆԵԱՆ

ԴՈՒ ԱՆԽԻՂՃ, ԱՆԽԻՂՃ...



Ա՛խ, էլ նոր խոցի տեղ չունէր սիրտս,
 Սիրտս լցուած էր խոցերով յրիւ...
 Աստուած կոչուածը այդ ինչքա՛ն բիրտ էր,
 Այդ ինչքա՛ն նենգ էր ու չարախոհի,
 Որ գարկեց նորից իմ սրտին, գարկեց
 Ու նորից ինձ սեւ կրակով խարկեց,
 Ու նորից, ա՛խ, ինձ դժոխք ուղարկեց...
 Ինքը վերելու՞մ... Հոգատակ գարկեց,
 Մի բուռ շէն տունս աւերակ սարքեց,
 Խմեց արցունքս դելի պէս ծարաւ...
 Անաստուած աստուածն, ախ, այդ ի՞նչ արաւ:
 Ինչո՞ւ իմ մենիկ աչքի լոյսն առաւ,
 Առաւ, ա՛խ, առաւ տուեց հազար ողբ,
 Առաւ, ա՛խ, առաւ տուեց անթիւ որբ.
 Առաւ ու տուեց մարդիկ տանջամահ...
 Ա՛խ, ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ հիմա:
 Ո՞նց կարողացաւ քմայքով ազատ
 Խլել ինձանից այդքան հարազատ...
 Ո՞նց կարողացաւ խլել խլուածից,
 Ո՞նց կարողացաւ փլել փլուածին,
 Ո՞նց կարողացաւ, ա՞նց կարողացաւ...
 Ես, որ ունէի մի խինդ, հազար ցաւ —
 Ո՞նց կարողացաւ մի խինդն էլ մարել,
 Վէրքերիս նորից վէրքեր գումարել,
 Ո՞նց կարողացաւ, ա՞նց կարողացաւ:
 Հիմա հասկացայ, հասկացայ, Աստուած,
 Որ քեզ չի տրուած
 Ո՛չ տեսողութիւն, ո՛չ լսողութիւն:
 Դու անխիղճ, անխիղճ, դու անսիրտ տկար.
 Դու քար ես, դու քար,
 Գերեզմանի քար:

ԱՌԻՊՎԻԳ ԴՈՒՐԵԱՆ

Ս. ՍԱՐԳՍԵԱՆ

**ՀԱՅՈՑ ՎԻՇՏԸ
ԱՆՀՈՒՆ «ՄԻ ԾՈՎ»**

Սատար լիճնի՛ իրար, յուսայնութիւնը թող բուն լղձի մեր
սրտերում, մեր վիշտը տանեն՛ տղամարդու պէս:

ՍՍՍ ՍԱՐԳՍԵԱՆ

ՄԳԻՏԱԿ...

Ուղղաթիւրը մեր խնդրանքով ցածրացաւ, գնում է գիւղէ գիւղ... Սպիտակ
ծածկերով աները սափակել են, նստել գետինին, անտէր մնացած անասունը՝
հաւ, ուխտար, տուար, մոլորուած, անկեր – անջուր, գէւ-գէն է վազում...
Վերհեւեց երեսում է:

Մարերը թիթեւ ձիւնել են. թիթեւ: Բայց եւ այնպէս Դեկտեմբերն է, սա-
րերը՝ աչլոր, աները՝ փլուած: Մարդ ենք փնտում ու չենք գտնում, չկան.
սարսուռում եւ սամայութիւնից, բայց չի կարող պատահել, որ բոլորը... Վերջա-
պէս նկատում ենք՝ ծուարել են գէղերի մօտ: Մի քանիսը վազում են բաց անդ,
մեռող անում թէ՛ իջէք... Յետոյ կ'իջնենք, իսկ այժմ ուղղաթիւրը գնում է վի-
րտա որնների յետեւից:

Սպիտակի վրայ ենք... Վերջապէս հարազատացաւ անունին՝ փռից
սպիտակ է ամբողջովին: Թոււմ է հազար-հազար ուսմր է ընկել քաղաքի վրայ,
թոււմ է ոչ մի տողի անդ չուրի քաղաքը: Չուրի: Մանր փռիչն, սպիտակ ցինկի
պէս ծանր փռիչն կոչուել է ամէն ինչ: Մանօթ շէնքերի անդերում հակայ բուր-
գեր են՝ մրջնակոց յիշեցնող, ու նրանց վրայ նշմարում են մրջնակների նման
գէւ-գէն անոց մարդիկ...

Դարափերջին մենք տեսանք դժոխքը... Ու գարձնայ հազարուոր հայ
մնաց անկացարան, բայց ո՞ւմ տանք մեր խաչն ու հակատաղիբը...

Պատում ենք փռու, ամպերի մէջ, իջնում ստաղիտնի գետ կանային
սուտը դաշտում:

Բժշկական վրան, սպիտակ խալաթներ, բժիշկների տանջահար գէմքեր,
աղիտակների քարացած հայեացք, յուսահատ դատապարտուածութիւն, ան-
հուն ցաս... էլի ինչ-որ վրաններ, փոքրիկ դաշտը շղթայած գինու որներ, կոյս
տոսած կատարֆիլ, դասարի ու լիբը հազարուոր շէր հանքային ջրերի, հաց,
հացի բոքոններ... գիականեր: Սպասում են գաղաղների, որ հայի կարգով թա-
ղեն, գոնէ գաղաղով թաղեն: Այլանդակուած գիակաների գարսակներ... Ջրա-
միջ կեցուածքով, վերջին պահին ծառս եղած Աստուծոյ զարհուրելի անար-
գարութեան դէմ. մեռել չեն, հանգած չեն, համայն բողոք են ու ցատում...

Առաջին խառքերը, որ լսում ենք ողջերից.
— Վրացիների չարը տանենք... էս ոնց հասան, պէծի պէս հասան, էս
ոնց են աշխատում, էս ինչքան են հարազատ...

փրկարար խուճր է աշխատում, ամբողջ շրջապատել է. աւերակներէ տակից ձայն են լսել: Յեկի ու փոշու մէջ կորած աղերքը անցք հն բացել, մէկը սողոսող է ներս-ջանում են փրկել մի կնոջ, որ 'բաշտով ողջ է մնացել թեք բնկած, հսկայ պաննիի տակ: Մարմինն ազատ է, սաքերը՝ գերութեան մէջ: Ջզուշու-թեամբ անցքն են մեծացնում: Կեզարի մէջ կորած, հմայիչ ղեճքով մէկը պառկել է պաննիի երկարութեամբ... կողքին էլի մարդ կայ:

— Հետո կացէք պաննից, ազաշու՞մ եմ հետո, հազի է պահած, կ'իջնի, երկուսն էլ աակին կը մնան, խնդրում եմ...

Հինգն աշխատում են, յիսունը՝ նայում՝ Սպիտակում: Տասն աշխատում են, Հարի բը նայում՝ Լեւինականում: Բայց այդ հինգը կան, այդ տասերը կան, դրանց էլ է մեր ժողովուրդը ծնել... Աստուածային մեր ուստերն ու զուստերը...

Համբերութիւն, զգուշութիւն պահանջող շարժարանք: Ներսի տղան մեծ ու փոքր քարերի կտորներ է փոխանցում զուրս, պատկած բնկերովը, աթոռի ոտ, ինչ-որ շորեր, բարձեր, ցարգած հայելի ու մէկ էլ անմիտ մնացած յախճապակեայ մեծ բաժակներ... Երկրորդ յարկի բնակարան է եղել. տիկինն իր բնակարանում է մնացել, թշնամի դարձած սեփական իրերի մէջ: Վզի թանկարժէք զարդն է ուղարկում, նշանի մատանին... Փոխանցում են մօտիկ կանգնած ամուսնոյն, յանդիմանական զլուխը ամտմբացնում է, ամաշում է, աչքերից թափող արցունքներով երեսի փոշու հաստ շերտը ցեխ սարքում...

— Այ կնիկ, էս ինչ էս անում զու ինձ հետ...

Անցքից սղոց են ուզում, յետոյ մեկի քաշելու արջան, յետոյ արջան, յետոյ էլի ինչ-որ դործերներ ու նորից քարեր: Տղաները շարք են կազմել, ձեռքից ձեռք են փոխանցում այդ ամէնը, որ աւելորդ շարժում չլինի, փուլ կկածը էլի փուլ չզայ... Լարուածութիւնը հասնում է ծայրայեղութեան:

— Ետ ա արէք, ձեզ մատաղ, շուտ արէք, — անզնական աղերսում է ամուսինը:

— Ժողովուրդ, մի քանի բողբ անշարժացէք, խնդրում եմ, քիչ մնաց...

Պատկած երիտասարդն է, սպիտակ ատամներն ու խոշոր աչքերն են միայն մարուր: Գլուխը խոթում է անցքից ներս:

— Ի՞նչ... Աո՛ւր...

— Խմելու ջուր հասցրէք...

Ջուրը յայտնուում է իսկոյն, լցուում բաժակի մէջ, որ ուղարկուի վերաւոր կնոջը:

— Ձէ, — երջանիկ ժպտում է երիտասարդը, — շեղաւ, էսքանը շատ է, ազանութիւն կ'անի սառ կը խմի, կը վնասուի...

Բաժակի տակ թողնում է մի երեք-չորս կուճ: Ազնուական են մեր երիտասարդները, թուճ է ամէն ինչ գիտեն. բարի են, հոգով են իմաստուն:

Տիկնովը հանում են լույս աշխարհ... Երեք օր անց, երեք օրուայ դժոխքից փրկում են... Մի ակնթարթում բժիշկը որսկում է. ազմուկ, ճիշ, լաց ու պատգարակով թոցնում են շտապ օգնութեան մեքենան, ղէպի...

Հազարաւոր մահեր, բայց մի փրկուած կեանք ու այսքան ուրախութիւն...

Մի կեկէ՛՛՛՛՛՛...

Ձիմացայ ժողովրդով շրջապատուած աղաների անունները, հնարաւոր չեղաւ մտնելու: Ասե՛ք ո՞ր մէկի անունն իմանա, ո՞ր մի հերոսի:

Օգտու՛մ ենք հաց ու պարէն բաժանող Ետ բայի ու զղաթիտից, իջնում ենք Սպիտակի գիւղերը: Կանայք լաց-շիւանով շրջապատում են. վրան չկայ, խոտերի մէջ են ապրում, ուսելիքի պակասութիւն ունեն, սաք հագուստի:

— Մեզ մոտացել են, — գանգաւում են տղամարդիկ:

Էս ինչքան ենք մեր ժողովրդին սովորեցնել զեկագարի, կարգադրողի: Ինչպէս էղաւ, որ նոյնիսկ հասարակ որոշում չեն կարող կայացնել աստեղ հրամանի...

ՍՏԵՓԱՆԱՒԱՆ...

Չունեք համեմատարար քիչ է առել, բայց կր տայ, կր լինեն, եթէ ամենաշատայ կերպով չհասնենք Ստեփանասանին: Մի՛թէ եթէ ուր էր պէտք, որ յիշէինք, տեր կանգնէինք: Մի տեղ՝ ամէն ինչի գերակուտակում, միտում՝ ոչի՛նչ:

— Պէտք է մեռնելի՛նք, որ մեզ էլ տիրութիւն անելիք... — կուտընկոմի քարտու գարն է անազանդում՝ ճշմարիտեանը: — Ելնքերը, համարեա՛ր քոյրը, անպիսան են ապրելու համար: Ինչորայք չկայ, անդամներքը պակաս է, բնատախիբները ծուարել են բակերում, իսկ առաջներս ամեն է: Ի՛նչ է լինելու, պիտութիւնը ե՛րբ եւ ինչպէ՛ս է հասնելու, որ նորից տուն կասուցուի: Ձե՛ր որ աների մեծ մասը հարկուոր է հիմնայատակ քանդել:

Կորուստները անդառնալի են, ողջերի մասին մասձենք, մնացածները փրկենք: Այլեւս ոչ մի գոհ: Եթէ ոչ՝ մեղքը մերն է լինելու: Իսկապէս մահացու է, մեր տեմպերը պէտք է խելայեղ դառնան, եթէ չենք ուզում, որ մեր ողնաշարը շարդուի: Ու հարցեր կան, որ շատայ պատասխան են ուզում:

Մենք մեզ ինչպէս ենք պահում, ինչպէս ենք պահելու այս գծոխային քառում: Հասցը Ստեփանակերտում պակասել է, բոքոնք երեք ուսուցում են վաճառել մասնաւորները: Սրա անունն ի՛նչ գնենք: Այսպիսիներով կարո՞ղ ենք դուրս գալ այս փորձութիւնից, կը կարողանանք մեր ազրուկներին խեղդել: Իսկապէս չենք, գրողներին վերջապէս ուժ կը գանե՛նք զպակու:

Կը կարողանանք, եթէ մինչեւ խորքն ըմբոսենք ազգայնաբան:

Կարգուկանոն կը ստեղծենք մենք՝ ինքներս, քաղաքացիներս, մենք՝ հայերս, այսօր, երբ հանրապետութեան հսկայ մի տարածք կործանուել է, երբ հարիւր հազարուս որ մարդ անթիւսան է, երբ այսքան մահ կայ, այսքան յուսալքութիւն, երբ բնդամէնը մէկ շարքով առաջ գողում էինք ամէն մի հայի կեանքի համար, այնպէս չափ թանկ էր ու հաշուի մէջ, երբ պայքարում էինք ամէն մի գիւղ գնացողի շնչի համար, ամէն մի ծննդագալայր վերադարձող արքայազու համար էինք պայքարում...

Տասն օր առաջ ուրիշ էինք, այսօր՝ ուրիշ, այսօր այլ խնդիրներ ունենք լուծելու: Համարեա՛ մէկ միջիտն մարդ պէտք է փրկուի, ծածկ ունենայ գլխին, արժանաւոր հարազատ հողից չկարի:

Ուրեմն կամք՝ երկաթեայ, միարանութիւն՝ իսկական կարգապահում — թիւն՝ ամենախիտ: Արհաւիրք է, ամէն ինչի համար պատասխանատու ենք բոլորս: Յիշենք՝ այնպէս մեզ է նայում: Մեր գէժքն ինչպիսի՞ն է տեսնելու...

Մեզ զգաստացնող, թէկուզ եւ դաժան, ճշմարիտ խօսքեր են պէտք, եւ այդ խօսքը պէտք է ասենք մենք ինքներս մեր լսելիքի համար:

Ճանաչենք մեզ, որպէսզի այս համազգային ողբերգութիւնից դուրս գանք աւելի առնական, աւելի վճռական, էլ աւելի հզօր ու մարդկութեանը պիտանի: Այսօր քարը քարի վրայ դնողն է հայրենասէր, ու հազարուոր մեր բոունջքները բաժնու մուրճն է, որ պէտք է բունեն:

ԼԵՆԻՆԱՎԱՆ...

Մեր հրաչքը, մեր ամենահացուոր, մեր ամենաբողջը...

Ամէն տեղ, ուր եղել եմ, դժոխք է, Լենինականը՝ բազմապատկուած դժոխք... Որքան ինձ յայտնի է, Հայաստանի բոլոր կինոսպորտորները ազգայնաբարձրում են կարանանում են, բազում տեսնելիք, բազում թեմա, բազում դոյն ու կրանդ, բազում ցու ու դարդ...

Շատ-շատ են երկրի տարրեր տեղերից եկածները, արտասահմանցիները: Աշխարհի ու շաղթու թեան կենտրոնում ենք տկամայ, մարդկութիւնը վերջապէս բարի, օգնող ձեռք է պարզել մեզ, մեր պատմութեան մէջ առաջին անգամ: Հասանք որան, բայց... Բայց ի՞նչ գնով...

Շնորհակալ ենք մեր երկրին, աշխարհին, մենք միայնակ այս ծանրութեան սակից գժուար գուրս կր գանք, շնորհակալ ենք, բայց ցաւը նախ մերն է ու ցաւի տէրը՝ մենք: Շիրակն ու Լոսին կաթուածահար են. ամուր պահենք մեր սրտերը. ճակատագրին հակառակ՝ լինենք, ապրենք, գոյատևենք: Կարգուորենք մեր ներաշխարհը ու թոզ բարձրանայ մեր երակներէ արիւնը, կարծրանայ մեր կամքը: Մեզ կարեկցում են, շնորհակալ ենք հազար անգամ, մեզ շատ են կարեկցում՝ յանկարծ շթուշանանք ու սկսենք ինքներս մեզ խղճալ: Տան ամէս մեզ հետեւել են հետուից, հիմա տեսնում են մօտիկից, այժմ շոյափում են մեզ մասնորոշ, տեսնեն ի՞նչ նիւթից ենք սարքած: Ու բեմ թոզ արդարանայ հայոց հանձարի հայր մասին ասուած խօսքը.

Ամէն մարդ չի կանայ կարգայ, իմ գիրն ուրիշ գրէն է: ՔԱՐԱՓ է ՔԱՐ ՈՒ ԿՐԷՆ է...

Աշխարհը մեզ է նայում մօտիկից...
ԸՆԵՐՆԱԿԱՆ. Ու է Հարկաւոր, որ չփռուես գեանին ու գլուխդ քարերովը շտառ: Սողոմ-գոմարա... Կործանուեց մեր ազու հացուրը...

Ձկայ այն ուժը, այն մէկը, որ կարողանայ ամէն ինչ իր ձեռքն առնել ու ինչ-որ կարգ հաստատել: Ձկայ ու չի էլ կարող լինել, եթէ իւրաքանչիւրս չենք ու առաջին հերթին հարաւ գիւ մրեցին, որ միշտ աչքի է ընկել ազգային իրար-ժանապատուութեամբ, որի գաւակները հայոց փառքը սփռել են աշխարհով մէկ: Սասարը լինենք իրար, յուսալքութիւնը թոզ բուն լզնի մեր սրտերում, մեր վիշտը ասանք տղամարդու պէս:

Քաղաքում սննդամթերքի դերակուտակում կայ, հացը թափում է գետին, հացի հետ անխնայ ենք վարում, ուտելիքը ոտի տակ թափուած է, ու մեզ գիտում են... Քաղաքը գետ ջուր չունի, կոյուղին չի աշխատում, մարդիկ լառ են, մարդիկ բնական պէտքեր ունեն: Մտածել է պէտք լառայ...

Հոգեկան ցնցումներից քարացել են մարդիկ, անտարբերացել նայելու հիգիենայի հարցում: Սանիտարական վիճակը ծանր է, եթէ լասենք՝ ահա որ: Ամենակորուկ միջոցներով պէտք է դուրս գանք այդ գրութիւնից, եթէ չենք ու գուժ ցաւին մի նոր ցաւ աւելացնել: Պարագութիւնը կործանարար է, գործը, պարանականութիւնը, աշխատանքն է մեզ փրկողը, լաւագոյն սպեղանին, այսօր եւ վաղը հոգեկան փլուզումներից պաշտողը՝ գործն է:

— Մեր քաղաքը ես չեմ թողնի զնայ... Մալը մերն է, պիտի կրենք...

Դէ, արի լսի էս կնոջը, էս դիւմրեցուն ու կարողացիր արցունքներդ զսպել: Կանգնած եմ զարհուրելի մի շէնքակոյտի մօտ, չընկալուած տասնեակ կտանցեցով. սպասում են, յոյս ունեն, որ կոյտերի տակից հանեն իրենց մեռելներին: Սպասում են, լաց են լինում, խօսում են...

— Պահանջենք հայոց կտաւվարութիւնից Հայաստանում արտրանները արգելին...

— Ուժ լինք մի կտոր հաց տուել, որ էս բանը Երեսնին չեղաւ...

ԵՐՅԻԱՆ... Մայրաքաղաք... Յենարան, յոյս, ապաւեն: Ինչ է թելազրում, ինչ մթնոլորտ է ստեղծուած հանրապետութիւնում, ինչ օրինակ է տալիս...

Այսօր կարեւորը քար առնելն է, քարը քարի վրայ գննելն է: Դատ ու գաստատանը վաղը կ'անենք...

ՍՕՍ ԱՐԳՍԵԱՆ

ՑԱԻԸ ՍԵՂՄԵՆՔ ՄԵՐ ԿՈՎՈՐԳՆԵՐՈՒՄ ԵՒ... ԱՊՐԵՆՔ

... Սեղմեմ գաթ մեր կոկորզներում, հասա-
տարիմ մնամ զծուարութեամբ ապրելու մեր
ճակատագրիմ եւ ապրեմ...

ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՆԱՆ



Ի՞նչ անել, տեղի առ ցառի առիւ, թոյլ
տալ, որ անեղ ողբերգութիւնը քարացնի
սիրտդ ու հոգիդ: Յետո՛յ: Իրանով կա-
րո՞ղ ես մէկին օգուտ տրելի, օգտակար լի-
նել մի տեղ, մեղմել աղէտի սարսափները
ապրած որիւ է մէկի սիւտը...: Յի՛, սիրելի
բարեկամ, եթէ քո ժողովրդի հարազատ
զաւակն ես, ուրեմն ուժ պիտի գտնես քո
մէջ կրկնու նրան բաժին ընկած խաչը:
Նորութի՛ն է մեզ համար զգաւ ու դառ-
նութիւնն: Պատմութիւնը ե՞րբ է շոյել
մեր զլուրը, բայց չէ՞ որ մենք միշտ բարձր
ենք պահել մեր զլուրը: Զարմանալի է.
եթէ հաւատանք մեր պատմութեան տա-
րեղիւններին, մեզ բաժին ընկած հասա-
րակական ողբերգութիւններին յաճախ
են ուղեկցել բնական աղէտները: Մենք
այսպէս ենք թրծուել, այսպէս ենք հասել
քառերորդ դարին, կորուստների ու ող-
բերգութիւնների առումով ամենատեսա-
կանին...

Մենք, այո՛, մի պահ կարկամեցինք
ցառի առիւ, քարացանք ճակատագրի
զաժանագոյն հարուածից: Մեր արեան
մէջ ու հոգիներում պէտք է արթնանայ
ապրելու, յարատեւելու, լուսաւոր երազի
համար մաքառելու ոգին: Սերունդներով
է յարատեւում ժողովուրդը: Աղէտի բոթը
նոր էր ընկել, եւ համայնարանի ուսա-
նողները՝ տղայ թէ աղջիկ, արդէն ոտքի
վրայ կին, պատրաստ՝ մեկնելու աղէտի
վայրերը: Եւ համայնարանի՞ ուսանող-
ները միայն: Նման ողբերգութիւններ
կինոնկարներում ու զբոսերում տեսած
երիտասարդ այս մարդիկ ի՞նչ արեու-
թեամբ են տանում իրենց խաչը: Որտե՞ղ
են սովորել... Ի՞նչ հպարտութեամբ են
պատմում եղբայրական Վրաստանի օգ-
նութեան մասին: Ի՛նչ, միայնակ չենք: Եղ-
բայրական ձեռք են մեկնում Միութեան
միւս ժողովուրդները, քաղաքակիրթ աշ-
խարհի ձայնն է լսելի դառնում:

Եկէք, ուրեմն, սեզմեք ցառ մեր կո-
կորզներում, հաւատարիմ մտածք
զժուարութեամբ ապրելու մեր ճակա-
տագրին եւ ապրենք, ի հեճուկս մեր գա-
ժան ճակատագրի եւ ո՛չ միայն ճակա-
տագրի... («Սովետական Հայաստան»,
11 Դեկտ. 1988):

ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՆԱՆ

Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Յնցուեց մեր ոգին, մեր ներաշխարհը,
 Հոգու երկրաշարժ եղաւ այս տարի,
 Յնցուեց մեր հոգը, մեր լեռնաշխարհը,
 Մատնեց ամէն ինչ աւերի, մահի:

Դեռ մեր Զարթոնքի լոյսը չտեսած՝
 Երկրային ցաւից պատռուեց հոգը:
 Վերակառուցման այգը չծագած՝
 Մեր հիմքը խախտեց չարածին հողմը:

Եւ ստորգետնեայ ցնցումից ահեղ
 Փլատակ դարձաւ բերդ, դպրոց, պալատ.
 Մայր Հայաստանն է սեւ զգեստ հագել,
 Ախուրեանն է լուռ խփում պատէպատ:

Աւերակների սեւմութ ընդերքից
 Ողբի ու ճիչի ձայներ են լսում,
 Տնում է հողը բացուխոր վերքից,
 Փլատակներն են արիւնով սնում:

Ոտքի է ելել մի ողջ ժողովուրդ,
 Համայն աշխարհն է օգնութեան եկել,
 Աւերակների ծալքերից մութ-մութ
 Պայթում է մի ճիչ. «Իմ որդո՛ւն փրկէ՛՛՛»:

Խլացել են զանգերը Սուրբ Փրկիչի
 Անբուր եւ անլոյս Գիւմրի փառամում,
 Մաքառում են ուր զինուոր եւ բժիշկ,
 Օղաչու կայ, որ բիւր կեանք է փրկում:

Վիրաւոր հոգի երախին անտես
 Կույ են գնացել Պառնի եւ Նայրանդ
 Ո՞ւր ես, իմ Սպիտա՛կ, քաղաք քարտես,
 Ո՞վ կործանեց քեզ, գիւղ իմ Սարահարք:

Գուգարաց իմ տուն՝ իմ Կիրովակա՛ն,
 Քեզ սփռվանքի ի՞նչ խօսքեր ասեմ,
 Իմ սուրբ յեռնաշխարհ՝ իմ Ստեփանաւա՛ն,
 Քո անհուն վիշտը ես ինչպէ՞ս կիսեմ:

Ջահերիդ հանդէպ փռք է քո Հոգը,
 Ես քեզ ի՞նչ մահերգ, «Անտունի՛» եիւսեմ,
 Դանքէական է Հայոց դժոխքը,
 Արարա՛տ, ոգրդ ես ինչպէ՞ս լսեմ:

Խռոված իմ հոգ, քեզ ի՞նչ պատահեց,
 Ինչո՞ւ ցնցուեց ընդերքը քո սուրբ,
 Աշխարհի ցա՞ւն էր ուռնացել քո մէջ,
 Թէ՞ ազգիս վիշտն ու ցասումը անգուսպ:

Դէ՛, ասա՛, հոգ իմ, ինչո՞ւ ցնցուեցիր,
 Անարդարութեան քո ծանր բռնի՞ց,
 Այս կոյր աշխարհի կոյր լուսփիւնի՞ց,
 Թէ շատ էր շիկնել լաւան ընդերքիդ:

Ինչի՞ց, ա՛խ, ինչի՞ց այդպէս ցնցուեցիր,
 Այդպէս ցնդուեցիր՝ ելած քո հունից,
 Մենք ծանօթ էինք քո կատարութեան
 Դեռ էն, էն գլխից՝ Մոզից... Անիից:

Ջէ՛, չէ՛, չե՛նք կարող մենք երբեք հաշտուել
 Երկրաշարժներին անցողիկ եւ մութ,
 Մենք պատրաստ ենք միշտ քեֆներս քշտել,
 Որ Դու յաւերժես, իմ Հա՛յ ժողովուրդ:

ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Գ. ԱՐՇԱԿԵԱՆ

ԽԱԶԵՐՆ ԱԻԵԼԱՑԱՆ

ՄԵՐ ՀՈՂՈՒՄ

Ինձ բուժ է. թէ Աստուած երկրաշարժով չափեց մարդու մէջն եզած ուժն ու բարոյականութիւնը եւ կործանման արհաւիրքով իմաց իր արարելից սարսափեց:

ԳԵՈՐԳ ԱՐՇԱԿԵԱՆ

Յաջորդ օրը լուսարացին Հասանք Աննինական: Երկու ժամուայ ճանապարհը մի գիշերու մ անցանք անիսս: Մեր երեսակայութեան մէջ ու զուժ էինք զձաղբի կաւարու անը, սակայն անդ Հասանքուն պէտ շքացու երեւակայական սարսափելի պատկերը, որովհետեւ իրականութիւնն աւելի սարսափելի էր, քան մարդկային անասնման երեսակայութիւնը:

Մարդիկ լուս են, լաց ու կոծ չկայ: Քաղաքը կործանուած է, Հարազատներին կորցրել են, բայց ոչ ոք զլուխը չի կորցրել: Ինձ թուում էր, թէ կենդանի մնացածները խննթացած կը լինեն ցաւից ու վշտից, բայց ոչ: Գլուխը կորցրած մարդ չկար, խիղճը կորցրած մարդ չտեսայ: Հարիւր Հազարաւոր ողբաւորներէր ի բաբանչիւրը մի Հաւաք խառնուածք էր. մաքուր, գեղեցիկ ուղեքեր, ասես այդ ուղեքերի մէջ չէին փուլ եկել բնական շէնքերը, գործարանները, պալատները՝ Հայնապատ գահիճներէ փայլով: Ասես այդ ուղեքերի մէջ չէին անշնչացել տասնեակ Հազարներ:

Մըմնջացող Հազարաւոր կանանց տեսայ զոճերի ու աւերակների կողքին եւ ոչ մէկի շուրթից անէծք չսեցի...: Եւ շտեայ մէկին, որ աչքը բաց նայէր երկնքին. ի բաբանչիւրի զոճուած մանուկն իր Աստուածն էր: Եւ ամէն մէկը իր հոգում իր մեռած Աստուծոյ հետ էր խօսում Հաւատով: Բնութիւնն ինչքան ուժ, խելք, զուժ է գրել մարդու մէջ, սարսափելի է: Ինձ թուում է, թէ Աստուած երկրաշարժով չափեց մարդու մէջ եզած ուժն ու բարոյականութիւնը եւ կործանման արհաւիրքով ինքն իր արարելից սարսափեց: Աստուած մաս-մաս եզած իւրաքանչիւր Հայի մէջ է՝ սպիտակ սաւաններով ծածկուած ժօր ու մանկանց զոճերի կողքին: Եւ Գիւմրուայ Հազարամեայ փլուած եկեղեցու աւերակների սրբատաշ, սեւ շարերի տակ: Ինքն իր Հաւաքով փլախակներէ տակ մնաց:

Արեւը դուրս եկաւ սովորականի նման, ասես ոչ մի տեղ ոչինչ չէր պատահել: Վերեւում խաղաղ է, բայց Հողի ընդերքում, յանախ հենց մարդկանց ուսերի տակ ցնցումներ են: Մարդիկ չեն զգում, նրանց թուում է, թէ իրենք են զոգում ցաւից ու վշտից: Հիմա նրանք ոչինչ չեն զգում, եթէ անդամ գետինը՝ ճեղքուի յանկարծ ու բոյորին ասանի անդունդը... աշխարհի վե՛րջն է, թէ՛ մեր վերածննդի, աւերակներից գէպի 21րդ դար թուրքի սկիզբը: Ոչինչ չի Հաս-



կացու՛մ: Մայրը կորցրի է ժամկանը, գտել է տիկնիկը ու տիկնիկի հետ է գրուցում: Ամուսինը կորցրի է կնոջը, գտել է գլխաշորը ու գրա հետ է մղկաում՝ գլուխը գետին խոնարհած: Մայրը կորցրի է որդուն, չի գտել աւերակների մէջ, ինչն իր՝ մի գիշերու՛մ ներժակած արձակ մազերի հետ է խօսու՛մ: Խաղաղութեան գրօշակների նման պատշգամբներից սիւնից սիւն՝ ձգուող պարանների վրայ մնացել են կախուած, յորացած սպիտակեղէնը: Կայ ունեւորի յուացք, կայ չբարորի յուացք, բայց մտքրութեան մէջ տարբերութիւն չկայ, բոլորն էլ հասասարապէս մտքուր են յուացուած: Գիւժերցու աւանդական կենցաղն ուրիշ է: Բազարակրթութիւնն այստեղ մայրենի լեզուով է մուտք գործել հեթանոսական ժամանակներից եւ ոչ թէ մէկ ուրիշ տեղից օտար լեզուով ու սովորոյթով: Անիկ աւերակները հանգած են Գիւժրուայ կողքին, այժմ արդէն երկուսն էլ կործանու՛մով հասասար են ու մեր երեւակայութեամբ չբեզ: Արժաններով խոր, ազգային նկարագրով վե՛հ արդի ճարտարապետական յղացումները, որ մարմին ու հոգի էին առել Շիրակի գաղտնափայտու՛մ, հասասարու էլ են հողին: Կանգուն է Գիւժրին միայն՝ սրբաուաշ սեփարեղով տները Զորի բողազում, յասկապէս հին հիւանդանոցները, ցարական զօրանոցները, գրքի եկեղեցիները...: Մնացածը, եթէ աչքի առաջ կանգնած են, մինչեւ չէ՛լ՝ պատերը հազար տեղից ճար են տուել, գրեթէ երկրու՛մ են. ջամին մէջը մտաւ՝ փուշ կը գան: Այդքան թոյլ է այդ կանգուն շէնքերի յարուցած յոյսը: Երբ մեր վիշաք ինչ-որ շափով փարատի ժամանակը, կը լինի երկրորդ փլուզումը, այս անգամ արդէն մեր գիտակցութեան վրայ, ջանի որ շինարարի կորցրած խիղճը բազմապատկեց զուհերի ջանակը: Փլատակների մէջ բետոնը եզունդներով ջանդող մարդիկ տեսայ, ճանգոնէիս արիւնոս մասներից աւազի հասիկներ էին գլորու՛մ փռու հետ, ցեմենտի անորակութիւնից կամ պակասից: Շտապելու՛ց անորակ կառուցեց գիւժրեցին, օտարացա՛ն հա-

բազառ Հոգի նկատմամբ, Հասարկ կորցրեց... Դժուար է հիմա սակ: Թէ՛ այդ Հոգը բարձրութիւն չի հանդուրժում իր վրայ՝ մարդու տեսքով, չէնքի տեսքով...

Պարզապէս բարոյական հիմքը պէտք է ամուր լինի:

Ախտը բնական է ընդամենը հինգ առն է կանգնում, այն էլ՝ ոչ բարձրա-
յարկ: Այս ու այնտեղ էքսկավատորներով քանդում են բարձրաւարկ շէնքերի
աւերակները՝ մարդկանց տակից հանելու: Երբեք չիտեսում այդ պիսի
մի բնակիչի շէնք է ճնշուել: Երբեք չիտեսում: Մարդիկ խառնուած են, իրար չեն
նկատում: Կանգնում են մանկութեանս ընկերոջ՝ Մաշիկ Գրիգորեանի կող-
քին, ձեռքս գնում են ուսին: Մի պահ նայում է ապակի Հայնացքով ու չի ճա-
նաչում: Ինձ յուշում են, որ սպայի բնուանիքը աւերակների տակ է: Մարտա-
փած հետանում են նրա Հայնացքից, աւերակից, Ախտը բնական, ինքս ինձնից:
Բայց ո՛ւր: Մի տե՛ղ է, որ Հեռանաս ու պրծնես: Ամէ՛նուրեք է: Զաջուտի մտտ
դեմքեր բացուել է, աւճալտի կեզեւը յետ է գնացել, Երեսանի կենտրոնական
բուժօպտիկայի գիրեկատը Գլորգի Ստեփանեանը երկրագնդի բացուած կո-
ղից ներս է նայում, սակայն ակնոցների ապակիներից իջող է լուսւմ, սակայն
դու նոցը ջարդում ան ապակիներով է լցուած: Գիւղում տները, հիմնականում
մի յարկանի, փլուել են, գոհեր կան: Սաւաններով փաթաթում, գնում են բեռ-
նատար մեքենան: Մարդ էլ չկայ: Մի երկու տարիքաւոր կին, մի երկու վրա-
ւոր սղամարդ: Մարդ են՝ վշտով Հասարակուած, Հազուստով Հասարակուած
ևւ անմահ: Տառնեակ զոհուածների կողքին սրանք թոււմ են անմահ, մահից
յաւերթօրէն Հեռացած: Միմասի տուն-Քանդարանը սակայն ներսից պայթեցրած
չիննեն, կանգուն, բայց ամէն կողմից պատուած պատեր են: Գիւղի վերեւի
սարերը ճաք են տուել: Գնացքը բեռնատար վազոններով լուցկու տու փի-
նման փուլ է եկել Երբեք հաճուաւ գիւղին չհասած: Զարդում փաղոնի կողքից
միւս գլուխ է գոհու մնացել: Կուչ եկած մի շան թույս անվարան լիզում է միւս
արնոտ գունջը: Ո՛ր էին տանում այդ միւսն, երբ վազոնների վազքը բնդ-
Հատուկ կէս ճանապարհին: Ի՛նչ իմանաս: Աչքերը բացուտու փիւ անում քո-
թի վրայ ջրայնացած, բայց նրան մօտենալ Հնարաւոր չէ: Ոտք եւ ուղւմ
դնել՝ բարձրանալու: Ղէպի խորտակում գնացքը, Հոգը գնում է տակիցդ:
Քար նետեցինք, որ քոթովը Հեռանայ, թողնի միւսն իր մահով մեռնելու: Ձի
Հեռանում, նոյնիսկ գամփոթի պէս կատաղում եւ ատամներ բացած փորձ է
անում մեզ վրայ յարձակելու:

Մի քանի վայրկեանում ամէն ինչ խառնուել է երկրի վրայ, իսկ երկիրը
մնացել առաջուանը՝ պարզ, խաղաղ, արեւը մէջը: Ծանապարհը ղէպի կիրո-
վական-Ստեփանեան, միւս կողմից՝ ղէպի Սպիտակ, փակ է: Ծանեակ բույ-
ղողներով ժայռերից պոկում են կակայ քարերը հրում են ձորը եւ մի բարակ
ճանապարհին բացում, որով գանդաղ անցնում են Վրաստանի շտապ օգնու-
թեան աւստմեքենաները: Երկաթուղով Հնարաւոր չէ գալ ու գնալ. կամուրջ-
ներից շատերը, մէջքները ջարդում ան, շոքն են ձորի մէջ: Ծանապարհաչինու-
թեան միմաստի տեղակալ Ռոզմիկ Գարանեանը յոյս է տալիս, որ մի քանի
ժամից լրիւ բաց կը լինի ճանապարհը: Մութը վրայ է տալիս, սարերը աւազ-
նանում են, դառնում սարափիլի: Զորերի վրայ կախուած ժայռերը, թոււմ է
ուր որ է փուլ կը գան գերմանական, ճապոնական մեքենաների հոնդի նից:
Լու սացնում ենք փակ ճանապարհին: Յետոյ գանդաղ գնում ենք Սպի-
տակ, որը չկայ այլևս: Թշնամու ձեռքով աւերուած քաղաքներ ու գիւղեր ենք
տեսել պատերազմի ժամանակ նկարահանում: Բայց սա ուրիշ է, քաղաքը
ճնշուել է, սակայն տեղի տակն է անցել, միայն տանիքներ են մնացել Աստու-
տչի առաջ: Եւ այս աւերմունքին ոչ ոք չի մասնակցել՝ ո՛չ Թշնամի, ո՛չ բարե-
կամ, ո՛չ օտար, ո՛չ Հարազատ: Թէ ինչ է բնութեան ու ժր՝ մարդ այստեղ կարող

է տեսնել միայն, ոչ մի տեղ այս ու մի կործանում չկայ, եւ ոչ մի տեղ այսքան սեւ, խոշոր աչքեր չկան աւերակների վրայ, որոնք ուզում են փրկել հարազատներին: Մարդ չկայ, աչք է համատարած՝ սեւ, սպաւոր աչք, իսկ օդ ու մ՝ հաղաբաւ որ ազուաւներ...: Ար աւերակը որ տէր շուրհի՝ յարձակում են վրան: Ոչ մի խուճապ, ոչ մի իրարանցում, ասեա զարեւոյ իրար կողքի ու իրար մէջ են ապրել մարդն ու երկրաշարժը, մարդն ու զօ՛ր, մարդն ու արհաւիրքը, մարդն ու կործանումը: Ճակատագիրն իրենց նկատմամբ խորթ, իրենք ճակատագիրն շարու նակ հարազատ: Էս ի՞նչ տեսակ են ծնուել սրանք: Մարդ արարածի՞ց են սրանք ծնուում, թէ՞ Աստուծոց:

Ոչնու թեան հասած վրացիների ձեռքն է համբուրում մի ծեր կին՝ ոտից գլուխ արորում, փոշուտ, քանդուած տան աւերակներից զուրս գալով: Համբուրում է արժանապատուութեամբ, սգաւոր գէմքը ներսից լուսաւ որելով: Նախ շնորհակալութիւն, յետոյ՝ հանէք մեր գոհերին: Աշխարհից եկած մարդիկ ասացին՝ այդ քաղաքակիրթ ներազդացողութիւնից բանական մարդը կարող է ինչպէս արուել այս կործանման ու այս աւերակների մէջ: Ծնորհակալութիւնը վերածննդի եւ ազգի փթիւարի ու մի վկայութիւն է:

Երկու անաւոր ցնցում. մէկը տակից, որը խաղաղութիւն է ատիճանաբար, իսկ միւսը՝ մեր միջից, մեր վերեւից, մեր կողքից, որը դժուար թէ խաղաղութիւն ասանց բարձր դիտուկցութեան եւ հետատեսութեան: Իրանց շնորհիւ միայն հնարաւոր կը լինի եւ ոչ թէ մնալ աւերակների տակ, այլ աւերակներից թոխք կատարել գէպի ՉՆրդ դար: Թէ չէ մեր ժողովրդի համար այս դժբախտ դարում կը մնանք մեր վշտի հետ, եւ քաղաքակիրթութիւնը ասով կ'ընկնի մեզանից: Աշխարհը մեռք է մեկնել մեզ, մեռք են մեկնել մեր հարազատները Սփիւռքում...: Ժամանակակից գիտութեամբ մենք պէտք է ոտքի կանգնենք, ժամանակակից տեխնոլոգիայով պէտք է յառնի արդիւնաբերական միտքը, ժամանակակից աչքերով պէտք է նայենք աշխարհին ու մեր ճակատագրին՝ աւերակների տակ թողնելով մեր իւրաքանչիւրիս մէջ եղած յետամնացութիւնը:

Մնում է հաւատաւորի շուրթերով ասելացնել, որը լսեցի էջմիածնում. «Տէ՛ր, չարութիւնդ քափցրու իմ հաւատից, Տէ՛ր, չարութիւնդ քափցրու իմ հաւատից»: Այսպիսի հաւատով վաւուած մտե՛րը, որոնք հազարների են հասնում, լուսաւորում են զարթումաւորը եւ մեր ներսի ուժը նաեւ՝ արժանափայլ ապրելու եւ կատուցելու համար:

ԳԷՈՐԳ ԱՐՇԱԿԵԱՆ

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՏԵՍԻԼ ՅԱՅՏՆՈՒԹԵՆԱԿԱՆ



Այս առաւօտ,
 ողջունեցի ոգեշաւիղ տեսիլով,
 խորշակահար ոստաններն իմ հայրենի,
 որ յարեցան աչքերուս՝
 կենսածպիտ ջերմութեամբ,
 իր դարաբայր մոխիրներէն վերածնած՝
 ինչպէս Անին,
 վայելչագարդ եւ արքենի...

Եւ դիտեցի զարմանայայտ գեղումով
 հայրենական ողջ երգիչներն աւերակ,
 որ կ'երգէին ոգեբարբառ ցնծութեամբ՝
 գաղջ արեւուն տակ զարնան,
 մռցած շունչը մայրցին,
 ոռցած օրհասն ահաւոր՝
 տարեշարժ ցնորքներուն բնութեան...

Թափառելով փլատակ առ փլատակ,
 ես կանգ առի,
 իմանալով ձայներ զուարթ,
 որ կու գային
 շիրմահայեաց կամարներէն դեռ կանգուն՝
 տաճարի մը կիսափուլ,
 եւ քայեցի զաւիթն ի վեր
 այդ մեծաւոր տաճարին,
 որուն խոնաւ որմերուն տակ
 ես տեսայ
 ոգեմարմին նահատակներն հայրենիքիս,
 որոնք քափօք առ քափօք,
 հողմանուագ կ'երգէին
 մեղեդիներ Յարութեան...

Հոգեգուարն բերկրութեան մէջ
կիսակործան տանարին՝
կ'ազօթէին բազկատարած
նզիներն իմ հայրերուս.
մինչ, շարական առ շարական,
հովը մեզմիւ կ'արտաշնչէր՝
տառապաններ հազարամեայ
եւ կարօտներ դեռ առկայծ՝
բարտիներու հայրենաշուրթ ազերսով...

Որք հանգեցան ոգեշշունջ ձայներն ամէն
եւ յանձնեցին զիս կրկին,
անաշխարհիկ խորհուրդներով ստուերամած՝
զամբանաբոյր յուրքեան մը խորշերուն՝
երկինքն ի վար
իջաւ շոգ մը աստղաթել.
Հայ Հոգիմ էր,
որ ձուլուելով հաւատալոյս ցոլներուն
լուսաւորչի անլուսանցոյց կանթեղին՝
հծծեց ձայնով յորդորաշունչ.

— «Մի՛ քափառիր սգահանդերձ՝ խոհերով
այս վայրերուն մահաշուք,
ուր ամէն մէկ աւերակ
շիրմաբարն է
նահատագրի դիպուածներուն ազիտաբեր
եւ ցաւերուն երկրային...

Մի՛ ոգրերգեր կորուստն անդարձ՝
հայրենիքի եզրայրներուդ նահատակ,
եւ մի՛ փնտոեր անունց հոգին ազուական՝
նայուածէին մէջ աւերակոյտ շէնքերու,
կամ ոգրակոծ հեւքին մէջ՝
եզերնայուշ պահերու...

Կ'ապրի՛ն անոնք
ձայներուն մէջ բնութեան
եւ գոյներուն երփնաշոգ,
մեր արտերուն կեանք եւ բերկրանք ներշնչող՝
իբրեւ անձրեւ օրհնաբեր:
Կը թաւալին դաշտերուն մէջ հայրենի՝
ցորենաշուրթ երգերով.

կը վարարին մրգաստանէ մրգաստան՝
յորդ քաղցրութեամբ մրգահասի...

Հայրենական հողի սրտէն ազրերակուող՝
հագարակնեայ մեր երգերուն
թախծակարկաչ հեծֆն են անոնք.
մեր դարաւոր տենչանքներուն՝
մշտասօսափ շունչն են տարփոտ.
կ'ոգեշնչեն մեզ անոնք,
հայ հաւատփի ընդերքներէն վերածաղկած՝
իբրեւ դափնի՝ Աւարայրի...>:

Խնկամշուշ քայերով
երբ հեռացաւ Հայ Հոգին՝
եթերն ի վեր աստղամած.
Էւ մարեցաւ երբ նաեւ
ոսկետժոյն ցոյքը վերջին՝
ոգեշաւիղ տեսիլքին,
նո՛ր զգացի,
որ ես անթարթ կը խոկայի
Յուշամտորան մէջ ամայի,
ուշքս յառած՝
Նահատակաց անիւններուն նուիրարոյր.
ուր ցուրտ օր մը Դեկտեմբերի
կ'ազօթէի
հոգւոյն համար կարեվէր՝
ազիտահար գաւակներուն հայրենիքս...

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Պետ է սպագային բողկնեմ մեր այն շորե-
 տանի բարեկամների յիբաւի հրաշք արարեանի
 նկարագրութիւնը. որոնք աղէտի վայրերում
 հարկաւոր մարդկանց կհամէ փրկեցին: Ար-
 տակարգ արարածներ էին այց շները՝ խելացի ու
 բարի այնքով: Ինչպիսի՞ ծանր արցունքներ
 յափեցին մազակալած ղեմերով այն տղամար-
 դիկ. ովքեր շունչը պահած. հետեւում էին, թէ
 շները, քաթերի վրայ օտորուելով. ինչպէս ետ
 գտնում այն տեղը. որտեղ զեռ մարդկային
 կեանք էր տրոփում: Աշխարհը կ'իմանայ եւ այն,
 որ իրքինց առաջնութիւնը կատարելուց յե-
 տայ. մէկ հանրապետութիւնից հեռակալուց
 առաջ այդ շների տէրերը նրանց ման էին տալիս
 Արտական փոզոցում. մեր բազալի բնակիչները
 համարում էին ո՛չ միայն փրկարարներին. այ-
 թի՛ նրանց խելացի օգնականներին:



Երեւ որ ալաղիմիկու Սախարովի հետ շրջա-
 գայեցին համրապետութեանում աւ Լեոնային
 'Լարաբազում: Եղանք. ինչպէս վերը նշեցի. նաեւ
 աղէտի վայրերում: Անտրէյ Դմիտրիւիյը նրկար
 գրուցեց հարազատներին ու մերձատրներին.
 տաճուտեղը կանցնելուց յետոյ վրաններում
 ծուարած մարդկանց հետ: Նա շխարհագաւ ար-
 ցունքները գապել. եւ փլուած զպրոցի աւերակ-
 ներին ցաֆուցրի տեսաւ պայուսակներ. գրքեր.
 տետրեր: Կոսցաւ. վերքեց տետրից մէկը:
 Թեքքեց: Մարեմատիկայի տետր էր: Կարմիր
 թանաճով «Տ» գնահատական կար գրուած:
 Կիտնականը գողունի սրբեց արցունքները եւ
 շուրջը կանգնած բոլորին դառնալով՝ խնդրեց
 յիշատակի համար վերցնել տետրը: Երկար լուռ
 մնալուց յետոյ սասց. «Քաղաքը մի կերպ կը վե-
 րականգնենք: Հաշուի կ'առնենք դառն դասերը:
 Ծատ աւելի զծուար կը լինի մարդկային նիւթի
 վերականգնումը: Այսօր աշխարհը պիտի մտածի
 ամբողջ հայ ժողովրդի. այլ ոչ թէ միայն աղէտի
 շրջաններում գտնուողների հոգեկան վիճակի
 մասին: Հոգեբուժութիւն է պետք: Հարկաւ որ է.
 եթէ կ'ուզենք համապետական աւ անգամ համա-
 մտորակային գուրգուրանք» («Գրական Քննիչ»,
 1989, թիւ 2):



Զ. Բ.

Կ. ՍԻՄՈՆԵԱՆ

ՄԵՐ ՑԱԻԸ,

ՏԱՌԱՊԱՆՔՆ

ՈՒ ՄԵՐ ՅՈՅԱԸ

Բայց ինձ հետ, ձեզ հետ, բոլորս հետ է Յոյսը:
Բոլորս հետ է Հաւատն ու Սէրը:
Մեզ համար զօրակից է մեր ժողովրդի անկոտորում կամքը,
նրա առնակամ պատմութիւնը:

ԿԱՐԷՆ ՍԻՄՈՆԵԱՆ

Մեր ազգային զարթոնքի, միաբանութեան ու ներդաշնակութեան, քաղաքացիական բարձրագոյն զգացումի, մարդկային արժանապատուութեան ու եպարտութեան անխաղ զրօնարմանը հիւսուած բերկրանքին, տառապանքին ու բոլոր փորձութիւններին յայտնող այս օրերի հանգրուանը մեր ռոտիքի տակ պայթեց որպէս համազգային ողբերգութիւն, որպէս մի նոր սեւ մղձաւանք, որպէս շատ հեռու եւ շատ մօտի անցեալի անդառնալի ու միացող կորուստների վրայ բարդուող եւս մի Չարիք:

Հիմա՛, գիշերային այս անիրաւ լռութեան պահերին, քաղաքի անտուր ու սոխացող անդորրի մէջ գրում եմ այս սեղերը ո՛չ թէ ինձ, ո՛չ թէ իմ հայրենակիցներին սփսփելու կամ միտքարեւու համար:

Ես գրում եմ, որպէսզի հազօրդակցրեւմ ձեզ հետ, ապրողների հետ, արպէսզի ձեր ցաւը միասին քաշենք, միասին տառապենք եւ միասին կրենք մեր խաչը: Որպէսզի ինչքան փխրուն զառնանք գուք ու կարեկցանքից, նոյնքան կարծրանամ մեր հոգիները, քարանայ մեր

սիրտը՝ ցինիզմ ու շահատակութիւն տեսնելիս:

Ասում ենք՝ ճակատագի՛ր, մախախր՝ նամութի՛ւն, տարե՛րբ...: Ի՞նչ է, մեր հայրերն ու պապերը, մեր փառաւոր նախնիները, որոնք ստեղծել են երկիր ու տիրութիւն, հազարամեակների ընթացքում իրենց արարչութեամբ այս հողին վրայ մշտնջենաւոր ապրելու մեր իրաւունքն են հաստատել, մեր Տեսակն ու Ոգեղէնութիւնն են փաստել համաշխարհային քաղաքակրթութեան մէջ, ուրեմն, ի՞նչ է, նրանց չի՞ հետապնդել ցեղի ճակատագիրը, նրանց յանկարծակիի չի բերել մախախմամութիւնը, եւ նրանց չի՞ դարանակայել արդեօք տարեբէր: Ցատկապէս, միշտ էլ պայթել է թէ՛ որպէս վայրագութիւն, թէ՛ որպէս բնութեան ազէտ ու արհաւիրք:

Բայց շարունակուել է մեր Տեսակն ու Ոգեղէնութիւնը ի հեռուէս հոգեզուրկ եւ բիրտ ուժի, շարունակուել է մեր արարչագործ ընթացքը քաղաքակրթութեան քառուղիներում. շարունակուել ենք Մե՛նք, Հայկազուններս, շարունակուել ենք թէկուզ մեր խաչը կրելով:



բայց եւ սերնդէ սերունդ փոխանցելով այն առաքելութիւնը, որ յանձն ենք առել հազարամեակների մշուշոտ հեռուններից: Քաղաքակիրք մարդկութեան վկայողը լինելու, քաղաքակիրք մարդկութեան մեղքերի ապաշխարողը լինելու մեր առաքելութիւնը:

Մեր աւերուած քաղաքներն ու շէները կորցնելու կսկիծի միջով, հազարաւոր, տասնեակ հազարաւոր գոհերի, զաւակների կորցրած ծնողների ու որբացած զաւակների միացող հոգիների նկատմամբ մեր կարեկցանքի միջով, մեր իսկ ցաւի ու տառապանքի միջով պէտք է կարողանանք հասու լինել Գոյութեան այն իմաստին, որը, աւագ, կորցրել էինք մեր յանցապարտ դարի անցած տասնամեակների ընթացքում:

Ազգային ողբերգութեան, հազու մորմոքի այս փորձութիւնից դուրս գալու մի ճանապարհ ունենք միայն: Դա ինքնամաքումի, յուզական ու մտաւոր վերածննդի, քաղաքացիական տոկունութեան ճանապարհն է:

Անսահման է մեր կսկիծը, համագային սգի մէջ ենք այս օրերին:

Բայց ինձ հետ, ձեզ հետ, բոլորիս հետ է ճոյսը:

Բոլորիս հետն է Հաւատն ու Սէրը: Որովհետեւ, եթէ չտոկանք, եթէ կորցնենք Հաւատը մեր ուժի եւ Սէրը՝ իրարու նկատմամբ, եթէ տրուենք յուսահատութեան, հապա ս՞վ պիտի մտնենք ոգեկոչի մեր կործանուած քաղաքներն ու շէները, ս՞վ պիտի վերականգնի մեր հոգեւոր արժէքները, ս՞վ պիտի տէր լինի դարաւոր մշակոյթին, մեր երգին ու խաչարին, մեր տաճարներին ու մատենաներին, ս՞վ պիտի խօսի հայերէն, ս՞վ պիտի լինի արդարութեան ու ազատութեան զինուոր, ի վերջոյ, ս՞վ պիտի մեծացնի մեր որբերին եւ ս՞վ պիտի սրբագործի գոհերի յիշատակը:

Մեզ համար զօրավիգ է մեր ժողովրդի անկուտրում կամքը, նրա առնական պատմութիւնը:

ԿԱՐԷՆ ՍԻՄՈՆԻԱՆ

Ա. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՀՈՂԸ ՅԻՇՈՒՄ Է ԻՐ ՏԻՐՈՋԸ



Պիտի կառուցեմք, որովհետև օրիշ բան չենք կարող անել, իրաւունք էլ չունենք՝ անկող՝ աշխատանքի բոլոր ծեղկերում սիրունամ մեր տան գաւակների մեծ ու անտեսաց երկիրն ենք՝ Մայր Հայրենիք, հա՛մ մայրք, հա՛մ հայրք, հա՛մ յայր, հա՛մ հայր... հաւատք...

ԱՎԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ինչ անեմ, որ այդ Հարուածը ինձ չբաժանեց Հազարաւոր մասերի ու ամէն մաս շմուռու ձեր փոխարէն: Ձեր փոխարէն Հազարապատիկ մեռնէի, չապրէի այսօրը, չանկնէի այս արեւը, այս հողը, այս սարը, այս գիւղերը, երբ գուապիր, նորից ու նորից գլուխ է բարձրացնում խելագարութիւնը... Այս ամէնը մզմուտն է, թէ՛ իրականութիւն, այս ամէնը նորից մեզ պատանակց, նորից «Հայաստան» եւ «Ողորդութիւն» բառերը ձուլուեցին: Այսինքն, ե՛րբ էին անջատուել որ, միշտ էլ միացած են եղել, մեր պատմութիւնն են, մերը: Այսինքն, ե՛րբ ենք ազատուել այդ «միացումից» որ: Ինչին ուղեցել ենք միանալ՝ չի յաջողուել, ինչից ուղեցել ենք ազատուել՝ զարձակ չի յաջողուել: Երանի մեռնէի բոլորիդ փոխարէն: Բայց ապրում եմ, ներող եղէք, լուսանդիներս:

Գիշեր-ցերեկ երկինքը Հերկում է ինքնաթիւների ազմուկից՝ մարդկութիւնը սղնութեան է գալիս քեզ՝ Բարութեան Բարեկոնի եւ վերածուել, հող ջան:

Գալիս են ու գալիս՝ սրտապատու, իրար Հերթ շտալով: Փլատակներդ են պեղում, իրար ու սուտ՝ իրար լեզու շհականալով, գիշեր ու գոր պեղում են զեւ շնչող աւերակներդ, ու գուակներդ, աշխարհ, ամէն մի արտփունի, ամէն մի անբացի Հեռ իմաստանում ու մաքրում են շարութեան ժանգից, կեանք ու բարութիւն են գտնում: Գարձեալ քեզնով, քո աւերակներով, քո կորուստներով, որպէս մարդկութիւն՝ ապրելու իրաւունքն են գտնում:

Գարգ ու մէ՛ մի տան չափ բան է երկրագուղը, ու եթէ տան մի պատը փլուէց, մի անկրն էլ այլեւս կանգուն չեն մնայ:

Բա ինչո՞ւ էին այդքան հեռու եւ օտար տան բնակիչները, ինչո՞ւ էին այդքան անմասնակից՝ զար ու գարեր: Տան պատ չէիր, մի փոքրիկ տեղաշարժ եղած քար էիր՝ ուշադրութիւն չէին դարձնում տանտէրերը, չէին մտածում՝ տեղաշարժ եղած քարն էլ որ ընկնի, պատը կը փլուզուի, իսկ որ պատը փլուզուէ՝ տուեր կը փլուզուի:

Գալիս են ու գալիս, հող ջան, ու զու ամօթաւար, որ այդքան նեղութիւն եւ ապիս, կուշուտել եւ ցաւիդ վրայ՝ չես գտնում, Հազարաւոր հողիդ մխուս

է այսքան նեղութիւն տալու համար, սակայն ապւտ մարմինդ ցրտին էլ կը դիմանայ, սովին էլ, քարհաս ձևերէրդ նորից իրենք կը մարքին աւերակներդ ու կը կատուցեն, հազար անգամ արածք հազար անգամ էլ կ'անեն, հազար տարի էլ կ'անեն՝ սովոր են:

Բայց պաշխ են, շնորհակալ եւ եկողներէ բարու թիւն համար, սիրու մ եւ նրանց, միշտ էլ սիրելի եւ նրանց, միշտ էլ կը սիրես, սիրելով եւ դիմացել, ապրել քար ու դո՛րի մէջ:

Սիրոյ մասին են հիւսուել ատասպելներդ, ատասպելներդ աւելի եւ հաւատացել, քան իրականութեանը, սիրուն բառերին աւելի եւ հաւատացել, քան ազեղ հաշիւներին՝ ամաչում եւ ազեղ հաշիւներէց:

Քանի հազար տարուայ յիշողութիւն ունես, Աստուած իմ: Ախր, դժուար է այդպէս ապրելը: Ախր, յիշողութիւնը երազանքի պէս մի բան է ու դժուար է գրանով ապրելը: Աներազ այս գարուն մ երազախեղդ եւ կղել: Կէսդ աւերակ է գառնու մ՝ միւս կէսդ սկսում յիշել ու երազել, այս կէսդ է աւերակ գառնու մ՝ այն միւս կէսդ է սկսում երազել ու յիշել...

Սրանով էլ եւ համախարհային սեկորդ սահմանում՝ հազար տարուայ երազ ու յիշողութիւն կը յիշի՞, կը հաւատաս՞, կը ներհ՞ն քեզ երկիւրուայ երկաթաները: Ամենամեծ կորուսաներդ կը ներեն, ամենամեծ երկրաշարժներդ կը ներեն ու կը ներեն, բայց յիշողութիւնդ ու երազդ ինչի՞դ են պէտք: Ինչի՞դ եւ շարացնում:

Ախ, շուհրուէիր, մնայիր, Գիւմրի քաղաք: Մանկտիքդ՝ վորդանիկներ վազվզէին փողոցներում, ջահելներդ կծու հուժորով վառէին երեսանցիներին արահերը, ընկեր Մարգոյի սիրտը, անկէներդ ծանր ու մեծ կենաց ասկին կազանդի սեղաններին, միայն թէ մնայիր... Պատմութեան գառարանում, երբ անկզ գատաւորը հարցնէր՝ մերն եւ, թէ ուրիշներ, ու, որպէս արդար գատ, որչի՞ր քեզ երկու մասի բաժանել, մենք քեզնից կը հրաժարուէինք, որ կենդանի մնաս՝ թէկուզ օտարին նուիրուած, միայն թէ կենդանի, ամբողջական:

Որտեղից որտեղ այն գատաւորի պատմութիւնը յիշեցի՝ երկու ժօր ու մի զաւակի պատմութիւնը. գատաւորը առաջաբերում էր զաւակին երկու մասի բաժանել, ու հարազատ մայրը հրաժարուեց որդուց՝ յօղուս խորթի: Կենդանի մնայիր՝ մենք էլ... Բայց այս ի՞նչ եմ ասում, ս՞նց թէ կենդանի մնայիր՝ անբ Շիրազի տունը կանգուն է, Մերկուրովի տունը կայ, Զիթոնոցները՝ մենակ կամ մարն է փլուել, Ամենափրկիչը՝ մի պատը կայ, մի յարկանի Գիւմրին, անբ, կայ, բազմայարկին է փլուել: Յեմենաի գողերի կառուցած բազմայարկերն են փլուել, բայց զբանց ստիկն էլ է դեռ արտփում սիրտդ, վիրաւոր, բայց կենդանի սիրտդ: Եսա էիր ծիծաղում ու ծիծաղեցնում, Աստուած հային շատ համարեց ծիծաղը, բայց հօ սիրտդ արտփում է՝ մի յարկանի Գիւմրին հօ կայ, հօ քեզ համար է Շիրազ բանաստեղծդ գրել:

... Եանթն է բեկումն ճակտիս վրայ,
Մահ չգիտես՝ կայ թէ չկայ,
Ելնում եմ եւ ահերն ի վեր,
Ելնում եմ եւ մահերն ի վեր,
Ահե՞ր, մահե՞ր, գահե՞րն ի վեր:

Այնքիս սէր գարնան օրեր,
ձամբես դէպի աստղերն անմեծ՝
Ինձ ելնելու քարեր կան դեռ,
Ինձ ելնելու սարեր կան դեռ:
Քարե՞ր, սարե՞ր, դարե՞ր կան դեռ...

Այն գատաւորի պատմութիւնը...

Դասուսորդ անախարհու մ է երկու մօր զաւակին կիսեյ, որ երկուսին էլ բաժին հասնի (Թէ չէ շատ դժուար է, պարզուս մ է, իսկական մօրը որոշելը) և իսկական մայրը հրաժարուս մ է իր ծնած որդուց՝ յոգուս խորթ մօր, որ զաւակը կենդանի մնայ... Դասուսորդ շատ է ազգուս մ, արդար մարդ է լինուս մ, ասուս մ է. «Դուս ևս իսկական մայրը, կի՛ն, շուս զեցիր երեխայի մահը, ոս բեժն ևս նրա տէրն ևս»:

Այս պատմութիւնն էլ է քո յիշողութեան ու երազների անփոքանալի պահոցից, ու չգիտես ինչի կպի՛լ՝ պոկ չի գալիս ինձնից: Սրե՛ի այն թաղուս ան կենդանին յիշեցի՛ Ամենափրկիչ ու երակներին նայելով, կամ էլ Ղարսին հասած երկաւարժը յիշեցրից (սեռնես բերդն ու Առաքելոցը կանգուս նն): Ամենափրկիչը քանդուս եց՝ նորից կը կառուցենք, նրանք, որ քանդուս են՝ կառուս ցողն ո՛վ է... Պատմութիւններ ևս յիշուս մ, իսկ ինքնաթիռները գալիս ու գալիս ևս: Նորից ազլա է կպի՛լ՝ երկուս ինքնաթիռ խորտակուս եցին՝ ԲՏ զուս: Հեռասոր մայրի, ի սէր Աստուս եոյ, ներեցէք մեզ այդ կորսուի համար, հայոց սաստապանս քից պատասուպատուս է լինուս մ, ներեցէք, մենք էլ մեզ համար կը զուս էինք ու չէինք անիճի, իմացեալ մահով մեռնել գիտենք, հաստատեցէք ու ներեցէք:

Շուս սով գարուս նը կը գայ: Արարատեան ու արագածեան գարուս նները իրորից այնքա՛ն տարբեր են՝ մէկը ծիրանաժառ է, բարկ, միւսը՝ խատաշուս նը, ալպիան, բայց երկուսն էլ հրաչք են: Շուս սով գարուս նը կը գայ, ու մեր գաւաակներն էլ կը ծագկեն մեր զաւակների հետ՝ Արարատի ու Արագածի փէշերին: Կը գաք՝ կը տեսնէք, բոլորեք, հաստատեցէք: Հիմա մի կկէք, աւեր ու արիւն է շուս ըրը, բժիշկներ ու գինուս որներ, զաղթական ու բնուս եր, հազարաւոր մարդիկ: Դարը մեր արիւս նս արցուս նքով ու արուս ոս մ է՝ մերն էլ մերին խառնուս եց, ափսոս:


Թող այնքանով բաւարարուի, մեր թափածը բոլորին կը հերբքի, էլ պէտք չի: Հողը սասանց այն էլ շատ է ծանրացել, չի գիմանուս մ, պայթուս մ է ցաւի ծանրութիւնից: Պայթուս մ է, պատասուպատուս լինուս մ, բայց ինչ անենք՝ չենք մոռնուս մ, էլի մոռնւս մ ենք մեր հազար տարուս այ յիշողութեամբ ու երազով, ի՛նչ անենք՝ ապրուս մ ենք ու էլի պիտի յիշենք, երազենք ու էլի պիտի կառուցենք՝ աւերակներից:

Նորից Ստեփանուս ան պիտի կառուցենք, Կիրովական, Լիւնինական, Սպիտակ... էլի պիտի...

Պիտի կառուցենք, որովհետեւ ոս բիշ բան չենք կարող անել, իրաս ուս նք էլ շուս նենք անելու՝ ախարհի բոլոր մեզ կրուս մ սփռուս ան մեր տան զաւակների մեժ ու աւետեաց երկիրն ենք՝ Մայր Հայրենիքը, հա՛մ մայրը, հա՛մ հայրը, հա՛մ յոյսը, հա՛մ հաստը ու, երե՛ի, գրա համար է, որ կենդանի ենք մնուս մ, չենք մոռնուս մ:

Ո՞նց մոռնենք, ինչի՞ մոռնենք, ո՞ւս մ թողնենք այս քաղաքուս գրախաղ շնչուս որ պահելուս գաժան երջանկութիւնը: Որտեղ թողել ենք՝ գեոս բուս է փայլուս մ աւերակներուս մ, որտեղից հեռացել ենք՝ մեր յիշողութեան գինուս որները գեոս չեն թողնուս մ կհողներին մարդավարի տէր գասնալուս, վայելելուս մեռք բերածը, հողն էլ, ախր, յիշողութիւն ուս նի, երազ ուս նի ու իր իսկական սիրովն է յիշուս մ ու երազուս մ՝ գրա համար ենք ապրուս մ նաեւ:

ԱԼԿԱՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆ



ԼՍՈՒՄ ԵՄ ԶԱՅՆԵՐ

Ես ինչպե՞ս փակեմ իմ ա կանգները,
 Որ էլ չլսեմ նրանց ճայները...
 Գիշեր ու ցերեկ լսում եմ անվերջ
 Օգնութիւն հայցող նիչ-ազազակներ.
 Անմեղ մանուկներ «մայրի՛կ» են կանչում,
 Ծերն անօգնական՝ որդուն ազերում,
 Առնական որդին բանտուած է անել՝
 Բիրտ սայերի տակ մահն է դարանել...
 Կառոյցը անխախտ լինելու համար,
 Նրա որմերում մարդ էին շարում.
 Այդպէս է եղել շատ հին օրերում,
 Բայց միայն մէկ մարդ եւ ոչ հազարներ...
 Աստուած, քո այդ ո՞ր կառոյցի համար,
 Մեր հազարաւոր կեանքերը տարար...

3 Յունուարի 89 թ.
 Երեւան, գիշեր

Հեղինէ ՄՈՒՐԱԳԵԱՆ



Քէն բոլորս բացատրելի կերպով յուսահատ եւ միտաւոր միճակի մէջ ենք գրտնրում, սակայն շժուածանք, որ մենք բրիտանականներ ենք: Եւ մեր հաւատաւոր ժողովուրդը իր ողջ պատմութեան ընթացքում բազում նահատակութիւններ կրել է տարբեր տոհմներով, առաւել կամ նուազ չափով: Նոյնիսկ պատմարանները, կարգալով մեր պատմութեան արհաւիրքները վերջին 1000-1500 տարիների ընթացքում, ասում են, թէ հայ ժողովրդի գոյութիւնն այսօր մի հրաշք է: Ինչպէ՞ս տակաց, ինչպէ՞ս դիմացաւ հայ ազգը այդ բոլոր փորձութիւններին: Ինչպէ՞ս յաղթահարեց մահուան ու թերը:

Այսօր էլ մենք նոյն ժողովուրդն ենք, այսօր էլ մենք չենք ուզում վախճնայ մահուանից, չենք ուզում յուսահատուել եւ շարտի յուսահատուել: Ընդհակառակը, դուցէ այս առաջին փոթորիկում օրերից յետոյ մենք զմեզ պիտի աւելի հաւաքենք, մեր գիտակցութիւնը, մեր հոգեկան ու թերը, ամբողջ մեր ժողովուրդը միասնական մեր հայրենի կառավարութեան կողքին, մէկ սիրտ-մէկ հոգի, որպէսզի բուն մենք մեր վերքերը եւ մեր հայեացքները դարձնենք զէպի կրկինք եւ տեսնենք այնտեղ վառ եւ պայծառ յոյսի

աստղերը մեր ժողովրդի: Ու մահից յետոյ, յաղթական վերածնունդ են կենալիս ու թերը, բացում է կեանքի ծագիկը միտաւոր: Եւ մենք իրրեւ բրիտանական հաւատում ենք, որ յաւերժութեան յուսաբացը սկիզբ է առնում Գողգոթայի տառապանքներից, կամ Գողգոթաների տառապանքներից:

Ինչպէս ժամանակին Մեծ Եղևոնի առիթով ծանօթ բանաստեղծն է ասել՝ մեռիկներուս իրրեւ խաչ եւ այս ծառը տնկիցի: Ահա այդ ողով մենք գորանանք, հաւաքուենք, հաւաքենք մեր ու թերը եւ անվախ, անտրտունը նոյնիսկ, յամառօրէն յատաջ ընթանանք զէպի նոր նուաճումներ, մանաւանդ նոր նուաճումներ ողբկան իմաստով: Ողի նշանակում է մարդկային բարոյական ու թերի մի համադրում, մի սինթեզացում, որի գագաթնօր մեր ժողովուրդն էլ ունի եւ որի ապացոյցը տուել է զարեւ շարունակ: Այսօր էլ մենք նոյն ժողովուրդն ենք եւ ահաւասիկ մեր ճակատապրի տառջ կանցնում անուսան նոյն ու իսան ենք կատարում՝ ապրելու, գոյատևելու եւ յաղթահարելու ամէն գիտարութիւն:

ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱՔՈՂԻԿՈՍ



Ես եկայ ու տեսայ մեր ժողովուրդի այս անաւոր ցաւը՝ լսեցի տնաւեր հայ ծննդաց ու որդեկորոյս հայ հօր ու ժօր հառաչանքը: Պիտի երթամ եւ արձագանց պիտի ըլլամ այդ բոլորին: Բայց տեսայ նաեւ վերակառուցելու կամքը: Ինձի համար ոսկի կոչուած բանը ժողովուրդն է: Իմ ժողովուրդն է մեր պատմութեան ոսկին: Ոսկիները կու գան ու կ'երթան: Ժողովուրդն է, որ կը տեսէ: Այսօր, այս խորանին վրայ, ես որպէսզի մէկ հայ որբի կամ մանուկի աչքերուն արցունքը սրբեմ, մէկ հայ ընտանիքի սեզանին վրայ պատառ մը հաց հայրայրեմ, իբրեւ կարողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ ընտրութեանս ատեն ինձի տրուած այս ոսկի արծիւք, այսօր, ձեր բոլորին առջեւ կը հանեմ եւ զայն համբուրելով կը զնեմ այս Սուրբ Սեզանին եւ կը խոստանամ ձեր բոլո-

րին, որ գերագոյն կարելիս պիտի ընեմ, որ մեր ժողովուրդին համար ինչ որ Աստուած տուած է՝ զայն իրեն վերագարձնեմ մեր ժողովուրդի վերականգնումի մէջէն: այս յայտով կը համբուրեմ Ս. Սեզանը եւ կը մեկնեմ մէկ-երկու օրէն Անթիլիաս:

Երբ աւերակեալ լեցինական եւ Սպիտակ այցելեցի, բանդուած շէնքերէն երկու կուտրտուած տախտակի կտորներ վերցուցի գետինէն: Զանոնք խաչի վերածած, եւ փոխան ոսկի արծիւին խաչի վերածած, յաշորդ Կիրակի Անթիլիասի Ս. Խորանին վրայ պիտի դառնամ եւ ժողովուրդին պիտի ուզեմ իմ խօսքը ձեր սիրոյ ու եղբայրութեան, հայութեան միութեան բարգմանը հանդիսանալով Սփիւռքի մեր ժողովուրդին:

ԳԱՐԵԳՈՍ Բ. ԿԱՔՈՂԻԿՈՍ

Գ. ԽԱՆՁԵԱՆ

ՄԵՌԱԾՆԵՐԸ
ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՆ
ԱՊՐԵԼ

Ս. Վերջապետ, մենք պէտք է ապրենք ու երջանկանամք.
որովհետև դեռ ասելիք ունենք աշխարհին, դեռ չենք ստեղծել
մեր գործերի սեպուխ գործը:

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՁԵԱՆ

Տարեմուտի առիթով յամախ եմ խօսել կիսել հայրենակիցներին հետ: Այս ամբամ, երբ առաջարկեցին նայնը, զարմացայ, ցանկացայ նայնիսկ յանդիմամել... քէ այս պահին, համազգային այս ոգրի մէջ ինչ նոր տարի: Բայց նայն վայրկեանին ինչ-որ մի թելադրանք, ինչ-որ մի զգացում մղեց ինձ ասելու. այո, այո, հիմա, այս պահին, հասկա էլ ե՛րբ: Ս. փորձեցի յիշել, քէ ինչ եմ գրել եւ ցանկացել 1988 բուսականին: Չիշեցի: Թէ երեւի լաւը, ինչպէս բոլորն են մտադրում նոր տարուայ շեմին, ու մըտածեցի նաեւ, քէ ի՞նչ ճշմանկութիւն ունի, քէ ինչ եմ երագել, երբ այս դըժուար օրերին երեսաց մարդու եւ մարդկութեան անգորութիւնը բնութեան կամքի առջեւ: Մենք հեշտութեամբ մեր միտքը կարող ենք նետել շատ հեռու, վայրկեանում դարեր հաշուել, բայց ի վիճակի չենք նայնիսկ գալիք բապէի բնայքն ու բերածը կատեհի. ասում են՝ մարդը յամախ որոշում է բախտը աշխարհի, երբ չգիտէ՝ ինչ է գրած իր նախատին: Այո, մեզ քուսմ է, քէ մեր առջեւ ապագայի սպիտակ էջեր են, եւ մեզ ու միայն մեզ է վերապահուած յեցնել այն բոստ մեր ցանկութեան, մոռանալով, որ այդ դատարկ բուսացող էջերը մասամբ գրուած են եւ այն էլ վաղուց, վայրկեան առ վայրկեան, ժամ առ ժամ, բնութեան կանխատեսած արարներով:

Սկա բնութեան այդպիսի մի չկուսեւած, ահաւոր մի տարերքի գոհը դարձաւ երիցս խաչուած հայ ժողովուրդը բիրիական մի հոգի վրայ, որից կեանքի բրբիռ էր ստացել աշխարհի մարդկութիւնը: Բիրիական Հայաստան, ամենավաղ ճիւտանէնութեան երկիր, պատերազմների խաչմերուկ, անցեալում հզօր ու ճանաչուած, յետոյ մոռացուած ու հայածուած, յեռների մէջ ծուարած, երկնքին մօտիկ, ճարից հաց ճամաղ, զրից՝ լոյս, շօրց դարում հրաշքով վերածնուած մի երկիր ու ժողովուրդ:

Երկրաշարժ ու այն էլ բիրիական ուժի: Գիտականներն արդէն կնքել են նրա անունը՝ Սպիտակի. այո, սպիտակ՝ այսինքն՝ շնչուած, մաքուր: Ունամք ասում են՝ դա ահագանց էր մեզուտներին, ունամք՝ սկիզբը աշխարհի կործանմամ...: Ոչ, այդ այդպէս չէ, այո, կայ ինչ-որ մի խորհուրդ, մի նշմարտութիւն, որ մարդկութիւնը հասել է մի սահմանագծի՝ ու պէտք է կանգնի ու նստ նայի, քէ ուր է գնում, ինչ է փնտրում, ինչ է ցանկել եւ ինչ է հնձում ու պէտք է հասկանայ, որ փրկութիւնը միաւորման մէջ է մարդկային ուժերի կենտրոնացման՝ ի շահ բոլորի: Սպիտակի երկրաշարժը դարձաւ սկիզբը նորի, ո՞վ կարող է նշել, քէ որտեղ եւ երբ է աշխարհը տեսել այսօր



արցունքով, կարեկցամեղով օգնութեան հասնող այլազան ձեւեր, որոնք կը տեսնեն այսօր հաշակաւոր ստորագրութիւններով ի մատենաներ, հեռագրեր, նամակներ՝ յուսադրող ու միտքարիչ խօսքերով, ե՞րբ է, որ մեր մեծ երկրի երկնակամարի վրայ այսօր գոյնի ու դրօշի հետքեր են բռնուած ու հայոց աշխարհը մտան գրութիւնը եւ նրա գրասէր Մայր Քերեզան:

Ուրեմն՝ փոխու՛մ է, նորովի է շնչու՛մ հողը աշխարհի եւ ոգին մարդկութեան, ուրեմն՝ Յիշդ է այն միտքը, թէ մի տեղ վերջը սկիզբ է նորի:

Մենք նորովի պիտի ապրենք. ապրենք ուրիշ կերպ եւ այդ նորը միայն նոր տուն չէ, նոր կրակ, նոր երգ, նոր խօսք, նա պէտք է ունենայ նոր հոգեբանութիւն, նոր որակ եւ, որ ամենակարեւորն է, այն պէտք է շագախաւի խղճով, արդարամիտ խղճով գործի դիմացինի, գալիքի հանդէպ:

Այո, մեր ազգը պիտի ապրի որպէս փոխհատոյց համայն մարդկութեան

օգնութեան ու ջանքի, իբրեւ կենսատու փարոս Սփիւտում ապրող իր հայրենակիցների, իբրեւ արդարացում իր նմանը չունեցած մեր մեծ Միութեան, բոլոր եզրայր ժողովուրդների, սրտաբուխ, անձնագոհ, քրտնաշան աշխատանքի ու գրութեան: Եւ, վերջապէս, մենք պէտք է ապրենք ու երջանկանանք, որովհետեւ դեռ ասելիք ունենք աշխարհին, դեռ չենք ստեղծել մեր գործերի սեպուտի գործը:

1989 թուականի չկարդացուող էջերի վրայ ինչ է գրուած. չգիտեմք, բայց մենք կը գրենք եւ կ'իրագործենք՝ շունչ հազարդելով մեր կործանուած քաղաքներին ու գիւղերին, որպէսզի աշխարհով մէկ թնկայ, ու ամէնուր լսուի միշտ մեր նորածինների, որպէսզի գրնգուն ծիծաղը երջանիկ մայրերի խառնուի նրանց բազմահազար ձայներին:

Մենք՝ հայերս, երգեր ունենք, որ դեռ չենք երգել, վէպեր չգրուած, երազներ չիրականացուած:

Մենք դեռ գիցի պիտի փամենք խաղո-
զի վագից Արարատի դիմաց ու պէտք է
նստենք աշխարհի մարդկանց սեղանի
շուրջը, ինչպէս յաւերժ կենսունակ մի
ազգ ու պիտի կոչենք:

ՄԵՌԱՆՆԵՐԸ ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆ ԱՊՐԵԼ:

Թանկագին բարեկամներ, Ամանորի
շնորհ մէկական մտմ վառենք տարի-
մուտի սեղանների վրայ ի յիշատակ
գոհուած մեր հարազատների ու գիւնով
քառ թարձրացնենք կենացը գալիքի
(«Հայրենիքի ձայն», 1929, թիւ 1):

ԽԻՂՃԸ՝ ԱՌԱՋՆՈՐԴ ՈՒ ԶՕՐԱՎԻԳ

Հայ ժողովուրդը իր դարաւոր պատ-
մունքեան մէջ տեսել է բազում ողբեր-
գութիւններ, որոնց դէմ տակացել է,
տառապել, մաքառել է ու յազթանակել,
ամէն անգամ նոր շիւ նետել, ծաղկել ու
պտղակալել: Ի զուր չէ, որ մեր պետա-
կան գերբի վրայ կայ մառ խաղոզի ող-
կոյց: Այո՛, մեր ժողովուրդը նման է
խաղոզի վագին. նրան կարող են տրո-
րել, ճգմել, կոտորել, բայց, միեւնոյն է,
ամէն գարուն նա զարթնում է, մի փչ
լաց լինում, ապա իր մէջ ուժ գտնում եւ
նորից է ձգում արեւին: Ի գուր չէ, որ
մեր հաւատի խաչը միակն է աշխար-
հում, որի չորս թելերը աւարտում են
ծաղկի բողբոջներով, ու բոցեր կան
հիւմքի շուրջը. այս ամէնը խորհրդա-
նիշն են այն բանի, որ մեռածների ոգի՛ն
անգամ ունի ծաղկելու եւ յարատելու
իրաւունք: Արդեօք այդ իրաւունքը չէ՞,
որ մեր ոգին կենսունակ է պահել, փո-
խանցել դարից դար, գորացնելով մեր
շունչը, ստեղծագործելու ու շէնացնե-
լու, կառուցելու ու երագելու ունակու-
թիւնը: Ամէնքին է յայտնի յաւ կեանքից
չէ, որ ունեցել ենք մի փանի մայրափա-
ղափ՝ Տուշպա, Արմաւիր, Արտաշատ,
Վաղարշապատ, Դուին, Անի, Սիս, Երե-

ւան, եւ մենք գիտենք, որ փիւնիկի պէս
նորից վեր կը յառնեն կենդանակը, կի-
րովականը, Սպիտակը, Ստեփանաւա-
նը, բանաւաններն ու գիւղերը՝ որպէս
յիշատակի կորոզներ բազմահազար
գոհերի եւ ապացոյցներ՝ յարատելու
մեր կամքի:
Սիրելի հայրենակիցներ, ձեր հետ
միասին ծնկի եմ գալիս անմեղ գոհերի
յիշատակի առջեւ: Մենք անգոր ենք
նրանց կեանքի կոչելու, բայց պիտի
ապրենք ու ապրելով վրէժխնդիր լի-
նենք դաւադիր բնութեան հասցրած
անասնի հարուածից: Ասում են՝ վշտի
մէջ է գորանում մարդկային կեանքը,
մեծանում ապրելու կամքը: Մենք այս
ամիսներին ցոյց տուինք, որ կարող ենք
լինել հաւաքական ու միաձոյլ, արդար
նպատակի իրագործման համար անձ-
նագոհ ու ոգրամիտ, ուրեմն է՛լ աւելի
ամրապնդու ենք այս մեծ վշտի պահիմ,
որ ստեղծենք նորից նորը, լաւից լաւը,
առաջաւորից առաջաւորը, եւ թող մեր
խիղճը առաջնորդ ու գորավիզ լինի մեր
բոլոր խիզախումներուն: (Գրական
թերթ, 16 Դեկտեմբեր 1928):

ԳՐԻԳՈՐ ԽԱՆՁԵԱՆ

Դ. ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ

էլ մի սասանիր, երբ շնորած եմ ես:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

Աստուած, Աստուած, հայոց դածամ Աստուած,
ես էլ դածանացել եմ դածամ ցաւից...
Ձե՛ որ հիմա, երբ գրում եմ վառուած
այս տողերը քի, մաի, զաւի —
այնտեղ մարդիկ եմ մեռեալ սարքի տակ,
մեղաւոր, ամենդ — հաւասար քառաբ,
և նրանց արի՛նն է հոսում գեռ տաբ,
հայոց ամենաքի գետը գառած...
Իսկ այստեղ ապրում եմ ես, մեղաւորս,
չնշում, հաց եմ կտրում, նաեւ խօսում,
քե՛ ինչպէս սեւացաւ հայ ազգի օրը,
քե՛ ինչ է գգում մարդը մահուան փոսում,
իսկ այստեղ ապրում եմ ես, մեղաւորս,
որովհետեւ մեղաւորը — ապրո՛ղն է միշտ՝
մեռնողի առաջ, մանաւանդ երբ մեռնողը
մի մանուկ է, Աստուած, կեանքի աւիշ...
մի մանուկ է, Աստուած, կեանքի աւիշ...

Իր երազներով, իր սերով անտես,
որ հաւատո՛ւմ էր քեզ տակաւին,
ինչպէս հայոց ազգն է հաւատում քեզ:
Սակայն ես ինչպէ՛ս քեզ հաւատամ, Աստուած,
ես ինչպէ՛ս նորից հայեացքս քեզ յառեմ,
ինչպէս նարեկացիք, այն սուրբը ասուած...
Եւ պոռթկում եմ իմ սրտից անսուրբ թառեր:
Այրում եմ, այրում, խեղազարում եմ,
ես ինձ կորցրել — քեզ եմ ման գալիս,
և քեզ չեմ գտնում, եւ այս գայարումը
ինձնակիցում է դառնում մեղաւորից:
Ես, որ մարդկութեան խաւար թերթացում
առաջինն եմ քո յայտը ընդունելի,
և առաջինն եմ եղել քո աշխում...
Ես ընդզո՛ւմ եմ հիմա քո զէմ:
Մինչեւ ցնցումի օրը քնիծեալ
ես այլ էի, Աստուած, հիմա — այլ եմ,
ես մեռայ այն օրը, եւ դարձայ անցեալ,
ես ինձ չի կանչում էլ անուհիդ փայլը,
ես ուրիշ եմ հիմա, եւ չեմ հաւատում,
քե՛ կարող էր այսպէս ազգը տէրունական
յայտնուել յանկարծ ցաւի յատակում...
Ռեքեմ, չկա՛յ մեզ երկնուց պահապան:
Ռեքեմ, չկա՛յ... Իսկ եթէ չկայ,
ապա թող նրանք, գոհեալները քանել,
թող նրա՛նք լինեն երկնային վկայ,
քե՛ ինչպէս Տէրը չի կարող ազգ պահել:
Ես թորը չեմ, Աստուած, եւ քեզ չեմ ներում
իմ քանդուած տունը, գերեզմանս դարձած,
ազրեքի ազրը իմ ակաղցներում
ես մեռած մանկան աշխրը քաց...
Դու կարո՛ւց ես նայել այդ աշխրին մեռած:
Ես չեմ կարող, Աստուած, չեմ կարողացել:
Մեռած աշխրում — միայն ապշանք ու հարց,
որ յաւերծուած ինձ ու հարց եմ մնացել:
Ահա ինչի՛ց է յանդուզն գայրաջրը իմ,
սեւա ինչի՛ց է հոգիս ըմբոստացել —
գուցէ պակաս է եղել հաւատը իմ,
անհաստատութի՛ւն է գուցէ դարձել,
բայց գառնութիւնս հիմա դառնում է բայն
և ի խորոց իմ յառվեալ սրտի —
ներսիցս կնոււմ է մի շար գորութիւն,
ես ես կոչում եմ յաստնուն, անսուրբին...
— Ո՛վ ճգովեալ, ո՛վ նեւ, գորութեամբ քո պիղծ
պահիր ինձ հաստատ վերին աշխարհում,
մի շարժիր տունս, մի ցնցիր ինձ,
ժամանակը քո օգտին է աշխատում,
որովհետեւ եթէ Աստուած ինձ չփրկեց,
ապա հրածարո՛ւմ եմ ուժից երկնային,
ես ընդունում եմ գորութիւնը քո մեծ...
Բանմէկերորդը — դարձն է սասանելի՛:

Մ. ՆԵՍՏԵՐՉՈՒԿ

ՑԱԻԸՂԴ ՏԱՆԵՄ, ՀԱՅԱՍՏԱՆ

Այս խօսքի հեղինակը՝ բանաստեղծ Միրոն Նեստերյուկը հայոց լեզուով, գրականությամբ ու մշակույթով լրբորեն հետաքրքրուած է տարիներ շարունակ: Քարգսմանի է Ղևանց Այիշանի, Պարոյր Սևակի, Վահագն Գալստեանի, Ռազմիկ Գալոյեանի, Լևոն Միրիչանեանի, Հեմրիկ Էդոյեանի եւ ուրիշների ստեղծագործութիւններից, որով գետնգրած են կիւնու՛մ վերքերս յոյս ընծայած շնչոյ գառական պոզիտիւ ժողովածուում: Իր ուկրաիներէն հրատարակութեանն է սպասում Պարոյր Սևակի շնորհաբան պատարագս պոետը, որի քարգսմանութիւնը պոետն իրականացրել է բոլորովին նորով:

Սոյն խօսքին կից երկտողով Մ. Նեստերյուկը մեր խմբագրութեանը տեղեկացնում է, որ, ի նպատակ Հայաստանի երկրաշարժից տուժած բնակչութեան, կիւնու՛մ տեղի է ունեցել գրական մեծ երկնայ: Այդ նախաձեռնութեանն առաջինն արձագանգել են Լուով եւ Մոսկի Էդուարդները (Երթական թերթ, 1949, թիւ 4):

Երբ Նեստերյուկը Նայտանուան գրական միասնութեան մեկնանքը յանկարծ զգում էր, որ արդէն չարտաբանութիւնն է այնչեղ, ապա խելոյն կողքից յայտնում է մի հայ, ոգնու՛մնան մեզ ճեղքում՝ «Կարգաւորութեան, ու՛մ լուս պիտարտաբանից գրեցի՛ր իր լեզուով՝ շնորհ գտանե՛մ, որք ոչ... Կարգում է՛ր ինչու՛րեք եւ, կ'ուզե՛մ յարկաւ ինձ տեսնել, թէ ինչու՛րեք եւ, կ'ուզե՛մ ինձ տեսնել, թէ ինչու՛րեք եւ, կ'ուզե՛մ ինձ տեսնել, թէ ինչու՛րեք եւ, կ'ուզե՛մ ինձ տեսնել...»

Հայ ժողովուրդը այժմ ինքն է մեծ ազնուակ՝ ունի շատ ցանկեր, հոգսեր ու վշտեր, կայր արտերթը խուճի է նրա հիմունքը բնորոշան, փյուռակների վիճակն էրաշարժի քաղաքներ, շին աւաններ ու դիպեր, սարել է ազգայնոր ժողովանց կենտրոն:

Այդ վերքը, Հայաստան, երկար, լուս երկար ինչ ապիանայ, գրեմ: Այն պիտի ժողովուրդի զո արգիներն ու զուտարկի արտերթ: Ես նախատում եմ՝ նախ արտերթ զո բերութեանն ոգուն հողորդակցուող, զո գաւազների նկարներովն ու երարտութիւնն անող ստարիներ, որոնցից մէկն էլ ես եմ: Ես կիտում եմ անհուն ցանկերեանի ճարտա Եւրոպայի

Ձեր ցանկն եմ տանում, փրկուած բնակիչներ հիմունքը Սպիտակի, որք երկրի երեսից շնորհ էլ յայրիկանների բնակարան:

Ինչ ցանկն եմ տանում, հող Երթական, որ աշխարհին տանել ես Աւանից Բաւազանի քնարն ու Արարատի գաղաթների նման լուսաշող Յովհաննէս Երթական: Ինչ ցանկն եմ տանում, լուսաթիւ լուսի, Յովհաննէս Քաճառեանի ստեր կզերթ: Ձե՛ր ցանկ, Երթական ու Լուսի, որ կրեցիք երկրաշարժի անհնարեան հարուանները:

Ձեր ցանկն եմ տանում, անբող յայտարարով մէկ սիրտուան Հայեր: Ես մեր ցանկ, Ուկրաինայում ապրող Հայեր, ու՛մ համար երկրորդ Հայերի են Լուսից, կամենեց-Պողոսից, Լուսից... Գոհան տան էլ, որ Հայաստանը, փոքրանայով, անբողութեանը անկուտում է մեր սրտում... Դու նախ մեր՝ ուկրաինացիների սրտերում ես: Մեկնից շատերն այժմ կարողանում են Հայերին արարտերթի՛ շնորհ տանե՛մ ու զիմի շնորհ շնորհ գտանե՛մ, Հայաստան:

Միրոն Նեստերյուկը մեր խմբագրութեանը տեղեկացնում է, որ, ի նպատակ Հայաստանի երկրաշարժից տուժած բնակչութեան, կիւնու՛մ տեղի է ունեցել գրական մեծ երկնայ: Այդ նախաձեռնութեանն առաջինն արձագանգել են Լուով եւ Մոսկի Էդուարդները (Երթական թերթ, 1949, թիւ 4):

ՄԻՐՈՆ ՆԵՍՏԵՐՉՈՒԿ

Վ. ՍԱՆԹՐԵԱՆ

**«ԵՍ ԳՂՈՒԽ ԵՄ
ԽՈՆԱՐՀՈՒՄ
ՏԱՂԱՆԻԱԻՈՐ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ԱՌՋԵԻ»**

**ԿՐԾԻ ԵՐԳՉԱԽՄԻՐ ԴԵԿԱՎԱՐ
ՄԻՆԱՅԻԼ ԴՐԻՆԵՒՍԿԻՆ**

Ես գլուխ եմ խոնարհում մեր հիւրերի առաջ,
տաղանդաւոր եայ ժողովրդի առաջ:

ՄԻՆԱՅԻԼ ԴՐԻՆԵՒՍԿԻ

Վերջերս, Հայաստանի պետական երգչախմբի՝ Մինսկում ունեցած Համերգընդերի օրերին, նրա ունկնդիրների թւում էր Բելյուստսական ԽՍՀ պետական սկզբնական ժողովրդական երգչախմբի գեղարուեստական զեկավար և ղիսաւոր տիրիժոր, Բելյուստսական ԽՍՀ ժողովրդական արտիստ Միխայիլ Դրինեւսկին: Զրոյցի ժամանակ ահա թէ ի՞նչ ասաց նա.

«Այդ օրերին, երբ Հայ ժողովուրդին այդ պիտի ծանր ուղերգութիւն պատահեց, երբ ամէն բնական ժարդ չի կարող մի կողմ կանգնել, ծանր ապրումներ չունենայ, մեր գիտակցութեան մէջ, մեր ժարդկային սրտերում, Հայաստանի պետական սկզբնական երգչախմբի Համերգները այլ կերպ չընկալուեցին, քան երկրաշարժին զո՛հ գնացած ժարդկանց յիշատակի տուրք: Այդպէս էլ եղաւ:

«Ենթահակայութիւն և խորին յարգանք երգչախմբին, այս բանի Համար, որ նրա իւրաքանչիւր անդամ խիզախութիւն է դրսևորում, սրտում ու հոգում: պահելով վիշտն ու ցաւը, խեղդելով գրանջը, ժարդկանց է հասցնում գեղեցկութիւնն ու լոյսը, որ այսօր, այս դահլիճում սփռեցին երգի պատկերով:

«Համերգներն սկսուեցին Վերսիի «Ռեբվիիեմ»-ի ու «Հոգեհանգիստ»-ի կատարմամբ, ու ամբողջ դահլիճը Համերգից առաջնորդի էր կանգնում, մէկ բոսկէ լուսնիմար յարգելու Հայ ժողովրդի զոհերի յիշատակը: Եւ կարծես դահլիճում նրասաններէից իւրաքանչիւրը ոչ թէ սովորական Հանգիստան էր, այլ՝ այդ կատարման անմիջական մասնակից, կատարում, որը ո՛չ միայն մահացածների յիշատակի տուրքն էր, այլև՝ իւրօրինակ վշտակցութիւն ամբողջ Հայ ժողովրդին, բոլոր նրանց, սփերը քոյր ևն կորցրել ու մայր, որդի ևն կորցրել ու Հայր, եղբայր ևն կորցրել ու երկխայ՝ մահասարուս փլատակների տակ:

«Սա ժարդկայնօրէն վկայեց այն մեծ յարգանքի մասին, որ ժարդիկ տանում են տաղանդաւոր Հայ ժողովրդի նկատմամբ, վկայեց այն մասին, թէ մենք ինչպիսի՜ չիացմունքով ենք գնահատում Հայ ժողովրդի ժարդկային, Համամարդկային արժանիքները, յատկապէս այս ծանր օրերին:

«Ես գլուխ եմ խոնարհում մեր հիւրերի առջև, տաղանդաւոր Հայ ժողովրդի առջև»:

ՎԱՆԻԿ ՍԱՆԹՐԵԱՆ
(«Արմենփրես»-ի յատուկ թղթակից)

Մ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՓԱԿ ԱԶՔԵՐՈՎ
ԱՅՅԻ ԳԱՄ ՔԵԶ...



Մեր պատմիչների մճան ասեմք՝ աւա՛ղ, փառացի անցաւո-
րաց, եւ ուժ զտննել ապրելու: Քանզի հայ ժողովրդի հազարամե-
ակնների պատմութիւնը մոխիրներից յառնելու շատ օրինակներ
է տուել:

ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ինք ամիս եւ Հաշուած վայր-
կեաններ. մարդկային Հոգու եւ
երկրային բնոյնքի պոռթկում,
որ, հաւանարար, զարեւոյժ էր
Հասունացել: Բայց ինչո՞ւ զու-
գագիպեց: Ինչո՞ւ այնպէս եղաւ,
որ ամիսների տառապանքներից
չետոյ, դեռ չսթափուած, գեռ ու-
ժերը չհաւաքած, գեռիներ պա-
տրուուեց, եյաւ մեր դէմ:

Ատու՛մ են, իբր, Ատուած ու-
ժեղ մարդկանց է ծանր փորձու-
թիւնների ենթարկում: Բայց
այսքան էլ զածան փորձառու-
թիւն: Մենք մեր ժողովրդին յու-
զող խնդիրներն էինք ու զու՛մ
կարգաւորել, չիմանալով, որ մեր
ոտքերի ասկ մէկ այլ պայքար է,
բնութեան պայքար, որի դէմ ան-
կարող է նոյնիսկ ինքը՝ բնու-
թիւնը:


«Տեսքդ պահեմ աչքերիս մէջ»,
— ասացի ես, երբ կանգնած էի
Անիի աւերակների առջեւ: Իսկ
այժմ՝ դարձեալ ասում եմ. տեսքդ
պահեմ աչքերիս մէջ՝ իմ Հայրենի
լենինական. ե՛ւ քեզ՝ բարի ու
քնքուշ իմ Լոտի, ե՛ւ քաղաք Սյուխ-
տակ, որ դոյնն ու անունը շու՛ն
եկաւ զլիխվայր, ե՛ւ փոքրիկ կա-
յարան Նայրաւոյ, ե՛ւ Ախուրևան,
եւ գիւղ Գոգարան...

Տեսքդ պահեմ աչքերիս մէջ.
Ինչպէս որ կար մինչեւ թիւն
անասարտու եօթն Ինկաների,
այցի զամ փակ աչքերով, որ
չտեսնեմ մահասարտու ո կերպա-
բանափոխութիւնը մեր:

Ինք ամիս մենք մեր պատմու-
թեան հետ էինք երեստ երես: Եւ
այդ բնթացքում զգացինք, որ
ժողովրդի հոգեկան ուժը տիկո-
րական զօրութեամբ է լի: Մենք
զաանք մեր ուժը եւ Հպարտ էինք
զբանով, ու ժեղ էինք զբանով:
Դա այնքան մեծ գանձ էր, այն-
քան մեծ յաղթանակ, որ բնու-
թիւնն անզամ շատ Համարեց...

Մեր ոսկերեքան պատմիչները
քանի՛ք-քանի՛ք զարհուրելի երկ-
բաշարժեր, տեսակ — տեսակ
ազատներ են նկարագրել իրենց
ժամանակագրութիւններում: Եւ
քանի անզամ են Հոտայել, ասե-
լով՝ երկիրս, աւա՛ղ, մարդաթափ
եղաւ: Հիմա դարձեալ Հայոց աշ-
խարհը մարդաթափ եղաւ, անմը-
խիթար վիշտ պատճառելով իր
զաւակներին, որ կան ի Հայաս-
տան եւ ի տիտոս աշխարհի:

Մի խաղաղ տարի, երբ պնաց-
քով զնում էի՝ հիմա ոչ մի կերպ
չեմ կարողանում յիշել, թէ ուր, մի
կորճ պահ կանգատ եկաւ Նալ-



քանդ կրակայարանում: Երեկոյ էր, սարերի վրայ դունաւոր ստուերներ կին քայլում էր կուժանկանաւ աղջիկ կանգնած էին կառամատոյցում, գնացրի ուղեկցողը նրանց յանձնեց մեթակներէ մի չքեղ փունջ, որ, կրեի, պատուիրուած էր հանդիսաւ որ օրուայ առթի: Տարիներ են անցել: Աչքիս առաջ են աղջիկները՝ մպտուն, ծաղկեփունջը գրկած: Աչքիս առաջ է սուս փոքրիկ եկեղեցին: Եւ ճայրածուտի մարմրոց վարդապոյնը, որ պարուրել էր նայրանդ պիղն ու նրան գրկող սարերը: Գնացքը շարժուեց. պատու հաններում իրար հետեւից վառու ու կին յայտնուեց...

Այսպէս թող մնայ տեսող իմ աչքերի, իմ հոգու մէջ, մեր փոքրիկ պիղ նայրանդ, որ հիմա չկաս:

Ես վախենում եմ մտովի նոյնիսկ ծառենայ իմ ծննդավայրին, լենինականին, որի իւրաքանչիւր շնչու որ ու անշուշտ թանկ է ինձ

համար: Չեմ ստուժ՝ չեմ ու ողբում, քայքայելու չիչեմ ճիւղմայրիքն ճարարապետներին ու Գիւմրուայ վարպետներին, որոնք ձեռքերով շոշափում էին հայրենի քաղաքի պատերը՝ զբանք իրենց գեղեցկութեամբ գուրս բերելու համար ձեւի շերտերից:

Ե՛, քաղաքն էր գեղեցիկ, ե՛ մարդիկ:

Ե՛, քաղաքն էր չքեղ, ե՛ մարդկանց հոգիները: Հարազատին կորցրած մարդիկ, գիտէ չէ՞, ուզում են թուել այն բարեմասնութիւնները, որ աւա՛ղ, իր հետ տարաւ դնացողը: Հիմա մենք ո՛րք յիշենք եւ ո՛րք մոռանանք: Ո՛րք յիշենք, երբ մի տարեց մարդ, պիւր իր բանած ողբում էր, «Գիւմրիս մեծաւ, Գիւմրիս մեծաւ...»:

Գիւմրիս իսպաղ մի տարի, քաղաքի համայնապատկերը գիտելու համար բարձրացել էինք Ամենափրկիչ եկեղեցու վերին նիշերը: Կատուցողը, Արդար Աս-

նուկր, ամէն առաւօտ կտորով գնացել է Անի, դիտել Մայր տաճարը ու վերագտնալով, իր քաղաքի կենարտնում կանդնեցրել է չքեղ եկեղեցին:

Բարձրու՛մ, գմբէթը զրկող զարդազօտու մէջ եւ նկատեցի զլիւթկոր գանգակներ, որոնք իրարից բաժանուած էին բազմիցս խուշորացած արցունքի քարէ կաթիլներով: Հիմա չորս կողմն աւերակ է, իսկ աւերակի վրայ թափուած են արցունքի քարէ կաթիլները:

Մեր պատմիչներէ նման առնե՞ք՝ աւա՛ղ, փառացի անցաւ որաց, եւ ուժ գտնենք ապրելու: Քանզի Հայ ժողովրդի Հազարամեակներէ պատմութիւնը մոխիրներից յառնելու շատ օրինակներ է առել:

Ուժ գտէք ձեր մէջ, իմ երիտասարդ զրշակից ընկերներ, ուժ գաւէք նկարագրելու այն աստապալից այխատանքը, որ մեր ժողովուրդը թափելու է աւերակների վրայ նոր լենինական կառուցելու համար: Տարիներ առաջ ի՞նչ սիրով գրեցի՝ «Գիւմրուայ երկրորդ երիտասարդութիւնը» չին քաղաքը վերականգնելու առիթով: Ձեզ աւելի ծանր գործ բաժին ընկաւ՝ վերականգնել թէ՛ չին, թէ՛ նոր քաղաքը եւ գրել՝ «Գիւմրուայ երրորդ երիտասարդութիւնը»:

Ի տես Աստծոյ, միայն թէ մի՛ մոռացէք այն, ինչ եւ լսեցի տաբեց վարպետներից ու գրեցի իմ յօդուածու՛մ:

1926 թուականի երկրաշարժը Գիւմրուայ չին տներէ համար քննութիւն է եղել: Դաժան երկ-

րաշարժ էր, որ շատ բան քանդեց եւ ստիպեց երգ կապել: «Ժամը վեցին ժածքը էլաւ, Գիւմրին աւերեց»...

Երկրաշարժի ինը բայանոց գօտի: Իսկ չիմա նաեւ՝ տաւր: Հին վարպետները թէեւ ճշգրիտ չափիչ սարքեր չեն ունեցել, բայց իմացել են՝ երկրաշարժի կարմիր գիծը կարող է երկար լուել, սակայն, ժամանակ առ ժամանակ, արթնանում է: Գիտէի՞ն տարեց վարպետները, որ ասում էին. մի ճանապարհ կայ միայն՝ ամուր կառուցել: Քարով, կրաշագարտով կուել, կոփել, բնութեան թելադրանքին անսույլ, եւ նրանց կառուցած տները դիմադրաւեցին սահմոկեցուցիչ եօթին Դեկտեմբերի 1988 թուականի:

Մեր կորուստը տասնապատիկ պակաս կը լինէր, եթէ դարերի փորձով ձեռք բերածը դառնար չափանիշ...

Մարդիկ կան, որ յաճախ նոյն երազներն են տեսնում: Ես էլ տեսնում եմ լենինականը: Նրա չին ու նոր փողոցները, նրա եկեղեցիները, քանդակազարդ գրուներն ու քիւրը: Նոյնիսկ չին՝ սայալատակ մայթերն եմ տեսնում: Վերջին անգամ երազումս լենինականը տեսայ չքեղ ծաղիկների մէջ: Փողոցները, մայթերը, տների պատերը, կաուրները ծածկուած էին զունափառ ծաղիկներով:

Երազներես բոլոր ծաղիկները թող լինեն ընծայ իմ հայրենակիցների անանուն չիրմներին:

ՄԱՐԳՕ ՂՈՒԿԱՍԵԱՆ



7 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1988

Եւ ցաւերից արդէ՛ն յոգնած,
 Բախտի յեզին խմած արդէն,
 Էլ ձեր ցաւին ո՛նց դիմանամ,
 Փլատակներ, փլատակներ:

Սրտիս մէջ խոց, ու աչքս՝ բաց,
 Շուրջս մահե՛ր, մահե՛ր, մահե՛ր,
 Այս կորստին ո՛նց դիմանամ,
 Փլատակներ, փլատակներ:

Մենք՝ ոսկեճեռ ու շինարար,
 Մենք՝ ճակատբաց ու դպրատէր,
 Խաչքարին ի՛նչ պատասխան տամ,
 Փլատակներ, փլատակներ:

Ելնեմ, սրբեմ աչքերս բաց,
 Մէջքս շտկեմ, ստի՛կ կանգնեմ,
 Որ կարենամ ծաղկե՛լ դարձեալ,
 Ձեր որբ գրկո՛ւմ, փլատակներ...

ԱՆԱՀԻՏ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Հ. ԽԱԶԱՏՐՆԱՆ

ԴԻՄԱՆԱԼ, ՏՈԿԱԼ



Զվհատուեմք, ուժ անոնք եւ երախտագիտութեամբ ընդունենք բարեկամ ժողովուրդներն ավէն տեսակ օգնութիւն: Աշխատենք քիչ նեղութիւն տալ ուրիշներին: Քոչ հայ մայրերը որդեգրեն մեր սրբերին. քոչ նրանք հասակ անեն հայոց երկնքի տակ: Հայաստանի ուժը նրա սրբերի մէջն է:

ՀԱՅ ԽԱԶԱՏՐՆԱՆ

Մեր բախտի պէս նորից նեղք տուեց հայկական հողը՝ ահաւոր դժբախտութիւն պատճառելով հայ ժողովրդին: Ահագնասաստ երկրաշարժից դառն Մասիսի ճեղք տուած լանջերը պատմահայր Մովսէս հորեմացին անուանել է վիհ: Փամբակ-Շիրակի երկրամասում Դեկտեմբերի 7ին տեղի ունեցած երկրաշարժը այդպիսի վիհ բացեց մեր ժողովրդի կենսազրուօքան մէջ: Այդ ճեղք-վիհը խլեց մեր սերնդին բաժին հասած խնդութիւնը: Սա մեր դժխեմ ճակատագիրն է, որը կարող է մէկ օրում հազար տարւայ բաժին դժբախտութիւն հասցնել մեզ: Երեւի մենք լիաբո՛ւք ծիծաղելու իրաւունք չունենք, երեւի մեր ժպիտներն անգամ պիտի մեղք ունենան:

Ինչ կարող ես անել, սա է Հայաստան աշխարհը: Այս հողը հազար ցնցում է ունեցել: 735 թուականի Յուլիսի 21ի երկրաշարժից կործանուեց 10 հազար բնակիչ ունեցող Մոզ քաղաքը, եւ սասափահար մեր հները այնքան վա՛յ ձոր, վա՛յ ձոր արեցին, որ գաւառը կոչուեց վայոց ձոր: 893 թուականի երկրաշարժից՝ կործանուեց մեծահարուստ Դուինը, 1308 թուականի երկրաշարժից Տաթևի վանքը, 1319 թուականի երկրաշարժից՝ շքեղաշուք Անի, 1679 թուականի երկրաշարժից՝ Գառնիի պերճ տաճարը: 1840 թուականի երկրաշարժի ժամանակ կործանուեց եւ Մասիսից պսկուած ժայռաբեկոյնների տակ մնաց հոչակատար Ակոռի գիւղը: Այրարատ նահանգի Մասիսցոտն գաւառի այս գիւղը Հոռոմի երկու շափ տարի է ունեցել: Գերմանացի Ցանապարհորդ, աշխարհագրագետ ու բնագէտ Մօրից վակները այդ երկրաշարժից երեք տարի անց՝ 1843 թուականին, հաշատուր Աբովեանի հետ բարձրանում է Ակոռի գիւղի տեղամէք: Նրան գարմացնում է մի բան՝ երկրաշարժն Ակոռից ոչ մի հետք չի բողբի, բայց ահա գիւղի նշանաւոր այգուց կանգուն է մնացել 13 ծիրաններ:

— Այսպիսի հրաշք կարող է միայն Հայոց աշխարհում լինել, — գարմացած բացականչել է Մօրից վակները: — Ամէն ինչ կործանուել է, համարեա՛ բան չի մնացել, բայց այդ ամենակարող շարժը չի կարողացել գետին տապալել հայկական ծիրաններին: Զէ, հաշատուր, սա մեծ խոր-

հուրդ ունի: Դիրանը հայկական երկրի խորհրդանիշն է: Այս կանգուն ծիրաննիններ կարծես թէ ուզում են մեզ ասել, որ ինչ արհաւիրք էլ լինի՝ Հայաստանը հուր-յախտեան կանգուն կը մնայ: Խորհուրդ ունի նաեւ 13 թիւը, որը հաւաստում է. թէ ոչ մի պատահականութիւն չի կարող աշխարհի երեսից վերացնել հայ ժողովրդին:

Սա է Հայաստան աշխարհը:

Վերջին հինգ հազար տարում հայկական ոչ մի բնակավայրում այնքան կործանարար երկրաշարժ չի եղել, որքան Երզնկայում: Հայերը այս քաղաքը գրեթէ հիմնովին վերակերտել են քսան ամիսում: Այդ պատճառով էլ Երզնկայի վերակառուցումը դարձել է հայ մարդու համբերութեան չափանիշ: *«Մարդը պէտք է հայի համբերութիւն ունենայ, որ քսան երգնկա չիւնէ»* —, ասում են յոյները մեր մասին:

1926 թուականի Հոկտեմբերի 22ին Լեւինականի կործանիչ երկրաշարժի ժամանակ, որի ուժգնութիւնը հասել է 8-9 բալի, գոհուել ու ծանր վիրաւորուել է 600 մարդ: Իսկ անախտեմբերի 7ին, հայոց այդ սուօրը, մեծ միանգամից կորցրինք մի քանի տասնեակ հազար մարդ: Սոսկալի է: Կարծես մեր դժխեմ նակատագիրն այնպէս է անում, որ մեծ միշտ մնանք փոքր ածու:

Սա է Հայաստան աշխարհը:

Երկրաշարժի մեր անմեղ գոհերը աւելի քաղցրացրին ու հայացրին մեր հոգը: Մենք ուրիշ գնալու տեղ չունենք: Այսուհետեւ էլ մեր հաւատամբը պիտի դարձնենք Համօ Սահեանի նշանաւոր սոսղը-

Ախր, ես ինչպէ՞ս վեր կենամ գնամ...

Զվհատուենք, ուժ անենք եւ երախտագիտութեամբ ընդունենք բարեկամ ժողովուրդների ամէն տեսակ օգնութիւն: Աշխատենք քիչ նեղութիւն տալ ուրիշներին. թող հայ մայրերը որդեգրեն մեր որբերին, թող նրանք հասակ առնեն հայոց երկնքի տակ: Հայաստանի ուժը նրա որբերի մէջ է:

Տոկա՛, երկիր Նայիրի, յանկարծառես արհաւիրքներով հող իմ հարգատ:

Տոկա՛, անհաշիւ որդիներդ գոհաբերող, բայց ողբերի համար բիւրացատիկ սիրելի Հայաստան աշխարհ:

Տոկա՛, ազգ իմ հայկեան, մեծ սրտի տէր իմ փոքր ածու:

ՀԱՅԿ ԽԱԶԱՏԻՆ

Ն. ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԼՈՅՍԻ ՇՈՂ ՄԸ...



Գարձնայ պիտի ծաղկի հայրենի հողը, հայ գիւղացին արեւածաղին իր հունտերը պիտի նետէ հողի բաց գիրկին մէջ ու իրիկնամուտին երբանկութեան վառ յոյսերով պիտի վերադառնայ:

ՆԱՐ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Պահեր կան, որոնց մէջ ամբողջ դար մը կը խտանայ ու մարդոց նայումաճենքը դարու մը կսկիծն ու ցասումը կը ցուացնեն:

Այդ պահն էր, երբ մեր հայրենի երկիրն ուժգնօրէն կը ցնցուէր: Ո՞ւր էինք մենք արդեօք. առօրեան ի՞նչ թափով կլաներ էր մեզ, երբ անդին, հայրենի սարահարթին վրայ տարերային անաւոր շարժում մը տեղի կ'ունենար: Երկրի ընդերքն էր, որ կը խաղար թրջաբարոյ ու անողոք խաղ մը:

Այդ պահը աւագամրրիկի մեճն եկեր ու անցեր էր...
Կովկաս...

Մեր հողին հեռաւոր սէրը, խարիսխը մեր տենչանքներում:

Կը լսեմ հաղին դղրդիւնն ու մարդոց ահարկու ճիչը, որ փուլ եկող քարակոյտերու տակէն երկինք կը բարձրանայ. մայրեր իրենց աչքերը Բարձրեալին յառած օգնութիւն կ'աղերսեն, մինչ հողը կը խլրտի իրենց ստէրումն տակ ու կը քաշէ գիրենք...

Ի՞նչ հրանիւք է այդ, որ կը խախտէ հաւասարակշռութիւնը մակերեսային. ի՞նչ մեծազորոյ գագան է այդ, որ իր բարկութիւնը կը թափէ մահկանացունքներում վրայ: Զայրոյթով պատարուն բնութիւնը իբրեւ թիրախ ընտրէր է մեր երկիրը ու, յափրացած կը քայքայէ ինքզինք, իր մէջ ընդունելու համար անմեղ ու անօգ մարդոց մարմինները... Ու անոնք կ'ընկղմին, կը խորանուզուին ղէպի արգանդը երկրին, կը գահավիժին...: Մահասփիւռ սաքսափ մը կը խռչտանգէ գիրենք ու զմուսուած ղէմքերով մահկանացուները կը գիրկնդխառնուին մահուան հետ:

Ի՞նչ եղկեի հեծիւն է, որ գետնին ժայթոզ փռչիւն հետ կը բարձրանայ երկինք, որ մարդոց նայումաճենքը կը հանդիպին Աստուծոյ: Կը լսեմ փլատակներուն տակէն կիսամեռ մարդոց հետգիտէ շիջող ազերսը. որքա՞ն ազիւզորմ է այդ ձայնը, որքա՞ն խռովիչ, անդիմադրելի. ու անոնք կը մահանան հազար հազարներով, միանգամայն, միասնաբար, բուպի մը մէջ, երբ մէկը միւսին մահը իր աչքերուն մէջ պարփակած կը մահանայ:



Եւ հոգեվարքը կ'երկարի. հոգը արիւն կը ծծէ ու կ'երչանկանայ կարծես, կը յագեցնայ ու յգփացած ճիւղի պէս կը հանգարտի կրկին:
 Հիմա ողջ էութեանս մէջ կը տարածուի հայտրդիներու ողբը ու սրտակեզծէ այդ վիշտը կը կատարացնէ մարմինս:
 Սպիտակ, կենիւնական, կիրովական...
 Հեռուոր տեղանքները իմ տառասփիւռ հոգիիս:
 Այժմ կը պատկերացնեմ ձեր աւերակներուն մէջ ամպատանք բազմաւոր բիր մարմինները ծերերու, մանուկներու, երիտասարդներու...

Ինչպէ՞ս կրիկ այսֆան տառապանք մեր վտիտ ուսերուն վրայ, մեր տառապալից հոգիներուն խորը: Տակաւին մեր էութեան մէջ կը խլրտի եղեռնի սարսափազգու անդրադարձը: Մենք շտեմանք կոտորածը, բայց կատարածի ուրուականը հայածեց մեզ ընդմիշտ: Մեր պատմութիւնը, գրականութիւնն ու երաժշտութիւնը մեկամազձուտ ու եզերական դարձան: Բայց մենք շալկեցինք գայն իբրեւ մեր իսաշը՝ հայոց Գոգոթքան:
 Այժմ երկրաշարժի արեաւիթքն է. մենք շտեմանք գայն կրկին, բայց անոր վիշտը պիտի հալածէ մեզ ընդմիշտ: Չէ որ մենք անբաժանելի միասնութիւն ենք. կ'ապրինք իրարմէ հեռու, սակայն կը զգանք իբրեւ հաւաքական մէկ ամբողջութիւն, որ իբրեւ հայ կը շնչէ աշխարհի տարածքին: Մենք զանցած ենք ժամանակի ու միջոցի շղթաները:

Մտաբերեցէ՛ք Տէր-Ջօրի անապատին վրայ գծագրուած մարդկային քստմնելի ողբերգութիւնը ու ձեր մարմինը պիտի փշափազուի: Պատկերացուցէ՛ք Միպերիոյ մարդակուլ տարածքին մահացող անմեղ հայտրդիները ու տեսէ՛ք, թէ որքան ուժեղ է գիմարքիլու ու վերապրելու մեր յատկութիւնը: Այս բոլորը մենք տարիք ենք լուսեամբ ու անընկնելի կամքով:

Յիշողութեանս մէջ կենդանի է ահարկու, սարսափելի պատկեր մը. գծագրուած մարդոց դէմքերուն վրայ: Սարսափ մը, որ ենթագիտակցութեան այլերէն դէպի լոյս աշխարհ կու գայ ու կը յուզէ մարդկային հոգիս: Այդ սարսափը բոլշեիկեան սեծիմէն ազատած ուսմանհայերու դէմքին

տեսած եմ: Ամենք ազատ աշխարհի մէջ, դրան զարկին հետ կը քարանային պահ մը, գուցէ կ'այլանդակէին վերադառնալով դէպի անցեալ, ու կ'ապրէին վերյուշը այն սարսափելի վայրին, զոր ճաշակեր էին իրենց երկրին մէջ: Կը յիշէին այն պահը, երբ ոստիկանութիւնը դուռները խփելով խուզարկութիւն ու ձերբակալութիւն կ'ընէր: Այդ մղձաւանջին յաճախանքը ապրելէ ետք, ամենք կը բաժնային դուռը եւ ես կը տեսնէի անոնց խոշտանգուած հոգիներուն անդրադարձը:

Այժմ այդ չքնազ ու անմեղ հայորդիներուն ղէմքին զծագրուած սեւն է, որ գուգահեռաբար կը կենդանանայ մտապատկերիս մէջ ամէն անգամ որ երկրաշարժը կը յիշեմ: Ահաբեկուածութեան այդ սրտաճմլիկ տեսարանը, որ վայրի անպարագիծ ճնշումին տակ ազուցեք է մարդկային էակներ:

Մենք հաւատացիր էինք, որ մայր հողի վրայ ստեղծուած սրբէկ գոյավիճակ անցողակի է, գուցէ այլասերող, բայց ոչ վերջնական: Անկորընչելի ու մնայունը հողն է միայն:

Ու մենք հեռուէն լսեցինք հողին յեղակարծ խլրտումը...

Ի՞նչ երազներ փշրուեցան մեր արեւուն մէջ, երկնակամարը մըքաղեցաւ մեր աչքերուն դէմ ու ես անհունին մէջ կորսուած արդարութեան կշիռքը փնտռեցի: Եւ անհա յոյսի շող մը համատարած մթութեան ընդմէջէն հանդիպեցաւ Քաթալի հայեացքիս: Եւ ես յիշեցի բնութեան օրէնքը, որուն համաձայն շարժող տարածութիւնը պիտի հանգչի կրկին, պիտի կարծրանայ ու զարձեւայ իր մէջ պիտի ընդունի իր գաւակները: Դարձեալ պիտի ծագի հայրենի հողը, հայ գիւղացին արեւածագին իր հունտերը պիտի նետէ հողի բաց գիրկին մէջ ու իրիկնամուտին երբանկութեան վառ յոյսերով պիտի վերադառնայ: Իր բախանչիւր լուսաբացին հետ աշխարհ եկող երեխան իր առաջին ճիշդ պիտի բարձրացնէ ծովածաւալ կապոյտն ի վեր...

ՆԱԶ ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ



ՅՈՒՆՈՒԱՐ 15ԻՆ՝

ՍՏԵՓԱՆԱԻԱՆՈՒՄ

Օրք ճանր էր:
 Բայց պարզ էր մի բան: պետք է
 բայցի, յուսու առ ժուճի բայցի Մեծ
 Հայրենականում զո՛ւումների
 յուշանամարք տանող նանա-
 պարտի, բայցի Հայաստանի սեւե-
 ղից ու խնամարձան գրուների մո-
 ազ ու առիտի, երկրի ցուրի միջո-
 ցով ու՝ աշխարհի: Քնկուց գծուար
 է, բայց անուճ էր գուռի բազմաբ-
 ճնն թէ փոքր, տեղացի թէ՛ հիւր:
 Գնալով խոստում ու զանդազուճ
 էր մարդկանց հասար: Արք տա-
 կենները ներս մասն յուշանամա-
 լիքի մուտքից՝ մաճը 11ն անց էր
 յետուն բուսլ... կամ մարդկանց
 գեան անուղմուկ հասում էր հայոց
 երկրաշարժի քառասուններոց
 որուայ միջով:

Համայնքի այն անկիւնում, ուր
 Սուճալիքի զուճերի յուշարձանն
 է, Արքայի մարդու լույս էր գաւա-
 կի՝ Արմեն Բակրբանի մեղքով
 կերակու ու կանգնեցրել է մի յու-
 շարձան՝ իայոց մեծ երկրաշարժի
 զո՛ւների յիշատակին, որի յուրին էլ
 զնալով մոգնում էր մարդու բ-
 զԻ:

Դիտողի հայկուց հայտարարում
 Արքայի քարակերտ տաճան է (տա-
 յան): Այ չես նախկանում, տասար
 փլուզուող շէնքերի հակայ բնկոր-
 ներից է գլուխը պաշտպանում,
 թէ՛ աննախադէպ ողբերգութեան
 իմաց մանրութիւնից: Այլ Գար-
 զապու երկրաշարժի վայրում չե-
 դած Արքայի տասար գլուխն առել
 է մեղքերի մէջ, զիմքն է ուզում
 մանկից: Նա անուշում է, յուսու է
 անաշում կուտուայ մարում ու երե-
 բակում զո՛ւում անբանեմանից,
 որ... ինքն ապրում է: Այ տարած-

ում, սիրու կեցեցելով ախիք տա-
 յն ու արձագանգում կուց կկան
 տասար շփոթանում... զուտա-
 նում... զոտանում... Տասնի՛նչ
 անի...: Միտում: Գիտում, որ բաց-
 ման խոսք տալը չեղու, որովն-
 տեւ տաճան ինքն էր խոսում, տա-
 ար չէր յուսում, տաճան ինքը խոսք
 է...: Փլատակների տակից կեղծ
 փրկութեան կանչ է ու ազերու:
 Անր տկաններում տասար յայն
 ու կոճն էր, տասար կակունն էր:
 Արքայուճի աղն ուչը էր կկո-
 ցում...

Վերին մաղիկ զնողները ներ-
 չին զարձերի ու զիմուտական
 ճառայութեան սպաներն էին,
 տուն ու նարազաններ կորցր-
 րան, Ստեփանակերտում ժամա-
 նակաւորապէս ապաստանած
 պրում լացի պէս զողողողով նե-
 ապան՝ քարակերտ տասար ոտք-
 ըրի զողի ճառ թողնելով կեանու
 նի, զերից ՚ի սուտան մի պակի՝
 երկուտան ՌՌ կարմիր կակաչնե-
 րով... (Անր սեփական թղթակիրը):

Ստեփանուտան



Ա. ՍԱՀԱԿԵԱՆ

ԴԻՄԱՑԻՐ, ԺՈՂՈՎՈՒՐԴ

Հեղինակն իր հոնորարը փոխանցում է երկրաշարժից տուժածներին օգնութեան ֆոնդին:

Այս ի՞նչ պատահեց հայոց աշխարհին.
 Ողբերգութի՛ւն է համաշխարհային...
 Մի բուռ ազգ էինք, դարձել ենք կէս բուռ,
 Իսկ այդ կէս բուռն էլ արտասուք է լուռ:
 Տէ՛ր Աստուած, շատ կան չոր անապատներ,
 Հենց այստե՞զ պէտք է երկրաշարժ լինէր —
 Այստե՛զ, ուր փրկուած
 Ազգն է հաւատուած:
 Միշտ ուժեղի՞ն է մեծ ցար տրուած...
 Ա՛խ, ամբողջ կեանքում ինչո՞ւ է տեսնես
 Յաւն ընկերացել մեզ հետ մշտապէս:
 Ինչո՞ւ է իրօք, այդպէս ստացում՝
 Կարկուտը ծեծած տեղն է միշտ ծեծում:
 Իրաւ է ասել վեհափառը Հայր՝
 Ո՞ր մեղքի համար...
 Մենք այլոց տունը երբեք չենք բանդել,
 Էլ ինչո՞ւ պիտի մեր տունը բանդուէր:
 Մեր պաշտած հողը մեզ իր գիրկն առաւ,
 Մեր պաշտած քարը մեր գլխին ընկաւ...
 Սա նոր տասնհինգ թուական չի՞ նենգ...
 Սակայն ի՞նչ անենք, ո՞ւմ դէմ բողոքենք:
 Զոհեր ենք տեսել դարերով անվերջ,
 Բայց այսօր գոհեր՝ մի վայրկեանի մէ՞ջ:
 Թուում է, թէ սա երազ է հիմա
 Եւ որտեղ — որ է՝ պիտի վերջանայ:
 Բայց արտո՞ւ, արա՞դ, իսկութիւն է սա.
 Կրկին հայութեան մի մասը չկայ:
 Օ՞, լեռնական... Գիւմրի փառաւոր,
 Միծաղիդ օրը դարձաւ Սգի օր:



Ամենաուրախ ֆազաբ մեր լաւ
 Ամենատխուր ֆազաբ դարձաւ:
 Սեւ է Սպիտակ ֆազաբն էլ ահա,
 Որպէս մի սեւ վէրք՝ մեր սրտի վրայ:
 Ա՛խ, դու գովական մեր կիրովական,
 Փլատակներդ՝ մի-մի ուրուական:
 Լոռուայ սարերի միամիտ Գուգարք,
 Դարձար աւերի-ցաւի ստուգարք:
 Առողջ-բախտաւոր Ստեփանաւան,
 Դարձար վիրաւոր, դարձար... Սգաւան:
 Եւ ամէն մի կէտ, ուր եղաւ ցնցում,
 Ինժրակտի բոյն է դարձել մեր սրտում:
 Չե՛նք մտռանալու յար եւ յաւիտեան
 Այն, ինչ որ տեւեց մի ֆանի վայրկեան.
 Այն մանչուկներին, որ նոր ծնուեցին
 Եւ նոյն պահին էլ, ա՛խ, կործանուեցին:
 Կամ նրանց, ովքեր ձեռքին խաղալիք,
 Հենց իրե՛նք դարձան կեանքի խաղալիք:
 Ինչպէ՛ս մտռանանք դասեր ու դպրոց,
 Որո՞նք չեն տեսնի՝ էլ դասամիջոց...
 Ոմանք՝ դէմքերին ժպիտ եւ ծիծաղ,
 Գոյք էին գնել՝ ուղարկեն Արցախ...
 Ոմանք էլ՝ կահոյք եւ նուագարան,
 Որ տեղափոխուեն նոր բնակարան...
 Աւարտուել է օրն աշխատանքային,
 Բայց տուն չի դարձել հոսքը մարդկային:
 Երազներ ունէր ամէն-ամէն մարդ,
 Եւ երազները մնացին կիսատ:
 Քաւոր շունեցաւ ֆանի՛ հարս, սանիկ,
 Եւ չկայացաւ ֆանի՛ հարսանիք...
 Էլ չե՛նք հանդիպի մեր ընկերներին,
 Հարազատներին, բարեկամներին:
 Ժամադրուել են ովքեր նախապէս,
 Էլ չե՛նք հանդիպի յաւիտենապէս:
 Փլատակներից ծուխ է դուրս գալիս,
 Եւ մեր աչքերից ծուխ է դուրս գալիս.
 Մայրը փնտռում է իր որդիներին,
 Որդին փնտռում է իր ծնողներին:
 Եւ շատ-շատերը, աւա՛ղ, չեն գտնում —
 Դեռ երկրաշա՛րժ է մարդկանց սրտերում:
 Այս երկրաշարժը կը տեւի դարեր,
 Այս երկրաշարժը դժուա՛ր է տանել:
 Յաւերժ կը հնչեն ականջներում մեր
 Օգնութեան կանչող զանազան ձայներ:

Յաւերժ կ'երեւան աչքերի դէմ մեր
 հորհրդերից պարզուած բազմաթիւ ձեռքեր:
 Այո, կը յիշենք, նոյնիսկ կը գրենք,
 Եթէ շատերս չխելագարուենք...
 Բայց այս օրերին կայ մի լուկ խորհուրդ —
 Պիտի դիմանա՛ս, իմ հայ ժողովուրդ:
 Դեռ պիտի յաղթես, «Ապրելու՛վ յաղթես»,
 Եւ նաեւ, նաեւ... Երժարո՛վ յաղթես:
 Մենք չմնացինք աշխարհում մենակ,
 Ամբողջ աշխարհը դարձաւ մեզ յենակ:
 Ամբողջ աշխարհը դարձաւ մեծ թիկունք,
 Շնորհակալ ենք բոլորին յատուկ:
 Շատ բան կորցրինք, բայց գտանք շատ սէր,
 Զմբան ցրտերում՝ ջերմագին սրտեր:
 Շատ մարդ սպաննուեց, շատ մարդ սպաննուեց,
 Մարդկութի՛ւնը սակայն չսպաննուեց:
 Մարդիկ գոհուեցին, ազնուութիւնը՝ ո՛չ —
 Սա՛ է պահելու ժողովուրդին ողջ:
 Փլուզումները անթի՛ւ են, բազում,
 Բայց չկայ մարդկանց խղճի՛ փլուզում...
 Եւ ասա՛, Աստուած (եթէ խիղճ ունես) —
 Ի՞նչ նակատագիր տուեցիր դու մեզ.
 Արդէն յոգնե՛լ ենք ողբերգութիւնից,
 Ամէն տեսակի դժբախտութիւնից...
 Մենք այսօր շա՛տ ենք ցնցուա՛ծ, բզկտուած...
 Թող վերջին վի՛շտը լինի սա, Աստուա՛ծ:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿԵԱՆ

Ի. ՄԱՐԵԱՆ

ԽՕՍԳ ՏԱԻԻ ԵԻ
ԱՌՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ֆիդայական ազատագրական շարժման հերոսական օրերին կար սրի հարուածի պէս շառաշուն մի կարգախօս. *«Ո՛վ գարկուի, գաւաճան է»*: Մեր այս դժուար, նակատագրական պահին թոյլ տուէ՛ք այն փոքր-ինչ վերափոխել. *«Ո՛վ յուսահատուի, գաւաճան է»*:

ԻԳՆԱՏ ՄԱՐԵԱՆ

Մեր շուրթերից հնչող ամէն բառ ցաւի միջ է, ներսում զսպուած ամէն զգացում՝ ինքնատանց տուայտանք, եւ արդէն ուշ է հաւատ-աղերսանքով մայել երկինք, քէ՛ *«Տէր, մի տար դժեղ ի փորձու թիւն»*: Ես, որ հաւատացել եմ Աստծու գթութեանը, հիմա պարտադրուած եմ խռատվանել. մեր երկրն-ում ա՛յ արդար ուժ կայ, ա՛յ լուսաւոր թիզն, մեր երկինքը դատա՛րկ, դատարկ է, հարագատներս: Բիրյիական այս մի բուռ հողի վրայ մե՛ք ենք ու մեր անընդհատ նորոգուող տառապանքը: Ու երկրաշարժ կոչուող այս զարհուրելի պատիժը՝ բազմաճանակ մահերով ու վիրատորներով, զանգուածային փլուզումներով: Կա վրայ հասաւ մեր անենադժուար պահին, երբ հոգու վիրատորանքից տնճալով մտածում էինք, քէ ինչպէ՛ս, որտե՛ղ տեղաւորենք իրենց բնակավայրերը թողած տասնեակ հազարաւոր մեր հարագատներին: Վրայ հասաւ տհաւոր դաժանութեամբ՝ մեզ ազգովի դարձնելով սզոյ տառապալի թափօր...

Այս ծանր, չափազանց ծանր ու ող-

բերգական ժամին մեզ օգնութեան շատ ձեռներ են պարգոււած, բայց մենք ենք մեր ցաւի տէրը: Պիտի գթանք ու մխիթարենք, սիրենք ու ապաւինենք իրար, օգնենք միմեանց՝ պահպանելու ազգային մեր հպարտ ոգու առնականութիւնը: Ֆիդայական-ազատագրական շարժման հերոսական օրերին կար սրի հարուածի պէս շառաշուն մի կարգախօս. *«Ո՛վ գարկուի, գաւաճան է»*: Մեր այս դժուար նակատագրական պահին թոյլ տուէ՛ք այն փոքր-ինչ վերափոխել. *«Ո՛վ յուսահատուի, գաւաճան է»*: Այո, տուեալ ժամանակում մեզնից ամէն մէկի յուսահատութիւնը հոգեկան ինքնասպանութիւն է: Պարտաւոր ենք ատամներս սեղմած, վշտի ծանրութիւնից գլխահակ, արցունքներով յուզարկուած զոհերին եւ ձեռնամուխ լինել վիրատորների օգնութեանը, փլուզուած տների վերակառուցմանը, բազմահազար գազթականների ճակատագրին: Պարտաւոր ենք չփշրուելով, արժանապատուօրէն գոյատեւել, իրատունք չունենք մոռանալու, որ ազգի ուժը բոլոր առանձին հայերիս փիզի-

ֆական ու բարոյական բարձր յատկանիշները միասնացումն է: Համարենք, թէ մեր ճակատագիրը մեզինքն իւրաքանչիւրի մէջ մի Յօր է բնականորէն ու դիմանանք: Մենք տեսնում ենք արիւն յանձնողների անգիշտ հերքեր եւ մեր արքունեան աչքերում ազգային հպարտութեան լոյս է ցոյւում: Վստահ եմ, որ պետական-կառավարական ձեռնարկումներից բացի, ժողովուրդն իրեն յատուկ սրտացաւ կազմակերպութեամբ ուսէի կը կանգնի՝ ամէն ինչով օգնելու տուժեալ մարդկանց ու բնակավայրերին: Այո, պատիւ է այսպիսի ժողովրդի գաւակ լինելը:

Հայոց մեր երկինքը դատա՛րկ, դատարկ է՝ առանց արդար ուժի եւ լուսաւոր խղճի: Բայց փոխարէնը մե՛նք ենք լցուած զօրեղ վճռակառնութեամբ: Երեկոյեան ինձ պիտի գտնէր Բագուից մի կերպ Երեւան հասած ծանօթս՝ տեղեկանալու, թէ Գրադների միութիւնն ինչ է մտածում զազգայական իրենց վիճակի մասին: Զգանգեց: Երեւի ամաչեց, չհամարձակուեց ինքն էլ ի՛ր հոգսով ներկայանալ: Եթէ գտնէր, պիտի ասէի՝ բազում աղէտներ տեսած մեր ժողովուրդն այս մեծ ցաւի մէջ էլ չի կորցնի գլուխը, չի մոռանայ նաեւ իր հազարաւոր արինակիցների ողբերգական վիճակը: Մենք, հաւանաբար, նրանց տեղաւորելու համար պիտի գանգուածային բնակարանաշինութիւն սկսեինք՝ կառուցողների կամաւորական ջոկատներով, ամբողջ բանւորական ուժը, տեխնիկան եւ միութեան տրամադրելով բնակարանների կառուցմանը, հասնելով նրան, որ մեր սոսանողական շինարարները սեւահողային կամ ոչ սեւահողային ինչ-որ գօտիներ մեկնելու փոխարէն աշխատանք

ֆային ֆնուրիւն յանձնեն Հայաստանում: Բայց եզու մեծ աղէտը եւ հիմա երկու ծանր հոգս միաժամանակ ենք սկսելու փարատել: Կանենք, ես վստահ եմ: Մեր փութուած շէնքերը կրկին կը բարձրանան, ինչպէս Ամարասի վանքը, որն աւերել էին, որմնաքարերը լցրել Արաբսը, բայց յաջորդ լուսաբացին դարձեալ յառնեց իր ամբողջ առնական շէնքութեամբ: Յուսահատուող չպիտի լինի: Տիգրան Մանուրեանը պիտի շարունակի ստեղծագործել իր սեանչելի մեղեդիները: Հրանտ Մաքեռոսեանը չի կարող բողոքել համաշխարհային արժէքների հետ շափուող իր գրականութիւնը: Գրիգոր Գուրգազեանն աստուայ պէս պիտի քննի տիեզերքի առեղծուածային զազունիքները: Ի հարկէ, խորացուած ցաւով, բայց պիտի շարունակուի Հայաստանի ու հայ ժողովրդի ստեղծագործ կեանքը: Այս նախատարածական օրերը մենք պիտի յիշենք ու ժամանակ անց երեխաներին պատմենք, թէ ինչն ինչպէս եղաւ: Պարտաւոր ենք հիմա այնպէս անել, որ հետագայի մեր այդ պատմութեան մէջ ազգային հոգու առասպելական ուժը զօգանջի՝ ինչպէս եղել է մեզինքն զարեք առաջ, ինչպէս լինելու է մեզինքն զարեք յետոյ:

Մեր պատմութեամբ, աշխարհին մեր տուածով մենք վաղուց նուաճել ենք յանքժ գոյատեւելու իրաւունքը եւ այն մեզինքն չի կարող խել ոչ մի բարբարոս, ոչ մի ահաւոր պատիժ: Շարունակենք սպրել եւ վերստին ապացուցենք, որ հայ ժողովրդի հոգու մէջ փիւրկեան թռչուն է բնաւորուած: Ապրենք ու արարենք յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԻԳՆԱՏ ՄԱՄԵԱՆ

ՆՈՐԻՑ ԳՕՏԵՄԱՐՏ Է

... Ուզում եմ այս երկու ծնկերները դառնան երկրաշարժը
յադրելու մեր խորհրդանիշը, մեր գազանիքի խորհրդանիշը.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԵՔԻՋԵԱՆ

Տառապանք մեզ շատ սիրեց:

Շատ վեհացրիմ տառապանքը. սնեցիմ մեր հոգու հպարտու-
թեամբ, ազնուացրիմ, տուժառանգ բոլորից մերժուած անկոչ հիւրիմ, եւ
այլեւ չի հեռանում մեր օրախօսք: Այո՛, մենք գիտենք մեր խաչը արիւ-
սիրտ կրել, Գողգոթայի ճանապարհին մեր ծնկները չեն ծալում, բայց
չարայար սխալում է ճակատագիրը՝ մեր ժողովրդին կարծելով Գողգո-
թայի ճամբորդ: Ո՛չ, մենք չենք սիրում տառապանքը (ինչպէս գառանցել
էր մի բաճակապարտ), պարզապէս տառապանքին հանդիպելիս երկչոտի
պէս թիկունք չենք դառնում, դիմակայում ենք, գտնեմարտում ու անպայ-
ման յաղթում: Այդպէս է ամբողջ մեր հոգին: Դրանում է մեր հոգեւոր
առողջութիւնը:

Ինձ չափազանց երկար ուղեկցել են երկու գազանիք. ինչպէ՞ս է, որ
մարդկութեան ամենամեծ Մահը ապրած իմ ժողովուրդը մահերգ չի
ստեղծել, եւ ես Ապրիլի 24ը սգում եմ վերդիի, Բեւիթոգի, Մոցարտի մա-
հերգներով: Ինչպէ՞ս է, որ մարդկութեան արշալոյսից միմչեւ այսօր կա-
ռուցող իմ ժողովուրդը բանտ չի յղացել ու չի՛ կառուցել: Դա շինութեան
միակ տեսակն է, որին հայի մուրճը չի առել: Բայց չէ՞ որ հենց մեզ են բա-
ժին ընկել բանութեան ամենաբիրտ տեսակները: Կարող էր, չէ՞, իմքն էլ
բռնութեան դասեր առնել բռնաւորից:

Հիմա ես գիտեմ եւ ի հեծուկս Մահի ու բռնութեան վկայում եմ՝
հայոց ծայնամիջով մահերգ չի՛ գրուելու, ինչպէս որ հայոց մուրճով
բանտ չի՛ կառուցուելու:

Ու նորից իմ փոքրիկ, իմ Աշխարհ ժողովուրդը այնքան արիւն հե-
զեց, որ աննախադէպ է տարերային աղէտների արիւնոտ ճանապարհին:
Բայց տեսէ՛ք, թէ այդ արեան շուրջը ինչպէս փարթամ բողբոջել է Գուրբ,
այդ արիւնով ինչպէս միատրուեցին մարդիկ, ժողովուրդներ, պետու-
թիւններ, պրեզիդենտներ:

Բռնութեան ու լեցան տարիներ ապրած մեր երկիրը, ուր ար-
տօնած էր միայն երջանիկ լինել, տեսէ՛ք, թէ ինչպէս յարգեց Վիշուր, խո-
նարից գրօշները վշտի առաջ:

Այդ յարգանքը մենք վաստակել ենք, սակայն չափազանց հպարտ
ենք, որ զարդարուենք տառապանքով: Հոգին յանձնենք մեր թանկ գոհ-
ւածներին եւ թող ո՛չ վազը. ո՛չ յաւիտեան մեր արիւնը էլ չթափուի Բարե-
րին ու տատակներին: Նրա տեղը մեր սիրտն ու երակներն են: Մենք գործ
ու հենք կատարելու այս աշխարհի վրայ:

Լսեցի, որ աւերուած Սպիտակում երկրաշարժի չորրորդ օրը աւե-
րակներից դուրս են հանել երկու երեխայ՝ ծծակները բերանին, ողջ եւ
առողջ: Ձեւ ուզում հասկանալ, թէ դա ինչ երաշխ է: Ուզում եմ այս երկու
ծնկերները դառնան երկրաշարժը յաղթելու մեր խորհրդանիշը, մեր
Գազանիքի խորհրդանիշը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԵՔԻՋԵԱՆ



ՅԱՐԱՏԵԻՆԼՈՒ ՃԱՄԲԱՆ ԴՈՒ ԼԱԻ ԳԻՏԵՍ

... էլ ո՛վ, եթե ոչ դու, իմ ժողովուրդ, գիտի ճամբե՞ն ան ու
ժանից գեպի Լայր դուրս գալու:

ԳՈՂԱՐ ԳԱՍԳԱՐԵԱՆ

Անձայրամիր աշխարհի փորձիկ լուսն
Նանգրուան, գրախառնայր, պաշտելի
Նայոց Նոյ, դո՛ւ, էլ չգիտացար թո՞ զառակ-
ների փերջին աճիաների լլկուժներին ու
ծով տառապանքին: Զգիմացար ու...
ժայթքեցիր: Գիրկդ առար արին-բրտին-
բով բարդ ու ապառաժ դաղկեցնող որ-
դիններիդ՝ էս աշխարհի գաժանու թիւննե-
րից, անարդարութիւններից փրկելու՝
նպատակով:

Կրկին Աւարայր եւ կրկին Տէր-Զօր, եւ
կրկին Նայոս ճակատագիր... Ողբ ու լիւա-
նի, ճիչ ու անէճճի, յուսանաւորութեան ու
ցաւի ճիջից միթիւարանքի խօսք մենք
ուրկի՞ց գանձեր, բայց կաց... էլ ո՛վ, եթե
ոչ դու, իմ ժողովուրդ, գիտի ճամբե՞ն ան
ու՞ ժանից գեպի Լայր դուրս գալու: Բազ-

ժողար փորձութեամբ է արինեզ թրճը-
ւան ու կամքդ կոփուան, եւ տառապելա-
կան է սերդ, Նաւառոյ Նոյի, ժարդու, լոյ-
սի, ճշմարտութեան, արարման Նանգէպ,
տառապելական է պայքարդ դարերի
ակունքից դարերի Նոտուն գնալու:

Աշխարհի բազում կարեկից սրանք,
բիբաւար մեռեր եւ չեզ պարզուան, իմ
ժողովուրդ, չեզ սատար լինելու, ցաւդ
կիսելու, յոյսդ դորացնելու, որովհետեւ
գու այս աշխարհին գեռ շատ ես պէտք:

Դու ինքզ լաւ գիտես յարասեւելու
ճամբան, արեացի՛ր: (Ճնովիտական Հա-
լաստան, 11 Դեկտ. 1988):

ԳՈՂԱՐ ԳԱՍԳԱՐԵԱՆ

Ա. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆ, ԼԵՆԻՆԱԿԱՆ

Բայց թող լզակապի լեզվակամացիների ոգի՞՜ մեր ազգային
ոգու այդ քանկազի՞՞մ մասնիկը, որ Խառակեանն է՛ Երիզակ է՛ ծնել:

ԱԶԱՏՈՒՇԻ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Որե՛կ միայն Արցախն էր, այսօր Երրակն ու Լոռին, և՛ բոլորի համար
տեղ կայ մեր սրտերում, որտեղ էլ ծնուած լինենք, Արարատեանն դաշտավայ-
րում, թէ Սևանի ափին: Եւ Ինչքա՞ն պիտի ազգաստանայինք բոլորս, մեր ողջ
ժողովուրդը առանց լուսեցոց միամտութեան և՛ զի մրեցոց համոզ-հետոյ՞
բօսքի:

Քայլում ենք ընկերոջս հետ Լենինականի փողոցներով: Յիշում ենք մեր
երկնայեանն դրօսանքը այդ նոյն տեղերով, երբ տարիներ տառաջ խմբով եկել
էինք Լենինական. այն ժամանակ փողոցը լուսաւորուած էր ոչ միայն սիւներից
կախուած լապտերներով, այլևս Լենինականցիների բնակարաններից եկող
լոյսով: Քաղաքը ապրում էր, շնչում էր լիաթոք, քաղաքը մեզ պարտւում էր
Գրեմուքեանք, ու մենք հիանում էինք պատմական կենտրոնով, նրա տներով,
սալայատակով: Իսկ հիմա... Յուրա է, մշուշ, աւեր... Դադաղներ, դադաղներ
փողոցներում: Հողակոյտեր, որ երկն տներ էին, և՛ մարդիկ, որ խարոյկների
չուրջը նստած, տաք փայտանների մէջ փաթաթուած՝ գրուցում են: Ու լաց, ու
ողբ զրեթէ չի լուում: Այս անաւոր պատկերներն արդէն առօրեայ են դարձել:
Մարդկային ընկալու մե իր սահմաններն ու նի: Ազէտի չափերը վեր են մեր ըն-
կալման սահմաններից: Այլապէս բոլորս պէտք է խելագարուէինք:

Լենինական ժամում են, ինչպէս յայտնի է, երևանեան խճուղով: Նրա
երկու կողմից բարձրանում են հինգ յարկանի շէնքեր. դրանք բոլորք կանդուս
են, թէև վնասուած, ճեղքերով, թափուած քարերով: Եւ աւերածութիւնների
մասին լուրերը խճուղու սկզբում դեռ չափազանցուած էին թուում: Բայց անա
տառին աւերակը և՛ առաջին դադաղները, և՛ յետոյ արդէն մենք վարժը-
ւեցինք այդ տեսարաններին:

Յածրայարկ շէնքերը կանդուս են, իսկ բարձրայարկ շէնքերը թղթէ
տնակների պէս փլոււել են՝ իրենց տակ թաղելով ծեր ու երեխայ, կին ու սղա-
մարդ...

Գնացինք ընկերոջս ազգականի տունը, հին, միջարկանի ամուր տուն,
որի պատերին ճեղք անգամ չկար: Ամբողջ այդ հին թաղամասը պահպանուել
է, և՛ այստեղ մի պահ կարելի է կտրուել երկրաշարժի մզմաւանջից, եթէ մի յի-
սուն մետր այն կողմ շինէր բարձրայարկի փլատակը, որ մնեքերով ու մեխա-
նիզմներով մաքրում են: Եւ երիտասարդ տանտիրոջ զրեթէ անյոյզ տեղեկու-
թիւնը, որ Սպիտակում զուռուել է ջոյրը՝ վնց երեխաների և՛ ամուսնու հետ:
Երկնայեան դնացինք կենտրոն, ճարտարապետական արդիւնեցոց, փողոցի եր-

կու կողմերու մ անմաս կամ գրեթէ անմաս կանգնած ին ՚ին մէկ-երկու յարկանի տները...

Ս, ո՞վ մէջտեղ նետեց այդ խելագար միտքը՝ Շիրակու մ, Լենինակա- նում, որտեղ 26 թուականի յիշողութիւնները դեռ թարմ են, բարձրայարկ շէն- քեր կառուցել: Այն էլ մեր շինարարական շինարարային եւ կարգապահու- թեան պայմաններում: Տարերային ազգաբնիկ ցամայն այն ուրիշ է, եւ ուրիշ է ծանր, վերաւորական զգացումը, երբ մտածում ես, որ բազմաճաղար կեանքեր կը պահպանուէին, եթէ չլինէր այդ բարձրայարկերը: Մի՞թէ ակազեմիայի սենյակագիտի ինստիտուտի գիտնականները չեն ըմբոստացել այդ զաղա- փարի գէմ: Թէ՛ նրանց չեն լսել... Այդ ինչպէ՛ն եղաւ, որ ՚ին Գիւմրիի փառա- բանուած վարպետներին փոխանցեցին այսօրու այ շինարարները, որոնք, ա- սում են, ցեմենտն էլ են խնայել բարձրայարկ շէնքեր կառուցելիս: Թող ինձ չմեղադրեն այս ծանր պահին նման հարցեր տալու համար: Այո, մենք խելա- պէտ շէնքի մէկի օրու այ ժողովուրդը չենք, եւ միայն ար ու վիշտ անելով մեր ցամայն դարձան չենք անի: Մենք անգոր հնր տարերքի գէմ: Բայց ինչո՞ւ անգոր պէտք է լինէինք անպատասխանատուութեան, իրենի բացակայութեան գէմ: Ձեթողցանաների հուշակաւ որ տունը կանգուն է, իսկ նրա նորակառոյց գոր- պասը, որ աւելի ցածր է, ապապուսել է: Ի՞նչ է սա...

Մենք իրաւունք չունենք կորցնելու Լենինականը: Վաղը, միւս օրը նոր բնակելի շէնքեր են կառուցուելու: Մեր երկրի եւ աշխարհի ժողովուրդները ազնու մ են մեզ: Պետութիւնը միջոցներ է արամադրում, եւ լիայտա ենք, որ շատ շուտով անօթեան մարդ չի մնայ: Բայց ինչպիսի՞ն կը լինեն նոր շէնքերը: Մենք պէտք է մտածենք՝ արդեօք՝ միայն երկրաշարժազիմացկութեան եւ ցածր յարկերի մասի՞ն: Ո՛չ: Պէտք է պահպանենք ջազաքի գիմազիծը: Պահ- պանենք աւելի զգուշ, աւելի սիրով ու խնամքով, քան այդ անու մ էին ոչ հե- ոու տարիներին, այսօր փչուած բարձրայարկ շէնքեր կառուցելիս: Պէտք է այնպէս կառուցել, որ Ձեթողցանաների տունը, Իտալականների տունը միայնակ չլինեն, պահպանուի մեր ՚ին ու փառասը Գիւմրու հարաբարազի- տական գիմազիծը:

Մենք պէտք է փրկենք գիւմրական բուն մթնայրտը: Երկրաշարժի վերջը երկար, շատ երկար չի փակուի: Ս, մենք գեւ շատ կը կարօտենք դիւմ- րեցոց արամիտ խոտերին: Բայց մեզ բոլորիս եւ առաջին հերթին լենինականցի- ներին ու մ ու կորով պէտք է ցանկանայ հասարկու, պահպանելու, զարգաց- նելու մեր ինքնատիպ ու անկրկնելի ճազաքի գէմքն ու գիմազիծը: Լենինա- կանը մեր հանրապետութեան երկրորդ ջազաքն էր ոչ միայն իր բնակչութեան թուով ու անտեսութեամբ, գրանք կը պահասեն ծամանակաւ որ: Բայց թող չպահասի լենինականցիների ոգին՝ մեր ազգային ոգու այդ թանկագին մաս- նիկը, որ Իտալական եւ Շիրակ է մեկը: Ս, թող շուտով, հնարաւորին շափ շու- տով մենք ծախտով ու հրացմունքով լսենք նրանց անշփոթելի, զորձանալի պատկերաւ որ խոտը...

ԱՋԱՏ ԵՂՎԱՋԱՐԵԱՆ

Ռ. ՇԱՌՈՅԵԱՆ

ԶԾՆՈՒԱԾՆԵՐԻ ՊԱՀԱՆՁՈՎ

Մեր մարդկային կորուստների ահռելի բիւլ ալսօր հայ կու-
նայր պետ է լրացնեն, ծնելով բազում երեխաներ, որպէս հաստու-
ցում անմեղ գոհերի. եւ վրէժ՝ դաժան ճակատագրի:

ՌԻՏԱ ՇԱՌՈՅԵԱՆ

... Փակում եմ այդքան եւ մտովի
վերազարտում չանբարեկամական
ծննդատուն, գրկում լինինա-
կանցի Անահիտ Բիւրեղանի
տառապանի աղային, ստեփանա-
ւանցի Շուգիկ Թորոսեանի նորած-
նին, Սպիտակի Մեծ Պարիզի գիւ-
ղից Լարիտա Երանոսեանի մաս-
նաշաքիկի գտները: Համազգային
ցուր վնասից, որ այս րանիչ նարո-
նները միայն երկունցի ցուր քա-
ղին, երբանիկ սպասվին իրենց
նորածիններին, որոնց տառապի-
նիցը մայրերի սկանկին հաստ
իրեն վրկու: թեան, գոյատեւման
նի:

Հատրան Նեկեկում է. զՄեր
Սպիտակն աւերուեց, մեծ՝ Հեր-
միւնն չկայ, Մեկինն վիրաւ որ է,
առում էն, չի աղաղակեց էն տա-
րի, առուսին էլ է չի աղաղակե-
ցում պատկան, եւ էլ վազը-միւս
որը ծննդաբերելու եմ... Ինչ է ին-
նկու մեր ճակատագիրը:

— Իսկ ի՞նչ երկրան չծնուած մե-
ղս,— արցում նրանից ինկուսում
է Սոսաննա Սողոմոնեանը,— ա-
նիծուած երկրաշարժը չի նայեց
անգամ չծնուածներին...

Բայց մենք պիտո՞ք է ապրենք:
Այս գիտակցութեամբ էլ շարա-
բաստիկ երկրաշարժի ճենց առա-
ջին որը աղետի վաշտերը մեկնեցին
նաեւ չանբարեկամական ծննդա-
տան մանկաբարձ-գինեկոյողնե-
րի եւ աննախնայիտուներ իմերը,
իսկ երբ իմացան, որ աղետի վաշ-
տերից չէի կանանց սեղագոյնում
են Աշտարակի ծննդատուն, շա-
պիցի այնուայ: Չորս որ՝ Ինկուսե-
րերի Դից Սիւ Աշտարակում աշ-
խատեցին շուրջընայ:


— Մանր էր, շատ ծանր էր այն

չէի կանանց վիճակը, ովքեր սա-
ցել էին զանազան կտորուածները,
ուղեղի ցնցում՝ շատերը, վախից
սարսափած, երկար ժամանակ
ուղեղ չէին գոյր,— պատմում է
ծննդատան օպերատու գինեկո-
յողի այն բաժնի վարիչ Թազմիկ
Արքայանեանը: — Մենք նրանց
անշաղկապ սեղագոյնեցինք Երե-
ւան: Երկրաշարժի գոյժը լսելու է
պէս չանբարեկամական ծննդա-
տանը պատրաստուեց քննուենի
չի աղաղակեց: Կոյնկարի մեծ մա-
տը յանձնեց գոնորական արիւն:
Շուտով մեղ ծոտ սեղագոյնուե-
ցին աղաղակի փրկուած կանայք,
կտորուածներն անհրաժեշտ փրա-
նատու: թիւներ, առում չէին երբ
ենաւ Նոյեմբերական աշխատանք
տարանը, սատար եղանք նրանց:
Որովհետեւ փրկելով մէկ կնոջ,
փրկելու էինք երկու կնանք: Մենք
կեանքի առիչ ենք ընկարակց 52
աղաղակայ կանանց երակներում:

Մենք պիտո՞ք է ապրենք՝ չիչելով
պատմութեան հետ որ ու մեր-
ձաւոր գտները, երբ հայ կինը
բունում էր փրկու: թեան ու յարա-
տեւելու ճամբան՝ մի կրճիւն սեղ-
ժան մանկանը, մի սին՝ հայոց
գիրքը:

Մեր մարդկային կորուստների
ահռելի թիւն այսօր հայ կանայք
պետ է լրացնեն, ծնելով բազում
երեխաներ՝ որպէս հաստուցում
անմեղ, եւ վրէժ՝ դաժան ճակա-
տագրի: Այդ նրանք՝ մեր ծրե-
ւելիք գասակները պիտի իրակա-
նացնեն փյուտակներին բաժին
զարժան բազում կեանքերի
անաւարտ երազները եւ ապրելով
ապրեցնեն նրանց յիշատակն ու
հայոց նեւտենի հույր:

ՌԻՏԱ ՇԱՌՈՅԵԱՆ



...Համբարակումը թիմում ասրեկան մեռած է 60-70 հազար երեխայ: Մեծ յայտերս չենք կորցրել, որ 1940-ին Հայաստանում առ կի շատ երեխայ կը մեռնի, քան 1944-ին: Նորածնի նիքն է թերևս, որ ժողովրդի ցանած հողու ամենայան արեկանին է, փրամնու թիուն խորհրդանիշը, մեռածները կենդանի չիլառախի, ոչնիքի նամար հողեպարար կրչ է, որով պիտի ապրենք: Ուրիշ քան արուած չէ մեկ (Եփրական քերք, 1989, թիւ 2):

ՋՈՒԻ ԲԱԼԱՅԵԱՆ

ՔԵԶԻ ՀԱՄԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

Հեղինակը մոռցած ենք ու բուռածը բառացիորեն չենք յիշեր. բայց մտածումը կը մնայ անաղօտ. բստ որում՝ երգ մը յանախ աւելի մեծ դեր կը կատարէ հոգիներուն խորը ու պատմութեան մէջ. քան ուրիշ ուժեր. ներստեայ բանակները:

Կամ փորձառութիւններ պարած են հաւանաբար բոլոր ժողովուրդները եւ շատ են օրինակները. որոնցմէ մէկը, առաջի՛նք՝ անպայման կը հանդիսանայ փրանսացիներուն *«Մարտիկը»*: Ռեղափոխութեան շնորհիւ իր ազատութեան տիրացած Ֆրանսան, երեք տարի ետք, 1792ի Ապրիլին, փրոսիական եւ աստրիական 100 հազարոնց բանակին սպառնալիքին տակ՝ կ'ապրի յեղափոխութիւնն ու ազատութիւնը կորսնցնելու տագնապ մը: Փոթորկալի այդ պահուն, գիշերային երկունքէ մը կը ծնի բոլորին ապրումներն ու ոգին իր մէջ խտացնող Ռոսէ սը Լիլի *«Մարտիկը»*. որ աներեւակայելի արագութեամբ մը կը դառնայ ամենուն սեփականութիւնը ու կ'ապաւնովէ թշնամի բանակին կէս թիւը ունեցող փրանսացիներուն յաղթանակը: Հետաքրքրական է հրամանատարներէն մէկուն հաղորդածը.

«—Այլեւ ուղեւորները չունինք, կօշիկ չունինք, Հաց չունինք, բայց — փա՛նք Աստուծոյ — ունինք Ռոսէ սը Լիլի յաղթերգը. ու այդ մէկը բաւական է յաղթանակը տանելու Համար»:

Արդարեւ, երգ մը երբեմն աւելի մեծ դեր կը կատարէ, քան միւս ուժերը:

Ու եիմա, Ազնաւորի յղացումով ու կառվարեցիցի դաշնաւորումով գրուի թերուած երգը. — *«Քեզի Համար, Հայաստան»*:

Դարերը մտահած ու միմչեւ հիմա իր առաջին օրումն թարմութեամբ իւրաքանչիւր փրանսացիի սրտին ու շրթներուն թնդացող *«Մարտիկը»*ին չենք կրնար ապահով եզր համարել *«Քեզի Համար, Հայաստան»*ը, տարբեր ելակէտ աւելն անոնք, բայց. յամենայնդէպս. նմանութեան եզր մը ունին, կը հաստատեն նոյն ճշմարտութիւնը. — երգին գորութիւնը:

Դժբախտութեան մը առիթով ծնած բախտաւոր գործ մը *«Քեզի Համար, Հայաստան»*ը, որուն բառերը նոր չեն, պատկերները նոր չեն, յայտնաբերած ոգին ծանօթ է մեզ բոլորիս ու անյայտ չէ մեր պատմութիւնը հեղ մը բերրատած մարդերէն յեւէ մէկուն. բայց որ յուզեց ծանօթն ու անծանօթը, նուիրագործեց ինքզինք հոչակաւոր արուեստագէտներու հոգեբուի մասնակցութեամբ, դարձաւ տեսակ մը հոգեզէն իրողութիւն. հզօր ու ցանկուն ցիշ, ա՛յնքան՝ որ ժայնասփիտի կարգ մը օտար կայսրները շարաքը քանի մը անգամ պէտքը զգացին հաղորդելու գայն. առաջին հնչիւնէն մինչեւ վերջին բառերը՝

Արմէնի՛...
Հայաստան՛...

Մենք չենք կրնար գուշակել. թէ ինչ բախտ վիճակուած է *«Քեզի Համար Հայաստան»* երգին. չենք կարծեր սակայն. որ յանկարծ ծնած ու նոյնքան արագ կարուածաւոր եղող մոդայական երգերուն նակատագիրը կարենայ զինք եւս գարնել, որովհետեւ իբրեւ ենթահոգ ունի հաւաքական ապրում մը, մեծ ցաւ մը, մարդկային յուզումներ ցայտեցուցած մարդկայնական արժէք եւ նոր ձգողութիւն մը՝ Քեզի՛ համար, Հայաստան՛...

ՇԱՐԼ ԱԶՆԱԻՈՒՐԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ՝
«ՔԵԶԻ ՀԱՄԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆ»



Charles avait promis à Bernard Dimey de chanter ses textes, et tant pour lui. Son dernier album, de la série des "arrivés", s'appelle "Sous le vent".

**POUR TOI,
ARMENIE**

Tes printemps fleuriront encore.
Tes beaux jours renaîtront encore;
Après l'hiver, après l'enfer,
Poussera l'arbre de vie;
Pour toi, Arménie.

Tes saisons chanteront encore.
Tes enfants bâtiront plus fort;
Après l'horreur, après la peur,
Dieu soignera ton sol meurtri;
Pour toi, Arménie.

Le monde s'est levé,
Le monde est avec toi,
Pour toi, Peuple oublié
Il a ouvert son cœur,
Il a tendu ses bras.

Tes printemps fleuriront encore.....
Tes saisons chanteront encore.....

Même si tu maudis ton sort
Dans tes yeux je veux voir;
Arménie,
Une lueur d'espoir,
Une flamme, une envie
De prendre ton destin entre tes mains
A bras le corps.

Tes printemps fleuriront encore.....
Tes saisons chanteront encore.....

ARMENIE
HAYASDAN....

Paroles: CHARLES AZNAVOUR
Musique: KEVORK GARVARENTZ

**ՔԵԶԻ ՀԱՄԱՐ,
ՀԱՅԱՍՏԱՆ**

Գարուններդ պիտի ծաղկին դարձեալ,
Լաւ օրերդ վերածնին պիտի նորէն,
Զմեռէն ետք. դժոխէն ետք,
Պիտի բուսնի ծառը կենաց՝
Քեզի համար, Հայաստան:

Եղանակներդ պիտի երգեն նորէն,
Զաւակներդ պիտի կառուցեն աւելի ուժգին,
Ասարսփէն ետք, սոսկումէն ետք,
Պիտի Աստուած խնամէ հոգդ շարշարեալ՝
Քեզի համար, Հայաստան:

Աշխարհը ոտի էլաւ,
Աշխարհը քեզի հետ է,
Քեզի համար, ազգ մոռացեալ
Բացաւ սիրտն իր,
Եւ կարկանդակ բազուկները:

Գարուններդ պիտի ծաղկին դարձեալ.....
Եղանակներդ պիտի երգեն նորէն.....

Նայնիսկ երէ բայտդ անիծես,
Աչքերուդ մէջ կ'ուզեմ տեսնել,
Հայաստան,
Նշոյլ մը լոյսի,
Բոց մը, տենչ մը՝
Ճակատագիրդ ձեռքերուդ մէջ առնելու
Ամբողջութեամբ:

Գարուններդ պիտի ծաղկին դարձեալ.....
Եղանակներդ պիտի երգեն նորէն.....

ԱՐՄՔԻՆԻ,
ՀԱՅԱՍՏԱՆ...

ՇԱՐԼ ԱԶՆԱՎՈՒՐ

For You, Armenia

Spring will come
 Winter will be done
 Days of fire
 Seasons in the sun
 Armenia, we sing for you
 The tree of life will grow again
 For you, Armenia

Morning comes
 To the darkest night
 Morning comes
 With her healing light

Years will fly
 Days will sing again
 Pain will die
 Rainbows ring again

Your children will
 Rebuild for you
 A better world and stronger, too
 For you, Armenia

The world is by your side
 We know you will survive
 For you, Armenia, we've opened up our arms
 You've opened up our hearts

Spring will come
 Winter will be done
 Days of fire
 Seasons in the sun
 Armenia, we sing for you
 The tree of life will grow again
 For you, Armenia

Morning comes
 To the darkest night
 Morning comes
 With her healing light

Years will fly
 Days will sing again
 Pain will die
 Rainbows ring again

Your children will
 Rebuild for you
 A better world and stronger, too
 For you, Armenia

There was a garden long ago
 With magic in its soil
 Eden lives
 And Eden's still your home
 And time will heal your wounds

And time will be the friend that you deserve
 The dream survives

Spring will come
 Winter will be done
 Days of fire
 Seasons in the sun
 Armenia, we sing for you
 The tree of life will grow again
 For you, Armenia

Morning comes
 To the darkest night
 Morning comes
 With her healing light

Years will fly
 Days will sing again
 Pain will die
 Rainbows ring again

Your children will
 Rebuild for you
 A better world and stronger, too
 For you, Armenia
 Armenia
 Hi-Yass-Dahn



Շարլ Ազնաւուր եւ իր գործակիցները փորձի պահուն

Ճրանասանայ աշխարհահռչակ երգիչ, երաժիշտ եւ գերատան Շարլ Ազնաւուր, 7 Դեկտեմբերին Հայաստանն ու Հայրենի եւ սփիւռքահայ ողջ Հայութիւնը խորապէս ցնցած անաւուր երկրաշարժին վերջերք գործածելու միջազգային նախաձեռնութիւններուն իր գործած մասնակցութիւնը բերելու նախանձախնդրութեամբ՝ Երկուշաբթի, 16 Յունուար 1989ին, Փարիզի մէջ հրապարակեց շուրջ 30 երգիչներու մասնակցութեամբ արձանագրուած բացառիկ ձայնագրուած ժը՝ «Փուր քուս, Արմենի» («Քեզի Համար, Հայաստան»)։

7 Դեկտեմբերի մահասարսուս երկրաշարժին անմիջական ապաւորութեան տակ ծնունդ տուած այս խմբերգին բառերը զրամ էր նայինքն Շարլ Ազնաւուր, երաժշտութեան յորինման պատասխանատուութիւնը ստանձնած էր այլ Փրանսահայ ժը՝ Ժորժ Կառվարենց (որդին սփիւռքահայ անուանի բանաստեղծ Գեորգ Կառվարենցի)։

Ճրանացի եւ Փրանսարձակ շուրջ 30 երգիչ - երգչուհիներու կարգին, Ազնաւուրի կողքին՝ «Քեզի համար, Հայաստանի իրականացման գործնապէս մասնակցած էին Միւրէլ Մաթիէ, մէյն Պրըքին, Նանա Մուսարբի, Սերժ Համա,

ժիլին Բլէր, Միւշէ Սարաու, Վաննա Փարաւի, Փաթրիսիա Բասս, Ալէն Սուշոն, Էտի Միլլը, Սերժ Ռիճիանի, Լորան Վուլչի, Ճոնի Հայտոյ, Լիստա աը Սուզա, Նիքոլէթա եւ Հանրածանոթ այլ երգիչներ։

«Փարունգները պիտի շարունակեն ծաղկիլ» յաւատեա տողով սկսող «Քեզի համար, Հայաստան» ձայնագրուած հրապարակուած անմիջապէս ետք, Հանրի Վերնէյի կողմէ նկարահանուած Վիտո-Էլիֆը գրուեց Փրանսական եւ եւրոպական պատկերասփիւռի կայաններուն պատաստները։ Ձայնագրուած կայանները նոյնպէս, իրենց կարգին, սկսան անդադար սփռել երաժշտական բացառիկ իրազորմում ժը նկատուած ձայնագրուած է, կարճ ժամանակի մէջ, «Քեզի համար, Հայաստան» արագ մազլցում արձանագրեց Ճրանայի «ԹձՖ 50»ին մէջ, նուանելով տառիքն գիրքը, զոր պահեց ամիսներ շարունակ։

Երկուշաբթի, 13 Փետրուարին, Ճրանական մամլոյ գործակալութիւնը (ԱՅՓ) տառացիօրէն Հազորդեց. «Ճրանայի երաժշտութեան պատմութեան մէջ, երգ մը այսօր արագ մազլցում չէ արձա-



Միրել Մարիե. Եսրլ Ազնաւոր եւ Սերժ Լամա

Յագրած: Կարճ ժամանակի ընթացքին, միայն Ֆրանսայի մէջ սպառեցաւ 360 հազար օրինակ ճայնապանակ:

ԱՆՔԻՆԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ

«Բնդի համար, Հայաստան» ճայնապանակին արձանագրած միջազգային յաջողութիւնն իսնդափառուած՝ Եսրլ Ազնաւոր նախածնուեց անոր անգլերէն տարբերակին իրականացման:

Կիրակի, 29 Յունուարին, Հանրածանօթ Երզնկէն Եսրլ Ազնաւոր, Հայրա Միրելի, Տայան Ռ. որու իբ. Այրին Քարա, Պէն Վերին, Փիա Ջաւարա, Ալեքսանտր Կրաւորի, Քարլ Էնտրորն, Սթիւ. Լորենս եւ անուանի 100 այլ արուեստագէտներ Հաւարուեցան Հոյիփուա, ճանակցելու Համար «Բնդի համար, Հայաստան» ճայնապանակի անգլերէն տարբերակին ճայնագրման եւ նկարահանման:

Հաւարը հովանաւորեց «Հայաստանի Ազգանայներու Օղնութեան Միացեալ Նահանգներու Մարմինը, գործակցութեամբ Եսրլ Ազնաւորի եւ Ժորժ Քուէնի:

Փոլ Ռ. Իլիքճի կողմէ Բարգմանուած

անգլերէն տարբերակի ճայնապանակման եւ պատկերիկներուն վաճառքին գոյացած Հասոյթը ամբողջութեամբ պիտի արձանագրուի Հայաստանի ազգանայներու օղնութեան ֆոնտին: Գայնապանակին հրատարակման աշխատանքով պիտի զբաղի Հ.Օ.Մ.ը: Հոյիփուաի մէջ կատարուած արձանագրութեան ճանակցեցան նաեւ Սեդա Ազնաւոր, Մարի-Յամար Ապաուլեան, Եանի Պեւոար, Մայր Քուերզ (Մեմբր), Մայրը Տորեան, Սեւակ Պետոյեան եւ ուրիշներ:

ՆԱՆԻ՝ ԻՏԱԿՈՑ ՄԵՋ

Չորեքշաբթի, 5 Ապրիլին, խորհրդային լրատու գործակալութիւնը՝ ԹԱՍՍ, իր Հետազոտութիւնն կարգին Հազարացի, որ Միրելի «Նուսփա Յոնիա Գնարա» օրիտիւնին մէջ, Եսրլ Ազնաւորի նախածնութեամբ արձանագրուած է «Բնդի համար, Հայաստան» նաեւ իտալական տարբերակը:

«Երգի փառատօնը, որը տեւեց ընդամենը մի քանի ժամ. այսպէս կարիլի է անուանի «Բնդի Համար, Հայաստան» իտալական տարբերակը, Հաստատուեց կատարելէ ետք, խորհրդային

լրատու գործակալութիւնը գիտեց տրուաւ, որ Ազնաւուրի կոչին Իտալիոյ մէջ արձագանգած եւ երկը սերունդները ներկայացնող էսքրատային անուանի երգիչներ եւ երաժիշտներ, ինչպէս՝ Նիլա Պիցիի, Միւս Ռեմիոնի, Էնրիքս Մուզիանի, Թոնի Դալարա, Աերճիս Էնրիքս, Օրիէտա Ռերաի, Էնզօ Եանուցի: Այս է ոչ ամբողջական ցուցակը իտալացի երգիչ-երգչուհիներուն, որոնք գործնապէս արտայայտանքին իրենց գորակցութիւնը ազնաւար Հայ ժողովուրդի երեխաներուն:

«Ես ծանօթ չի Ազնաւուրին, բայց անմիջապէս ընդունեցի ձայնագրման մասնակցելու անոր առաջարկը.— բաւ էնզօ Եանուցի եւ շարունակեց.— նմանօրինակ միոցառումներու կարելի է դիմել կանոնաւոր կերպով՝ տարին երեք անգամ, որպէսզի օգնեմք մեր բոլոր երեխաներուն»:

«Եւս ուզա Տոնիտ Զետրա» սփրտիոյին մէջ անսայ ձայնագրուած «Քեզի համար, Հայաստան» իտալական պատկերիչին եւ ձայնապնակին մասին խօսելով, իր կարգին, Ազնաւուր բաւ. «Ես շատ ուրախ եմ, որ այսօր մեծ քիւով կատարողներ եկած էին՝ մեկնաբանելու այս իրազարձուրիւնը»:

**ԱԶՆԱՎՈՒՐԻ ԵՆՈՑԹԸ
ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ**

Եարաթ, 28 Յունուար 1989, կէսօրէ ետք ժամը 5ին, Լոս Անճելըսի միջազգային ոգակայանի պատուոյ հիւրերու սրահին մէջ, մեծահոշակ Եարզ Ազնաւուրը գիմաւորեցին «Հայաստանի Սրկրաշարժին Ազգետեայներու Դրամաւաւարի Գործադիր Ծորհուրդ»-ի ներկայացուցիչներու տէր եւ տիկին Փոյ եւ Ճոն Քորէն:

Զինք գիմաւորելու եկած պաշտօնական անձնաւորութիւններու հետ ծանօթանալէ ետք, Ազնաւուր ներկայեցուն մանրամասնօրէն պարզեց իր նախաձեռնութեան մանրամասնութիւններն ու ամերիկեան շրջապտոյտին հնաապերած նպատակները:

«Աւեմ միոց ի գործ պէտք է դնենք, որպէսզի երկրաշարժի ազտետայներուն օժանդակութեան աշխատանքները յարատեւեն,— յայտարարելէ ետք, աշխարհահռչակ երգիչը աւելցուց: — Այս աշխատանքները տարիներու վրայ պիտի երկարին, որովհետեւ երկրաշարժին ձգած հետքերը՝ ըլլան անոնք մարդկային թէ միւրական, մեծ միոցառումներու կը կարօտին»:



Միշէ Սարգսու...



...եւ Ժագ Մարթէլ



Ալեք Սուշոնց...

...և Էսօֆ Միչրլ

Ապա, Ազնաուր խոսեցաւ իր զգեստը մասնագութեան՝ որբացած երեխաներու դասն ճակատագրին մասին, և յայտնեց, թէ ինք ճիշդ ճանաչածք գտնելու միջոցներ պիտի ստեղծէ՝ հովանաւորելու համար այն երեխաներուն հոգածութիւնը, որովհետեւ ինք չի հաւատար որբանոցներ հիմնելու գաղափարին: Ընդհակառակն, ան դիտել տուաւ, որ որբացած երեխաները պէտք է պահեն իրենց անունն ու ազգանունը, հետեւորաբ, ճիշդ ճանաչածքու դրութեամբ, նիւթական օժանդակութիւն պիտի յատկացնէ այն ընտանիքներուն, որոնք ծնողներու գերը պիտի կատարեն՝ պատասխարելով անձեզ որբուկները:

Մանրամասնելով իր ծրագիրը, Եարլ Ազնաուր յայտնեց, թէ Փրանսայի մէջ, աւելի քան 250 անհասանելի խոտուացած են հովանաւորել երեխաներու ապրուստը, մինչև որ անոնք 20 տարեկան դառնան: Այդ խել նպատակով, օժանդակութիւնները ուղղակի պիտի տրուին ընտանիքներուն և ինք պարբերաբար Հայաստան պիտի այցելէ՝ աշխատանքին հետեւելու

և աղէականներուն կացութիւնը ամբողջովին դարձանելու նպատակով:

Ապա, Արցախի պահանջատիրութեան անդարադատելով, Ազնաուր յայտարարեց, թէ շպիտք չէ մտածանք ընել Ղարաբաղի հարցը, որովհետեւ անիկա համայն Հայութեան անժամանցելի դատն է:

Տեսակցութեան աւարտին, Լոս Անճելեսի կառավարիչ ժորճ Տեօթէնհանի անունով՝ Կրէյ Քաշուէնհան զնահատաղիք մը յանձնեց Եարլ Ազնաուրին, իր անզնահատելի ճիշդութուն և նախանուութեան համար:

ՇԱՐԼ ԱՋՂԱՆՈՒՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Եարաթ, 4 Փետրուարին, Մոսկուայի վրայով Եարլ Ազնաուր համբայ կլաւ զԷսօֆ Հայաստան, կարճատեւ այցելութեամբ մը մտնելն ծածօթանայու համար 7 Դեկտեմբերի երկրաշարժին ահաւոր փրաններուն և հետեւանքներուն: Յաջորդ օրն իսկ, առաւօտուն, Եարլ Ազնաուր այցելեց Միքէլեակարելը, ուր

Մեծ եղևույթի նահատակներու յուշարձանին առջև իր յարգանքի տուրքը մատուցեց Ապրիլեան զոհերու յիշատակին:

Այնուհետև, Եարլ Ազնաուր եւ իր ուղեկիցները մեկնեցան Լենինական՝ երկրաշարժէն տուժած վայրերուն Ծանօթանալու եւ փրկուած Հայորդիներուն իրենց կարեկցանքը յայտնելու համար: Լենինականի բազաբային կոմիտէի կեդրոնին մէջ, փրականդնու մի եւ յարակից աշխատանքներուն մասին զեկուցեց բաղկոժի առաջին բարտուղար Մ. Մկրտչեան: Ապա, աշխարհաշուշակ երգիչը չըջազայեցաւ աւերուած բազաբի զանազան թաղամասերուն մէջ եւ իր մանակցութիւնը բերաւ արտորոշման կեդրոնի բացման արարողութեան:

Լենինականէն ետք Եարլ Ազնաուր անցաւ Սպիտակ, ուր եւս մասնակցեցաւ բազաբին թանգարանի հիմնադրման արարողութեան: Ճանաչըներուն խընդրանքով՝ ան թանգարանի հիմնաքարին վրայ բարձրացուց երկրաշարժի փլատակներուն և ասկէն զուրս բերուած խոյակ մը: Այս արարողութենէն ետք, Ազնաուր իրբեւ նուէր ստացաւ փլատակներէն

փրկուած զեկանկար մը՝ «Սպիտակեան կալաչներ» խորագրով:

Լենինականի եւ Սպիտակի մէջ, աշխարհաշուշակ երգիչը ապրեցաւ յուզումի եւ թախիծի բազմաթիւ պահեր: Յուզիչ էր մանաւանդ անոր կոյճը՝ Երեւանի Մարզահերպային համալիրին մէջ, բարեգործական նպատակով 7 Փետրուարին տեղի ունեցած համերգի ընթացքին, երբ բառացիորէն բաւ:

«Հիմա, իրաքանցիւրս իր խիղճին հետ առանձին է: Ես Հայաստան եկայ ձեզի հետ հանդիպում ունենալու, ձեզ յսելու եւ ձեզի օգնելու համար: Ես խորհրդային կառավարութեան Ֆրանսայի մօտ խորհրդային դեսպանին եւ տեղական իշխանութիւններուն շնորհակալական խօսք ունիմ ուղղելիք անոր համար, որ անոնք օժանդակեցին եւ դիրացուցին այս ուղղութիւնէն իրականացումը: Թեմականաբար, շնորհակալական խօսքս հասցէագրուած է նաեւ այն կազմակերպութիւններուն, որոնք օգնութեան հասան ազէտէն անմիջապէս ետք, առային իսկ ժամերուն: «Շնորհակալութիւն կը յայտնեմ ճա-



Եարլ Ազնաուր՝ Սպիտակի փլատակներուն առջև



Ճանի Հարսեյ...

...եւ Նանա Մուսուրի

եւ բոլոր անոնց, որոնք շիրժօրէն դիմաւորեցին եւ ընդունեցին զիս:

Հայաստան գտնուած շրջանին, երբորդ օրը, Եարլ Ազնաւուր այցելեց Սրեւանի թիւ 3 ժանկական հիւանդանոցը՝ փրաւոր ժանուկներուն նուիրելու համար «Քեզի համար, Հայաստանն երգի ձայնապնակներ, իր ժակազրութիւնը կրող լուսանկարներ եւ զանազան տիկնիկներ:

Ապա, Եարլ Ազնաւուր ճամբայ ելաւ զէպի Օշական եւ այցելեց Մերսոյ Մաշտոցի շիրժ: Ճամբու ընթացքին, հիւրերը կանոց առին Հայոց տարեբեր խորհրդանշող յուշարձանին առջեւ, ուր Հայրենի բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան ձեռն հիւրն ու իր ընկերակիցները զիմաստրեց ձեր ժեմաստեղծութեամբ:

Օշականէն ետք, Եարլ Ազնաւուր այցելեց Մերսոյ Մաշտոցի անուան ժառանգարանը, ուր Ս. Արեւշատեան ձեռն հիւրին ծանօթացուց Հայկական ձեռագիրներն ու ժազաղաթները: Երեւանի մէջ, Եարլ Ազնաւուր հանգիստ մը ունեցաւ կնիքոնական ժամուրթի, ինչպէս նաեւ՝ խորհրդային եւ Փրանսական պատկերասփիւռի կայաններու թղթակիցներու հետ:

7 Փետրուարին, Հայրենի աշխատանք լողին հրատեղա տալէ առաջ, Երեւանի

օգակայանին մէջ, ուղղաթիւ բարձրանալէ առաջ, անհանգիստ երգիչը ծածանակ գտաւ ժանկու ամերիկեան ուղղաթիւը, որ Մ. Նահանգներ բուժուելու պիտի տաներ 7 Գնկտեմբերի երկրաշարժին հետեւանքով ծանր վերքեր ստացած Հայ ժանուկներ:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ԵԱՐԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԼԵՏ

Հայաստան գտնուած շրջանին, Արմենիէի թղթակից Վանիկ Սանթրեանի հետ կարճ հարցազրոյց մը ունենալով, այնպիսիպէս երգիչն ու երաժիշտը բաւ: «Քեզի համար, Հայաստանն երգին բաւերը գրեցի երկրաշարժին յաջորդ օրը՝ 8 Գնկտեմբերին: Փարիզի մէջ երգը ձայնագրեցինք ու բաւերն աւելի երգիչներու, զերասաններու եւ ձայնահան անդամներ հաշուող Յուսեփ Սիւմբի մը մասնակցութեամբ:

Ապա, երգին հետապնդած նպատակներուն եւ անոր անդիւրէն տարբերակին ձայնագրման ժամանակու թիւներուն անդրազատնալէ ետք, այլ հարցում մը, թէ՛ երգը ուրիշ երկիրներու մէջ ալ պիտի ձայնագրուի՞, Եարլ Ազնաւուր տոտաջիօրէն պատասխանեց-«Այո», անշուշտ, իտալացիները, գերմանացիները, բուլղարացիները, ճապոնացիները եւ արեւմտեան իրենց

պատրաստակամութիւնը յայտնեցին: Յոյս ունիմ, որ այս երգը պիտի ձայնադրենք մահու հորեղային Միութեան վարպետներու համատեղ կատարումով: Առ ք տեղեկութիւն աւելցնենք, որ ձայնապահներն միտ երեսին տեղ գտած է ԱՅՈՅԻ ԻճԿԱՆ՝ ծանօթ երգը (խօսք՝ Շարլ Ազնաւուրի, երաժշտութիւն՝ Ժ. Կառվարեան): Խօսելով այս վերջին երգին ծննդոցին մասին, Շարլ Ազնաւուր յայտնեց, որ ինք եւ Ժորժ Կառվարեան օրին այս երգը ստեղծած են Հանրի Վերնէօյի հայրու մասին բեմադրելիք ժայպաւնին համար, որ կամքէ անկախ պատճառներով չբեմադրուեցաւ, բայց ԱՅՈՅԻ ԻճԿԱՆ՝ը հասաւ իր միջնաւոր ու նկնդիրներուն:

Ք. ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ
ՆԻԿՈՒԱՅ ԲԻՏԿՆՈՎԻ ՀԵՏ

7 Փետրուարին, Մոսկուա ժամանելէ անմիջապէս ետք, ՍՍՀՄ մշտնապահ խորհրդի նախագահ (վարչապետ) Նիկոլայ Ռիժկով Կրեմլէնի մէջ ընդունեց այցելութիւնը Փրանսահայ անուանի երգչի՛ն, ներկայութեամբ Ք. Հայաստանի մշակոյթի նախարար Եւրի Մելիք Օհանջանեանի:

Մտերմիկ ու բարեկամական գրոյցի բնութային, Շարլ Ազնաւուր Ք. Միութեան

վարչապետին պարզեց Հայաստանի մէջ տեղի ունեցած երկրաշարժին հետեւանքով որք մնացած հայ մանուկներն ու ոչնչու համար իր ստեղծած «Ազնաւուրը Հայաստանին» բարեգործական ընկերակցութեան աշխատանքներն ու տպագայի ծրագիրները:

Նիկոլայ Ռիժկով, իր կարգին, երախտագիտութիւն յայտնեց Շարլ Ազնաւուրին՝ իր ազնիւ ջանքերուն համար, որոնք նպատակաճգում են տարերային ազդեցութեան փոսաները կրած հայերուն, բայց մանաւանդ որբուկներուն ծանր նահատակութիւնը թեթեւցնելու մարդկային կեցումը: Ապա, Ն. Ռիժկով գիտել տուաւ, որ հայ ժողովուրդն ու խորհրդային բոլոր ժողովուրդները շնորհակալ են Փրանսա, Մ. Նահանգներ եւ այլ երկրներ ապրող այն բոլոր հայերին, որոնք գործնապէս դրսեւորեցին բարի պատգամներ եւ անհուն սիրոյ ազնիւ ապրումներ:

Օրին, մաճոյ լրատու միջազգային գործնակալութիւնները Մոսկուայէն հազորդեցին, որ միկուկէս ժամ տեւած այս տեսակցութեան ընթացքին, Շարլ Ազնաւուր Ք. Միութեան վարչապետին հետ խորհրդակցած է նաեւ Ղարաբաղի Յանձնախում մրի անդամներուն մերթապայման սփռու հարցին շուրջ:

Տեսակցութեան ետք, մաճոյ ասուլիսի



Միշէլ Տրիֆլու...



...եւ Ժիլիէլլ Քլիլլ



Սթիվ Ռոստրոփ...



...և ձեյն Պրոբին

ժր ընթացքին, Եսրլ Ազնաուրի յայտնեց, թէ ինք շշատ զգուշաւոր կերպով ձեռնամուտ է ի նպաստ Զարարացի Յանձնախումբի ձերբակալուած 11 անդամներուն:

Պատասխանելով Հարցումի ժր, թէ պահանջա՞ծ է Զարարացի Յանձնախումբի անդամներուն ազատ արձակում ժր, Ազնաուր ՎԱՊՁ պատասխանեց եւ յոյս յայտնեց, որ Ռիժկովի Հետ ունեցած իր տեսակցութիւնը պատճառ կը դառնայ Զարարացի Յանձնախումբի անդամներուն քանտարկութեան ձեղձացումին: «Ասիկա արդէն մեծ քայլ մը կրնայ ըլլալ», պատասխանեց Ազնաուր:

Փարիզ վերադառնալէ ետք, Փրանսական պատկերասփիոսի «Անթէն 2» կայանէն Հազորդուած ասուլիսի ժր ընթացքին, տազանդաւոր երգիչը յայտարարեց, որ Հայաստանի մէջ Հաստատած է մտաւորականները եւ արուեստագէտները կազմուած կապի կեդրոն ժր՝ շարունակելու Համար ազէտահարներուն յատկացուած իր օժանդակութիւնները:

**ՆԱԽԱԳԱՀ ՄԻՓԵՐԱՆ
ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐԷ ԱԶՆԱՒՈՒՐԸ**

Փետրուարի սկիզբը Հայաստան այցելել եւ ազգին ահաւոր վնասներուն եւ ժարդկային ծով կարիքներուն ծառէն

ծանօթանալէ ետք, Հագի Փարիզ վերադարձած, յաջորդ օրն իսկ, Հինգշաբթի, 9 Փետրուարին, Եսրլ Ազնաուր ընդունուեցաւ Փրանսայի Հանրապետութեան նախագահ Փրանսուա Միթերանի կողմէ, որ աշխարհահռչակ երգիչն ու երաժիշտը պատուեց Փրանսայի գերագոյն շքանշանով՝ «Մետայ ալյա Լէժիոն տ'Ոնէօր»ով:

Էլիզէի նախագահական ապարանքին մէջ տեղի ունեցած պարզեւարումի Հանդիսութեան պահուն, նախագահ Միթերան Համբուրնից Եսրլ Ազնաուրը եւ ջիւժ իօսքերով զնահատեց Հայաստանի օժանդակութեան ի խնդիր Ազնաուրի նախաձեռնած ծառայութիւնները: Այս առիթով նախագահ Միթերան զիտել տուաւ, թէ Փրանսան, որ պետական ասուծով երկրաշարժին վայրը Համնոց ատաղին երկիրը եղաւ, պիտի շարունակէ իր մարդասիրական օժանդակութիւնը՝ ի խնդիր Հայաստանի վերջերու ամօքման:

Իր կարգին, Եսրլ Ազնաուր յայտնեց, թէ պիտի շարունակէ իր նախաձեռնութիւնը՝ Հայաստանի ազէտեայներուն ասուելազոյն շափով օգնութեան Հասնելու Համար:

Նոյն օրը, Փրանսական պատկերասփիոսի կայանները Հետափոնեցին Եսրլ Ազնաուրի պարզեւարման արարողութեան արփաքքամը:

**«ԱՅԿԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿՐՕՆԻԻ ՊԵՏՔ Է ՎԵՐԱՊԵՆՆ
ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ԺՈՐԺ ԿԱՌՎԱՐԵՆՑ**

«Ապարեզ» որսերի թղթակցին հա հարցազրույց մը ունենալով, որուն ամբողջութիւնը լոյս տեսաւ Շարաթ, 11 Փետրուար 1989ի համարին մէջ, անուանի երաժշտական ժորժ Կառվարենց հանգամանքէն խոսեցաւ իր Լոս Անճելըս այցելութեան նպատակին, ասպարէզին, փորձառութեանց եւ ասպազայի ծրագիրներուն մասին:

Աւելի քան 200 շարժապատկերի ժապաւեններու եւ հարիւրուոր ձայնապլանակներու երաժշտութիւնը յարեմա՞ն այս հարաւ հայրերին, առաջին առիթով «Ես սեռուալ նահատակի հեղինակ Գէորգ Կառվարենցի գաւակն եմ», յայտարարել է եւր. կը պարզէ, թէ Լոս Անճելըս իր այցելութեան նպատակն է մասնակցել «Քեզի համար, Հայաստան» շաբաթական ամսագրի մայնագրման աշխատանքներուն:

«Ճիշդ է, ամբողջ աշխարհ իր ուշադրութիւնը մեր վրայ կեդրոնացուց, սա-

կայն ամէն ինչի պէս այս մէկն այ ժամանակաւոր պիտի ըլլայ.— մտածու՞մ պարզելով, ժորժ Կառվարենց կ'ընդգրծէ:— Մտածեցիմք օտարներուն կեդրոնացու՞մ կարելի եղած չափով մեր վրայ երկար պահել: Շատեր չէին գիտեր, թէ քարտէսին վրայ Հայաստանը ո՞ւր կը գտնուի. Յունաստան կ'ըսէին: Հօրս սերունդը կը հաւատար, որ հայ ազգային կեանքին մէջ գործելով՝ հայութեան ծառայած կ'ըլլան: Այս տեսակէտը ես անպայման ճիշդ չեմ գտներ եւ կը հաւատամ ամէն ճակատի վրայ գործելու ռազմավարութեան»:

Հարցու՞մի մը, թէ «Հայաստանի երկրաշարժին նուիրուած երգ մը միջազգայնացնելու գաղափարը ո՞վ յղացաւ», Կառվարենց կը յայտնէ, թէ զայն յղացած է իր ջրով զաւակը, որ Լոնտոնի մէջ առաջարկած է իրեն անգլերէնի թարգմանել Շարլ Ազնաւուրի «Անոնք ինկան» անուն Հայկական Յեղասպանութեան նուիրուած երգը եւ զայն հրամանել Միացեալ Նահանգներու հանրութեան: Անմիջապէս իր համամարտիւնը յայտնել է եւր. Կառվարենց գրեւէ



Կիցա տը Սուզա...



...եւ Հայգա Միմնիլի



«Քեզի համար, Հայաստանի անզիրեն տարբերակին երգչախումբը

կու տայ, որ Վերդեն պատրաստ այդ երգը անկարելի էր, որ նոյնութեամբ հրամցնէինք, որովհետեւ երգը կ'ըսէր, որ մենք մեռանք եւ աշխարհ չշարժեցաւ: Աւելի'ն. անհկա տարագրութեան երգ էր: Շարլ Ազնաւուրի հետ շեշտեցինք, որ Հայաստան բաւր անպայման պէտք է տեղ գտնէ երգին խորագրին մէջ»:

Ապա, «Քեզի համար, Հայաստանէ ծննդոցին մասին խօսելով, Կառվարենց իր ապրումները կը բանաձեւէ Հետեւեալ բառերով. «Ջարմանալի է, որ մեր երգը գրելն ու ձայնագրելը մէկ շաբաթ տնւեց: Աշխարհի ստեղծման պէս: Իսկ երգուած օրը Յունուար 68 էր, որ մեր եկեղեցւոյ տոմարին մէջ Հայկական Ընտանոցը կը յատկանշէ: Մասնաւոր չըրինք, այդպէս գուցադիպեցաւ»:

«Հայութեան նետ ուղղակիօրէն կապուած աշխատանքներ կատարած էք», Հարցումին պատասխանելով՝ Կառվարենց դիտել կու տայ, թէ Շարլ Ազնաւուրի կամ իր համբարը, մասնաւոր Ջրանասայի մէջ, միայն ու միայն Հայութեան կը ծառայէ, շարժվեալ մեր անունը հայութեան կառքին լծած ենք: «Անոնք ինկան» երգը մեր սրտի գոհու-

նակութեան համար գրեցինք եւ չէինք սպասէր, որ միջազգայնաճայ: Այս երգը հայութեան համար գրեցինք: Ինչ կը վերաբերի այլ գործերու, սկսած եմ գրել սուրբ սենթոնիք մը՝ «Հայաստան» անունով: Սակայն հիմա ստիպուած եմ կարգ մը փոփոխութիւններ ընել, որովհետեւ չեմ ուզեր, որ խորագրերը կրկնութիւն ըլլայ: Նաեւ՝ վերջին շարժումը կ'ուզեմ կապել երկրաշարժի երգին թեմային»:

Վերջապէս, «Կը հաւատա՞ք, որ միջազգային համբարի տիրացած անձ մը իր փառքի գաղափարներին հասնելու համար պէտք է վերագտնայ իր ազգին», Հարցումին իբր պատասխան՝ Կառվարենց Հայու արդար հպարտութեամբ կ'ըսէ.

«Այն անձը, որ իր ազգին գիրկը չի վերադառնար, ինձի համար գոյութիւն չունի: Ան կը նմանի իր ծնողքը ուրացած երիտասարդին:

«Ես կը հաւատամ բազմակուսակցական դրութեան, սակայն կը շեշտեմ, որ հայկականութիւնը կրօնքի պէտք է վերածել: Կուսակցական պատկանելիութիւնը պէտք է հատուածներու վերածել հայ ժողովուրդը: Ժամանակն է, որ իբրեւ ազգ առաջին հերթին մենք մեզ յարգենք»:

**ՌՈՍԹՐՈՓՈՎԻԶ՝
Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

Հայկական երեք կուսակցութիւններու եւ զանազան միութիւններու ներկայացուցիչներէ կազմուած «Էյտ Արմինիա» յանձնախումբը, որ իրրեւ լիազօր ներկայացուցիչ լոնտոնարեանկ հայ գաղութին՝ ներկրաշարժի ազդեակներուն օժանդակելու եւ կարիքները հոգալու նիղերուն իր մասնակցութիւնը բերելու նախանձախնդրութեամբ կազմակերպեց հանգանակութեան եւ նուիրահաւարքի մէկ աւելի ձեռնարկներ, նաեւ յղացած էր զեղեցիկ պազափարք մշակութային ձեռնարկի մը, որ լայն արձագանգ գտաւ տեղական մամուլին եւ պատկերասփիւռի ու ձայնասփիւռի կայաններու տեղեկատուական եւ մշակութային յայտադիրներուն մէջ:

Արդարեւ, աշխարհահռչակ Քաւոթութեան Ռոսթրոփովիչ, Հայաստանին եւ հայ ժողովուրդին հանդէպ տածած իր անունն սերը գործնապէս արտայայտելու մտահոգութեամբ եւ կազմակերպութեամբ «Էյտ Արմինիա» յանձնախումբին՝ զլիստորեց համաշխարհային հոշակ վայելող երաժիշտներու խումբ մը, որուն տուած նուագահանդէսին հասոյթը ամբողջութեամբ յատկացուեցաւ Հայաստանի ազդեակներուն:

Եարաթ, 17 Դեկտեմբերի զիշերը, Լոնտոնի շքեղապոյն սրահին մէջ արուած համերգը ի մի խմբեց աշխարհահռչակ հինգ մեկնարաններ՝ խմբավար Անտրէ Գրեկն, սրնպանար ձէյմա Կայուէյ, ջութ-

թակահար Մաթիալա Ռոսթրոփովիչ եւ խորհրդայիններ՝ Գոթակահար Եուրի Պաշմէթ եւ զաշնակահար Անտրէյ Կարիլով:

Հայաստանի մեծ սուգին ողբերգման եւ տատապեալներուն օգնութեան ձեռք էր կարելու առաջադրանքով կազմակերպուած այս աննախընթաց նուագահանդէսը ոտքի հանեց Լոնտոնի քաղաքական, երաժշտական եւ ազնուական ընտրանին: Նուագահանդէսի առաջին շարքին վրայ տեղ գրաւած էին գահաժառանգ իշխանը՝ Եարլ, Տայանա իշխանուհին, արտաքին գործոց նախարար Սթր Ճոֆրի Հաու, Լոնտոնի մօտ Խ. Միտթեան զեսպան Լիոնիս Զամիթին եւ քաղաքական ու մշակութային այլ անձնաւորութիւններ:

Աշխարհի տարածքին՝ 25 միլիոն հանգրտաններ իրենց պատկերասփիւռներուն միջոցաւ ուղղակի հետեւեցան նուագահանդէսին, որ սփռուեցաւ Իրիտանիոյ, Իրլանտայի, Պելճիքայի, Հոլանտայի, Ալպանիոյ, Աւստրալիոյ եւ Ն.Միտթեան մէջ:

Նուագահանդէսն 6 ժամ առաջ, միայն տոմսերու վաճառքին արդէն իսկ պոյացած էր 250 հազար սթերլին (150 հազար ամերիկեան տոյար):

ՀԱՄԵՐԳ՝ ՓԱՐԻՉԻ ՌՓԵՐԱՅԻՆ ՄԷՋ

Լոնտոնի փառաշուք համերգներէն ետք եւ շարունակելով Հայաստանի ազդեակ-



Անուանի բաւրձրակահար Մարիալու Ռոսթրօփի:

ներուն ի նպաստ համերգներու իր շարքը, ախարահանոչակ թափու թակահարը ժամանեց Փարիզ և չայկական թիմով գիշերը՝ 5 Յունուար 1989ի Երեկոյեան, Փարիզի օփերայի շքեղ սրահին մէջ տուաւ նոյնքան բացատիկ համերգ մը, որ դիմաւորուեցաւ Ծրանտական ժամուրի և պատկերասփռուի ու ձայնասփռուի կայաններու արուեստի թղթակիցներուն, ինչպէս նաև փարիզեան երաժշտական շրջանակներու խանդավառ արտայայտութիւններով:

Երկու հազարի հասնող երաժշտասեր հաւաքակուսեան մը ներկայութեան, այդ դիշեր, իր թափու թակին կախարդական մեղեդիներով Ռոսթրոփովիչը «Հայաստանի վերջը» և «տառապանք, կեպիծ, երազ ու հասարք թարգմանող իր մեղեդիներով հայացուց պահն ու սրահը:

Պեննամբն Պրիթորի, Պախի, Հայտրի, Լուիսի Պոքերնի, Չայքովսկի և մեծ բնակողութեամբ ընտրուած այլ հանձարներու էմիլիոններն ու երաժշտական այլ յօրինումները այդ օր հնչեցին բոլորովին տարբեր երանգներով՝ դուրս հորդելով հզօր ու երջանիկ մեկնարանի մը հոգիին երգներանց ակերէն:

Փարիզի նուագախմբային համայնքին այդ երեկոյի ելոյթը զեկամարոզ խմբավարը՝ Ալէն Լամպար, իր հնազանդ ճիւղտով հետեւեցաւ Ռոսթրոփովիչի արտակարգ մեկնարանութեան, որուն յատուկ գոյն և երանց տուաւ ամենայն ներդաշնակութեամբ ձայնակցող նուագախմբային համայնքը:

Այս բացատիկ համերգին ներկայ գանուած Գրիգոր Համբարձումեան, «Զարթօնէ»ի 20 Յունուարի թիւին մէջ լոյս տեսած և «Տիտանին նուագը» խորագրեալ կարճ յօդուածով մը կը յայտնէր, թէ՛ «Երբ Տիտանը նուագէ, չես իսկ փնտտեր իրաւին դրոշմը: Զայն կը գտնես նոյն վայրկեանին: Անիկ ետք միայն, երբ աւարտած է նուագը, տարբեր մերձեցու մով մը կը փնտտես գիտնալու թեանց ակերքը: Ամենակարեւորը մնալով՝ յուզումի պահերէն: Այդ գիշերուան պատմական համերգէն բաժնը եցանք լուսեամբ:

«Պարտադրեալ լուսեամբ՝ իբր կրկնութիւն տրուած Պեննամբն Պրիթորիի հոյակապ մէկ տարբերակէն ետք:

«Պարտադրեալ լուսեամբ՝ յարգելու հայութեան արած աղէտի գոհերուն յիշատակը: Փարիզի օփերային շքեղ սրահը լաւագոյն ընտրութիւնն էր այսպիսի երաժշտական գիշերուան՝ ընդունելու համար մեծ քաղաքակախարք արժանավայել կերպով»:

Ապա, թուելէ ետք Ռոսթրոփովիչի այդ երեկոյին մեկնարանած կտորներուն քացատիկ կատարելութիւնը և «տարական ոճ»ին բարեմասնութիւնները, յօդուածագիրը կ'եզրակացնէ:

«Ռոսթրոփովիչը գիտակցօրէն կը հիսւէ սփանջիլագօր երազ մը: Երազ՝ որ ձերք կ'ըլլայ ու կը ծաւալի հետզհետէ, մինչեւ որ ուրիշ մը գայ անհետացնելու հինը՝ հոգեկան նոր խլրտուումերու անձնատուր:

«Ենչա՞ն փնտտել Ռոսթրոփովիչի մեծութիւնը երաժշտութեան նամբով: Մա՛րգն է նոյնքան հետաքրքրական: Թաւառապանի պատմութիւնը պիտի չմոռնայ զինք:

«Մենք՝ հայերս եւս, որ ներկայ էինք հոն այդ գիշեր»:

Հ Ա Ն Դ Ի Պ Ո Ւ Մ՝ Մ. Ն Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր Ո Ւ Մ Է Զ

Երկուշաբթի, 30 Յունուար 1989ին, Մաթիսյաւ Ռոսթրոփովիչ այցելեց Հայաստանեակց Եկեղեցոյ Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի առաջնորդարանը, ուր ընդունուեցաւ առաջնորդ Վաչէ Արք. Յովսէփեանի և գաղութի ղեկավար ու երաժշտասեր դէմքերուն կողմէ: Մեծ հիւրին կ'ընկերանար «Ճոն Քեննեթ» կատարողական Արուեստներու Կեդրոն»ի և Ազգ. Սիմֆոնիք նուագախումբի գործադիր տնօրէն Սթիվըն Քլայնը:

Հայ գաղութի և մամուլը ներկայացուցիչներուն ուղղելով իր խօսքը, Ռոսթրոփովիչը նախ շնորհակալութիւն յայտնեց իրեն ընծայուած այս զեկեցիկ աւիթին համար, ապա շեշտը դրաւ Հայաստանի երկրաշարժի աղէտեալներուն չուտափոյթ օգնութիւն հասցնելու անհրաժեշտ:

տու թեան վրայ: Այս առիթով, ան հույե-
կան խաղաղութեամբ թուեց Դեկտեմբե-
րին և Յու Նուարին Լուստոնի ու Փարիզի
մէջ ունեցած իր սիրայօժար ելոյթները և
յայտնեց, թէ յառաջիկայ օրերուն, Ռու-
շինկթըն ՏԻ. ՍԻ.Ի. ԵՖենեակի Սենթըրքի
մէջ և ա իր մասնակցութիւնը պիտի ընդ
Հայաստանի ազատեալներու օգնութեան
Փոստին Համար ծրագրուած Համերգին:

Այս, աշխարհահռչակ արուեստագէտը
յայտնեց իւր ժողովուրդին նկատմամբ
տածած իր մեծ հիացումը, թուեց իր բո-
րեկամական կապերը Արամ Խաչատուր-

եանի, Առնո Բարաջանեանի, Էդուարդ
Միրզոյեանի և այլ երգահաններու և
երաժիշտներու հետ և բնագծեց Համաշ-
խարհային երաժշտութեան իւր ժողո-
վուրդին բերած մեծ նպաստը:

Հարցումի մը պատասխանելով, Ռու-
թովոյիչ ճշգեց, թէ ինք ծագումով հայ չէ,
սակայն ինքզինք այնքան մօտ կը զգայ
Հայութեան և Հայաստանին, որ իր ան-
զըլիացի հիւրը՝ Պենճըմի Պրիթըն երբ Խ.
Միտթիւն այցելած է, զայն տարած է Դի-
լիան՝ իրրև. յատկոյն միջավայրը Խ.
Միտթեան երաժշտական աշխարհին:


ԵՒ ԱՅԼ ԼՈՒՐԵՐ

7

Տ
Ա
Ր
Ե
Կ
Ա
Ն

Գ
Թ
Ա
Ս
Ի
Ր
Տ

Ա
Ղ
Ջ
Ն
Ա
Կ
Ը



Դեկտեմբերին, Նոր Տարուան և Ս.
Մուսկի տօնին նախօրեակին, Միանիի
փողոցներէն մեկուն մէջ անցորդները
տեսած են եօթը տարեկան Համակրէի
աղջնակ մը՝ իր փոքրիկ Զութիկին և
պարզունակ ծանուցումին հետ:

Զութիկով մեղեգիներ նուազօր
աւստրալիացի այս աղջնակը՝ Մայրեղ
Զամիրզէն, իրեն կողքին դրած ցուցանա-
կին վրայ պատկերած է ժպտացող արեւ

մը և արձանագրած Հեռուկայ խօսքը.
«Լաւագոյն մազքանճներ Ս. Մուսկի և
Նոր Տարուան առիթով: Կը ինզրեմ
նուիրատուութիւններ կատարել Հա-
յաստանի երկրաշարժէն տուժածնե-
րուն օգտին: Աստուած փոխարէնը կը
հատուցէ»:

Բարեհրա փոքրիկին նախաձեռնու-
թիւնը խաղաղ չէ անցած: «Լքեթարիա Թա-
զու հիին անուը կրող զեղեցիկ չէնքի

ժամն պահակը հնարաբար է Մայրելզը ու իր հզորայրը՝ Մաշան: Մախոյում՝ անուր տեղ գրասենյակ էն թառն շոյ կայարանին ժամ, ուրիշ այս անգամ դիրքերը փոխան է... Վերջակիցը նույնպես էր, որ կիթառ նույնպես իր ազդու սարկոսպանով էր:

Մակայն բարեխիտ փոքրիկները չեն յուսանաում եւ այլ անկիւն ճշ տեղ գրասենյակ՝ յաջողած են հուսաբեկ շուրջ շորս հոգար ուսուցիչական աշխատ. գործառնեցան են Հայաստանի ազգանայնեցու Փոստին: Աւելին՝ անուր ստացան են աւելի քան 100 նամակ աշխարհի գանազան երկրներէն: Նամակագիրներուն մէջ հղած է... նաեւ Ֆիլիպինայի Կազանդ Պապուկը:

Մարզուտը այս երկու փոքրիկները նուէ յոպցան են այլ գաղափար մը: Անուր պատրաստած են ծիսածանի եօթը գոյնեքով օղակում մեր մուրաբիլը ներկայացնող դժանկար մը եւ զայն գրկած են ՄԱԿին, ինդրելով որ այս գծանկարին հիմամբ պատրաստուի գրույմաթուղթ մը եւ անոր եկամուտը ամբողջութեամբ յատկացուի Հայաստանի երկրաշարժէն սուժան ժամուկներուն:

ՆԱԽԱԳԱՀ ՊՈՒՇԻ ԶԱԽԱԿՆ ՈՒ ԹՈՒՆԻԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշի զուակը՝ Ճոն Պուշի եւ անոր 12 տարեկան զուակը՝ Ճորճ Պուշի, կիրակի, 25 Դեկտեմբերին, այցելեցին Հայաստանի ահա որ երկրաշարժի վերու որնէրուն եւ արցունքոտ աչքերով, Ս. Մնունդի առիթով, խաղաղիքներ բաժնեցին վերասոր ժամուկներուն:

Նախագահին զուակը, որ օժանդակութիւն հասցնող օղանաւով մը Հայաստան ժամանած էր, ըսաւ. «Ենյո ունիմ, որ մեր այցելութիւնը պիտի օգնէ ժողովուրդին՝ հասկնալու այն անհասարակ տառապանքը, որուն կ'ենթարկուի Հայ ժողովուրդը»:



Նախագահ Պուշի թոնքիկն ու զուակը՝ Վազգէ Ա. Ի հետ

Նախագահ Պուշի զուակն ու թոնքիկը կիրակի որ փոխադրակաւորով շրջեցան ազգասար շրջանները, անցան Սպիտակէն, ապա Մրիւան վերադառնալով՝ այցելեցին անգոյն ժամուկներու թիւ 3 չիւանդ անոցը, ուր երկրաշարժէն վերու որուն ամ նուազն 600 երեխաներ գարժանու մի կ'ենթարկուին: Հոս նախագահին զուակն ու թոնքիկը խաղաղիքներ, պուպրիկներ եւ շաքարեղէններ բաժնեցին երեխաներուն: Նախագահին զուակը ըսաւ, որ ասիկա Ս. Մնունդի մեծագոյն նուէրն է, որ ինքզինքիս եւ զուակիս կրնամ տայ:

«Ենթիկըրտ փրեսի թղթակիցը յիշած է, որ այս ահա որ ազգային ի տես հայութիւնը այս տարի ընջան է Ս. Մնունդի տօնակատարութիւնը:

Հայ բժիշկներ եւ հիւանդապահու հիւներ թարգմանիչներու միջոցաւ նախագահի զուակն եւ թոնքիկին տեղեկացուցին այն տարեբեքին ժամին, որուն ենթարկուած էին այս երեխաները: Այցելուներու այրիբը արցունքով լեցու եցան, երբ տկանջալուր եղան ժամուկներու շարչարանին:

12 տարեկան Փօշիկ Քայաւ տեան, Սպիտակի իր բնակարանի աւերակներուն տակ, 7 օր ու չափորոյս մ'անցած էր: 3 տարեկան Մոնա Գասպարեան փոյլ եկած

պատին տակ մնացած էր շորս օր: 5 տարեկան Գայեանի Պետրոսեան ժօր Հեափյատակներու ն տակ մնացած էր ամբողջ 9 օր և ուղ մնացած էր շորս: Իր հերոս ժօր, որ էր մատները ծակծակելով՝ արիւնք էրք սնունդ տուած էր Երեխային: Ծոն Պոչ Գայեանին ըսաւ. «Դուն հերոս աղջնակ էրն ես»:

Հիւանդանոցի վարիչ բժշկուհի Օֆելիա Նազարեան մեծապէս զնահատեց նախազանչի զուկին և թոսան այցելութիւնը:

Նոյն օրը, Ծոն և Շորն Պոչ էջմիածին տեցան, ուր կարճ հանդիպում մը ունեցան Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. ի հետ:

Երկուշաբթի օր նախազանչին զուակն ու թոսները վերադարձան Միացեալ Նահանգներ, ուր Նի Շորքի «Ծոն Քենետի» օղակայանին մէջ, պատասխանելով մամայն Երեւանացուցիչներու հարցումներուն, պոհու նակութիւն արտայայտեցին, որ իրենց առիթ արուած էր նման արտաբնութիւն մը կատարելու:

Հայ եկեղեցական պետերու հետ հանդիպումի մը ընթացքին, Ծոն Պոչ բժշկական թէ այլ անմիջական կազմածներու ցանկ մը պատրաստած է և մարդասիրական կազմակերպութեանց խողովակով պիտի փորձէ այդ կազմածները Հայաստան հասցնել:

ԺԱՆԺԱԳ ԿՈՒՏՄԱՆԻ ԺԵՍԹԸ

«Փարի մայ» շարաքարթի Շարաք, 24 Յունուար 1989ի Համարին մէջ, «Քեզի համար, Հայաստան» ժայնապնակի արձանագրման և Նկարահանման ժանրամասնութիւններն ու ապրումները ներկայացնելով՝ Շարք Ազնաուր կը պատմէ հետեւեալ զրուագրը.

«Կէսօրէն միմչեւ ժամը 20, ամէնէն անհամբերները, ամէնէն անկարգապահները, այսինքն՝ արուեստագետները, առանց զանգատելու սպասեցին միմչեւ ժայնագրութեան աւարտը: Սակայն ամէնէն աւելի գիւ յուզող ժամ-

ժազ կուսմանի բացակայութիւնն էր: Ան կը բացակայէր նախապէս Երզնած կայայի մը պատահաւով: Ծանապար, կալային ետայրք ամբողջութեամբ մեզի զրկեց»:

ԵՀՈՒՏԻ ՄԵՆՈՒՀԻՆ ԿԸ ՆՈՒԱԳԷ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ուրբաթ, 10 Մարտ 1989ին, ամերիկացի հանրամատնութիւն իւրաքանչիւր Եւրոպ Մեհուհի Մասկուտ ժամանեց՝ շատուկ արտաբնութեամբ մը կըքթ ունեւորուած: Մասկուտ ժամանելէն 26 ժամ ետք, Մարտիցային Միութեան կրտչաութեան հիմնադրի Համաձայնագրին նաւազանութիւն ընկերակցութեամբ՝ մարտադարձի զիտուար արաններէն մէկուն մէջ, Մեհուհի տուտ ու շարգուտ նաւորուտեղէն մը, որուն հասոյթը ամբողջութեամբ արտազրուեցուտ Հայաստանի կրկրաւարձի արգտակներուն:

«Մաքսիմալայա Պրուդա» արթերթիւն Համաձայն քարտերական նպատակով կազմակերպուած այս նաւազանուղէտ ընթացքին Մեհուհի մեկնարանած է Մոսքուի կրտչաութիւնը բնորոշող կարները: Նաւազանուղէտին ժամանկցած և իւրհրդային անուանի արուեստաղէտներ, ինչպէս նաև արուեստան զերմանացի զաշնակահար Եուսիւտ Յրանց:

«ՊՈՒՐՏԱ» ԸՆՏԱՆԻՔԻ ԻՇԵՆԱՆԱԿԱՆ ՆՈՒԷՐԸ ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՐԳ

Աշխարհահռչակ և տարածուն «Պուրտա մոտըն» ամսաքարթի հրատարակիչ էննէ Պուրտա և իր զորմակիցները մէկ միլիոն զերմանական մարք նուիրած են Հայաստանի ահաւոր կրկրաւարձի արգտակներու Փոնաին: 1987էն ի վեր,

այս նշանաւ որ ամսաթերթը նաև յոյս կը տեսնէ ուսերկնոյ, հասնելու համար Խ. Միտիկան ժողովուրդներուն:

Խորհրդային կառավարութեան «Եզր-վեստիա» պաշտօնաթերթի գլխաւոր խմբագիր Է. Համայնավար կուսակցութեան կենտկոմի անդամ Իվան Լախիճոյի յոյս ան նամակով մը էննէ Պուրտա տեղեկացուցած է, որ իրենք խորապէս ցնցուած են Հայաստանի մէջ պատահած ահաւոր երկրաշարժով և թէ՛ «Պուրտա»-ի բնականօրէն կողմէ կատարուած մէկ միջին մարտի նուիրատուութիւնը համեստ զուժար մըն է՝ բաղդատած երկրաշարժին պատճառով նիւթական ու մարդկային ահաւոր փաստներուն և չի կրնար փոխարինել մարդկային մէծ կորուստը:

ԲԱՅԱՌԻԿ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ՝ «SPECIAL ARMENIE»

Փարիզի մէջ յոյս տեսնող աշխարհա-նշահ «Նուվել Օպերվաթոր» շաբաթաթերթին նիւթական ու բարոյական օժանդակութեամբ, 1989 Յունուարին յոյս տեսաւ 196 մեծագիր էջերէ բաղկացած պատկերազարդ ու իր ճոխ բովանդակութեամբ բնորոշուող բացառիկ հրատարակութիւն մը՝ «Special Arménie»:

180 հազար տպաքանակով հրատարակուած այս բացառիկին խմբագրութեան համար օգտագործուած են 200 վաւերաթուղթեր, քարտէսներ, զուժաւոր անտիպ լուսանկարներ և յարակից նիւթեր, որոնք կը վերաբերին Հայաստանի կենցաղին, կրթական կեանքին, Հայոց պատմութեան, Ղարաբաղեան նորագոյն շարժումին, Երկրաշարժին, Մեծ Եղեռնին, և այլն:

Վերոնշեալ ենթարձանու մներու նուազ, զանազան յօդուածներ ստորագրած են Ժան-Քլոտ Խաչիկեան, Արթի Քուճեան, Ժան-Քլոտ Քեպպաճեան, Փիլև Տէր Սարգիսեան, Ժան-Փիլև Անֆէրեան և հայ ու ֆրանսացի այլ մտաւորականներ ու լրագրողներ:

«Թերթ մը՝ դպրոց մը» խորագրեալ խմբագրականով, Ժան-Քլոտ Քեպպաճեան



Էան կը յայտնէ, որ վերոյիշեալ բացառիկ հրատարակութեան գործնապէս մասնակցած մտաւորականներն ու լրագրողները այս թիւը կը մատուցեն այն բոլոր ժողովուրդներուն, չորոմն առանց խորապէս ճանչնալու Հայաստանն ու հայութիւնը՝ անվարան օժանդակութեան ձեռք երկարեցին և ցուցաբերեցին այնպիսի՝ ազնիւ կեցուածք մը, որ ազէտեայնեք կարծես իրենց հարագատները ըլլային»:

Ապա, յաջորդ էջին վրայ, կը կարդանք «Նուվել Օպերվաթոր»-ի բնականօրէն կողմէ Հօրան Ժոֆրէնի ստորագրած տկարիչ, որ, ի միջի այլոց, կը կատարէ Նեւեւեայ հաստատում մը:

«Ժամանակին, «Նուվել Օպերվաթոր»-ը հայկական շարժումներուն նեցուկ կը կանգնէր իր սովորական միջոցներով.— բաւերով: Այս պահուն, սակայն, երբ կը վերակառուցուի կենդանակար, Տեգի անհրաժեշտ քուեցաւ քիչ մը աւելի հեռուն երթալ: Այս իսկ պատճառով, մեր քերթը քերաւ իր նիւթական նպաստը՝ իրականացնելու համար «Special Arménie» բացառիկը»:

Նշենք, որ «Բազիմ»-ի մեր այս թիւի էջերուն յոյս տեսած կարգ մը լուսանկարներ ատած ենք վերոյիշեալ բացառիկին:

ՄԵՆՔ ՄԵՐՆ ԵՆՔ ԼԻՆԵԼՈՒ

Նոր տարի է գտնիս: Այսու է եմ
չնոր՝ առաջնորդի խոսքեր գտնել իմ
տուն՝ ու տակի առաջներքի եւ
կրտսերներքի նամար, իմ ազգի բո-
լոր մեծերի եւ փոքրերի նամար...

Այսու է եմ յետ նայել, յետ գնալ,
փերայրել անցածը, մէկ տարուայ
մնացածը: Այսու է եմ չնոր՝ առա-
ջնորդի խոսքեր գտնել իմ ժողովրդի փերայր-
ւորների խոսք ու խելոք բնագր-
դումների նամար, գարու ուր բո-
ւորվում է վախից ձերբազատ-
ւելու նրա աստեղային ժամի նա-
մար, ազգային զարթոնքի, միա-
նամուտ կամքի, միանում է նաև ու
միասնում է նաև նրա աստեղային
ժամի նամար, իր ինքնամանա-
յան գիտակցութիւնը զարթ նա-
կատիւն արձանագրելու նամար, իր
երգաչին փառասէր եւ երգանու էր
ոչ ու նամար, կորցրածը յետ բերե-
լու իր առաջին յանդուգն փորձի
նամար:

Այսու է եմ, բայց... բառերն ար-
տասուք են գտնում, մտքերը՝
մշուշ, զգացումները բոց ու
կրակ են գտնում եւ ինձ սարում
են: Ես մի բուռ մոխիր եմ գտն-
ում, յետոյ մոխրից յատուտ է եմ
եւ ինձ գտնում եմ դարձնել նայն
զմտիքի մէջ...

Նորից սրբի նայրենիք, նորից
ոգրի նայրենիք: Քանզու թարափ
բազաքներ, ծուխը կարուած գիւ-
լեր, պատանք գարձած բարու բ-
ներ, դազազ գարձած սրբոցներ,
զերեզման գարձած աներ, որբեր,
որբուայրիներ, անօթեան այ-
րեր...

Եւ Նոր տարի է կէկ: Ես ու ան-
տարի կգեւելն իրար ենք նայում

եւ իրարից անայում ենք: Նա իր
երեսը ծածկու է ի մի նով, ես իմը՝
ձեռքով... Նոր տարի է կէկ...

Այսու՛ն մեռել, այսու՛ն գաւիւր,
Որի՛ն ոգրամ, ո՛րը ոգրամ:
Ա՛յի, մեր բախտի սեւ ինկուտներ,
Քն հոքիբարդ սրբ ոգրամ:
Երբ աշխարհն է մեզ հետ ոգրամ,
Շատ յէ, երբ միմեյն անգամ
Ես այս Ամանորը ոգրամ:

Գաման էր այս Ամանորի նա-
խօրէն: Քոյ ինքը բարի յիմի, նա-
մանքու ամուսնին, կամք ու կո-
րով տայ մեր ժողովրդին՝ իր վեր-
ջերն ապաքինելու նամար: Մեր
ժողովուրդը սիրոյ ժողովուրդ է:
Նա աւելի մեծ ազգաների միջով է
անցել, իր նոյր սրայ ծիյ տուել
իներ իր միջից, անէլ, գորացել է՝
լուսեան միմեյն խորքերում թա-
քուն պարտաւելով իր ինքնու-
թիւնը, իր գոյնը, իր նամն ու՛ն-
ար:

Մենք տոկայու եւ սպրկու ենք,
բանի աշխարհը կայ, քանի աշ-
խարհում ճարգ կութիւն կայ եւ
մարդկութեան մէջ՝ մարդկայնու-
թիւնը: Իսկ մարդկայնութիւնը
մեզ կարեկից եւ պակեցեց նպա մեր
ամենամանր վշտ պահին:

Այ իր խղճի ստրուկն է, ճա իր
գլխի տըն է գտնայու, ինչ էլ
պատահի...

Մենք մերն ենք յիմելու,
Մենք տերն ենք յիմելու...

Այս նաւատոյ էլ սուք զնենք
Նոր տարուայ սեմին եւ բոլոր
սրտով բոլորին ճաղթենք՝ չնոր-
նա ո՛ր Նոր տարի:

ՀԱՄՈ ՍԱՀԵԱՆ

ԼԻՔԱՆԱՆ

Հատավաճառ 500 Լ. Ռ.
Տարեկան բաժնեգին 2500 Լ. Ռ.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 40 Ս. Ռ.

ԱՐՏԱՍԱՀՈՐԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِينُ

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قزاقچيان

•

PAKINE

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISIQUE

Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
ԳՕՂՈՍ ՍՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու
Ս. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ